ժորի) կազմավորումը, որը ցույց տվեց, որ փողային գործիքներ նվագող երաժիշտները պետք է լինեն բարձր կրթություն ունեցող մասնագետներ: 1927թ-ին այս նվագախմբին շնորհվել է «Վաստակավոր կոլեկտիվ» կոչումը: 1920-1930-ական թվականները ըստ ժամանակի գաղափարախոսության, հայտնի են Ռուսաստանում որպես սոցիալիստական վերակառուցման տարիներ: Առաջ է քաշվել «Արվեստը ժողովրդին» կարգախոսը: Մոսկվայում, Լենինգրադում և այլ քաղաքներում կազմակերպվել են նոր նվագախմբեր: 1928թ-ին կազմավորվել է Մոսկվայի ֆիլհարմոնիայի պետական սիմֆոնիկ նվագախումբը, 1930թ-ին՝ Համամիութենական ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը, իսկ 1936թ-ին՝ Պետական սիմֆոնիկ նվագախումբը:

Այս ժամանակաշրջանում գրվել են փողային գործիքների համար մի շարք ձեռնարկներ: Առաջին մեծ աշխատությունը, որն ընդգրկում էր դասավանդման հետ կապված հմտության հարցեր՝ Ս.Վ.Ռոզանովի «Փողային գործիքների կատարողական և դասավանդման մեթոդիկայի հիմունքները» աշխատությունն է, տպագրված 1935-ին: Այդ թվականին տպագրվել են նաև տարբեր փողային գործիքների համար առաջին ձեռնարկները: Օրինակ Վ.Ն.Ցիբինի (ֆլեյտա), Նազարովի, Ն.Ն.Սոլոդուևի (հոբոյ), Ս.Վ.Ռոզանովի (կլառնետ), Գ.Ա.Օրվիդի (շեփոր), Վ.Մ.Բլաժևիչի (տրոմբոն) բազմաթիվ փոխադրումներ փողային գործիքների համար: Հատկապես մեծ աշխատանք է կատարել Ա.Ֆ.Գեդիկեն (1877-1957թ.). նրա «Գրադարան փողային գործիքների համար» աշխատությունը ծանոթացնում է առաջատար երաժիշտների կատարած դասական երաժշտության նմուշների լավագույն փոխադրումներին:

Սերգեյ Ռոզանովը (1870-1937թ.) Մոսկվայի կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի առաջին դեկանն է՝ կլառնետի ձեռնարկի առաջին հեղինակը (4. էջ 92,173):

Վ.Ն.Ցիբինը (1877-1949թ.), Ռուսաստանի արվեստի վաստակավոր գործիչ, եղել է վիրտուոզ ֆլեյտահար, կոմպոզիտոր, դիրիժոր (Մարիինյան թատրոնում) և մանկավարժ: Փողային գործիքների համար գրել է ֆլեյտայի 3 կոնցերտ, կլառնետի, հոբոյի կոնցերտ-

ներ, ֆլեյտայի 10 Կոնցերտային էտյուդ (4. էջ 117,184):

Միխայիլ Ինոկենտիի Տաբակովը (1877-1956թ.) եղել է հայտնի շեփորահար և մանկավարժ, շեփորի ձեռնարկի հեղինակ, Ռուսաստանի արվեստի վաստակավոր գործիչ: (4. էջ104)

Ֆերդինանդ Էկկերտը՝ (1865-1941թ.) եղել է գալարափողահար, կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ: Գրել է 3 օպերա, 2 բալետ, 8 օպերետ, 200 վոկալ և գործիքային ստեղծագործություն, 2 օկտետ իսկ ժամանակին հայտնի էր նրա գալարափողի 3 Կոնցերտը (4. էջ127,187):

Իվան Կոստլանը՝ (1877-1963թ.) ֆագոտահար, կոմպոզիտոր, դասախոս: Ֆագոտի ռուսական դպրոցի հիմնադիր, 4 կոնցերտային էտյուդի հեղինակ: (4. էջ 54-56)

Վլադիսլաբ Միխայելի Բլաժևիչը (1881-1942թ.) տրոմբոնահար, կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ: Գրել է տրոմբոնի 13 կոնցերտ, տրոմբոնի Դուետ, պղնձյա փողային տարբեր գործիքների և բազմաթիվ ստեղծագործություններ փողային նվագախմբի համար: Նա տրոմբոնի ռուսական ձեռնարկի և ՍՍՀՄ Պետական փողային նվագախմբի հիմնադիրն է: Բացի տրոմբոնի ձեռնարկից ունի նաև «Տուբայի ձեռնարկ», նաև՝ Մոսկվայի կոնսերվատորիայում զինվորական-դիրիժորների դասարանի հիմնադիրն է, որը ղեկավարել է 7 տարի (4. էջ 16,137):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Асафьев Б., Русская музыка., Л.:Музыка., 1968.
2. Советская энциклопедия., Т. 1, М.:БСЭ., 1973.
3. Бэлза И.Ф., Александр Николаевич Скрябин., М.:Музыка., 1983.
4. Болотин С., Биографический словарь музыкантов-исполнителей на духовых инструментах., Л.:Музыка., 1969.

Резюме

В статье фаготиста, преподавателя ЕГК им.Комитаса Г.Ш.Григоряна рассматривается роль и значение духовых инструментов в произведениях русских композиторов (М.Глинки, А.Алябьева, Н.Римского-Корсакова, А.Рубинштейна, М.Танеева, А.Аренского, А.Скрябина, А.Глазунова).

Автор статьи также перечисляет известных русских исполнителей, композиторов, авторов первых учебно-методических пособий для духовых инструментов.

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱՉ ՇՄԱՎՈՆԻ
ֆագոտահար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս

ՓՈՂԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Մինչև 17-րդ դարը փողային գործիքների կատարողական արվեստը Ռուսաստանում զարգանում էր երկու ուղղությամբ՝

1. Սկոմորոխները (թափառական դերասաններ), որոնք, նվագում էին մեծ մասամբ ժողովրդական փողային գործիքներ:

2. Զինվորական (մարտական) կամ պալատական երաժշտության միջոցով:

17-րդ դարը բնութագրվում է Կայսերական պալատում փողային գործիք նվագող մասնագետ երաժիշտների ի հայտ գալով: Նրանք օտարերկրացի երաժիշտներ էին, մեծ մասամբ՝գերմանացի և չեխ:

Ռուսաստանում փողային գործիքների կատարողական արվեստի հետագա զարգացման գործում մեծ դեր խաղացին Պետրոս Առաջինի «Մշակութային» բարեփոխումները, զինվորական նվագախմբերի ծառայության և մասնագետ երաժիշտներ դաստիարակելու առնչությամբ:

1711թ-ը Ռուսաստանում համարվում է զինվորական նվագախմբերի ստեղծման սկիզբը: Առաջին նվագախմբերի կազմը բաղկացած էր հոբոյահարներից, շեփորահարներից, թմբկահարներից և հարվածային այլ գործիքներից (1. էջ 11):

17-րդ դարի երկրորդ կեսին ստեղծվեցին ճորտերից կազմված նվագախմբեր. համերգները տեղի էին ունենում միայն կալվածատերերի մենատներում: 1731թ-ին կազմվեց առաջին պաշտոնական նվագախումբը պալատում՝ Աննա Իոանովնայի թագավորության օրոք (1. էջ 13): Եկատերինա Երկրորդ կայսրուհու տիրապետության ժամանակ պալատում գործում էր երկու տե-

սակի նվագախումբ՝ կամերային և պարահանդեսային: 18-րդ դարի երկրորդ կեսին ստեղծվում և զարգանում են նոր նվագախմբեր, որոնց մեծ մասը կազմում էին փողային գործիքները: Այս նվագախմբերն իրենց կազմով բաժանվում էին երեք խմբի՝

1. Փողային երաժշտության կապելլա, բաղկացած 8 երաժշտից (2 ֆլեյտա, 2 կլառնետ, 2 ֆագոտ և 2 գալարափող):

2. Խառը կապելլա, բաղկացած 6 երաժշտից (2 ջութակ, 2 ֆլեյտա և 2 գալարափող):

3. Խառը ընդարձակ կապելլա, բաղկացած 8-10 երաժշտից (2 ջութակ, թավջութակ, 2 ֆլեյտա,2 կլառնետ, 2 գալարափող և բասսեթիոռն):

Այս նվագախմբերի ծրագրերը հետաքրքրական էին նրանով, որ դասական ստեղծագործություններից բացի կատարել են նաև ռուսական ժողովրդական երգերի փոխադրումներ և մշակումներ:

1756թ., Ս.Պետերբուրգում, բացվեց առաջին ռուսական օպերային թատրոնը: Նվագախմբի բոլոր առաջին նվագաբաժինները հանձնարարվել են այլազգի երաժիշտների, իսկ տեղացի երաժիշտներին՝ երկրորդ նվագաբաժինները, քանի որ դիրիժորներն էլ էին այլազգի: Հարկ է նշել, որ հրավիրված տաղանդավոր և հմուտ երաժիշտները դրական մեծ դեր են կատարել ռուսական փողային գործիքների կատարողական արվեստի զարգացման և կադրերի դաստիարակության գործում: Նրանք դասավանդելու համար պահանջում էին մեծ գումար, և այդ իսկ պատճառով փողային գործիքներ նվագող երաժիշտներ պատրաստելու հնարավորությունը Ռուսաստանում եղել է շատ դժվար, քանի որ նրանք եկել էին կամ զինվորական, կամ ճորտերից կազմված նվագախմբերից (դա լավագույն դեպքում), կամ էլ որբանոցներից և ուղղիչ տներից, (այսինքն անապահով խավից) (1. էջ 13-14):

18-րդ դարի վերջում և 19-րդ դարասկզբում Ռուսաստանում աշխուժացել է համերգային կյանքը: Դաշնակահարներ ու լարայիններ մենակատարների հետ հանդես էին գալիս նաև մենակա-

տար փողային գործիքներ նվագողներ: Սկզբնական շրջանում նրանք այլազգիներ էին, ֆլեյտահարներ՝ Հարթմանը, Կաթալիդը, հոբոյահար՝ Ֆիալանը, կլառնետահար՝ Բերը, ֆագոտահար՝ Բյոզան և ուրիշներ:

19-րդ դարի կեսերին, բեմահարթակներում հանդես են եկել նաև ռուս մենակատար փողայիններ: Նրանցից ամենափայլուններն էին՝ ֆլեյտահար Ա.Ա.Ջուսմանը, հոբոյահար՝ Սամարինը, կլառնետահար՝ Տիտովը, ֆագոտահար՝ Կոստինը: Այս ժամանակաշրջանին են վերագրվում ռուսական առաջին տպագիր նոտաները և փողային գործիքների առաջին ձեռնարկները (1. էջ 20-23):

Փողային գործիքների կատարողական արվեստի բուռն զարգացումը հարկադրում է գործիքաշեն-երաժիշտներին է՛լ ավելի կատարելագործելու գործիքների կառուցվածքը: Այսպես, պալատական գալարափողահար՝ Կյուբեն առաջին անգամ գալարափողին փականային համակարգ է հարմարեցրել:

Պղնձյա-փողային գործիքների զարգացման գործում մեծ դեր խաղաց գալարափողահար, թավջութակահար և կոմպոզիտոր՝ Յան (Յոհան) Մարեշը (1719-1794) (2. էջ 493): Նա ստեղծում է փող, որն ուներ միայն մեկ որոշակի հնչյուն: Տարբեր հնչյուններ ստանալը պայմանավորված էր փողի երկարությունից: Նա էլ կազմել է նվագախումբ, որում ընդգրկված փողերի երկարությունը սկսում է 9 սանտիմետրից մինչև 2.5 մետր: Նվագախմբի դիապազոնը եղել է կոնտր օկտավայի լա-ից մինչև 2-րդ օկտավայի ռե: Այս երևույթը դարձավ ինքնատիպ՝ ռուսական ազգային երաժշտական մշակույթում: Նվագախումբը կազմվել է 1774թ-ին: Մարեշը այս նվագախմբի համար գրել է նաև ստեղծագործություններ, որոնք ընդհանուր անունով անվանվել է «Փողային երաժշտություն»: Մարեշի նվագախումբը ելույթներ է ունեցել ոչ միայն հյուրասրահներում, այլև հյուրախաղերով հանդես է եկել արտասահմանում և վաստակել միջազգային համբավ: Նվագախումբը դադարել է գոյություն ունենալուց 1840թ-ին, երբ սկսվել է կափյուրային համակարգով փողային գործիքների լայն օգ-

տագործումը (2. էջ 22-24):

18-րդ դարի երկրորդ կեսին, փողային գործիքները, հատկապես ֆլեյտան, կլառնետը, ֆագոտը և գալարափողը լայնորեն օգտագործվել են ռուս կոմպոզիտորներ՝ Ն.Պ.Ֆոմինի, Դ.Ս.Բորտնյանսկու, Վ.Ս.Դաշկևիչի և Ա.Ֆ.Կոզլովսկու նվագախմբային պարտիտուրաներում: Ռուս կոմպոզիտորների շրջանում լայն տարածում գտավ կլառնետը, որն այդ ժամանակաշրջանում Վիեննական դասական նվագախմբերում հազվադեպ էր օգտագործվում:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Усов Ю.А., История отечественного исполнительства на духовых инструментах. М.:Музыка., 1975.
2. Советская энциклопедия., Т. 3., М.:БСЭ., 1976.

Резюме

Статья фаготиста, преподавателя ЕГК им.Комитаса Г.Ш.Григоряна - исторический обзор развития искусства игры на духовых инструментах в России, начиная с искусства скоморохов и деятельности военных или придворных оркестров. Более подробно автор останавливается на деятельности оркестров XVII-XVIII веков и исполнителей XIX века (Г.Зусман, А.Титов, Я.А.Мареш и другие).

Summary

YSC pedagogue, bassoonist Hrach Shmavon Grigoryan introduces another article "Performing art and historical sources of the brass in Russia". With this article the author raises the tasks and questions playing an important role in the propaganda of the brass both in Russia and in Armenia. The author distinguishes the following stages of the brass development in Russia: a) skomorokh-wandering actors b) soldier and palace orchestra. They appeared in the 17th century.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

КАФЕДРА КОМПОЗИЦИИ

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՄԱՆՈՒԿԻ
կոմպոզիտոր, գալարափողահար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ

ԳԱԳԻԿ ՀՈՎՈՒՆՑԻ ԳԱԼԱՐԱՓՈՂԻ ԵՎ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԻՆՎԵՆՑԻՈՆ ԵՐԵՔ ՊԻԵՍ

Գ.Հովունցի գալարափողի երեք ինվենցիոն պիեսների հիմքում ընկած է յուրատեսակ լադը, որը սիմետրիկ կառուցվածք ունի: Այդ լադի կառուցվածքն է 1 և 1/2 տոն, 1/2 տոն, 1 և 1/2 տոն, 1/2 տոն, 1 և 1/2 տոն: Այսպիսի կառուցվածք ունեցող լադը կարող է կառուցվել հնչյունաշարի չորս տարբեր հնչյուններից, այսինքն կարող է ունենալ չորս տոնայնություն, որոնց այսուհետև կանվանենք ***Ա*** տոնայնություն, ***Բ*** տոնայնություն, ***Գ*** Տոնայնություն և ***Դ*** տոնայնություն:

Եթե կառուցենք խրոմատիկ հնչյունաշարի հինգերորդ աստիճանից, ապա կտեսնենք, որ կկրկնվի այս չորս տոնայնություններից («***Ա*** » տոնայնությունը և այլն) որևէ մեկը:

Ա Բ Գ Դ



Տոնայնություն հասկացողությունը բնորոշվում է լադի գլխավոր աստիճանի, այսինքն՝ տոնիկայի գոյությամբ:

Սիմետրիկ լադն ունի չորս տարբեր տոնայնություն՝ ***Ա, Բ, Գ, Դ***: Այս տոնայնություններից յուրաքանչյուրը առանձին իր մեջ ունի միկրոտոնիկաներ, այսինքն՝ տոնայնությունը չունի մեկ գլխավոր աստիճան (1.), այլ կա մի քանի տոնիկա փոքր-միկրոմասերի կամ ֆրազների համար:

Գ.Հովունցի գալարափողի երեք ինվենցիոն պիեսների ***Ա*** տոնայնության տոնիկական հնչյուններն են՝ *“F”, “Cis”, “A”,*

Բ-համակարգ *“E”, “C”, “Gis”*

Գ-համակարգ *“Es”, “H”, “G”*

Դ-համակարգ *“D”, “B”, “Fis”*

Այս բոլոր հնչյունները հանդիսանում են ինքնուրույն տոնիկաներ, երբ տոնիկան արտահայտված է ընդամենը մեկ հնչյունով:

Չորս տոնայնության համակարգերի տոնիկական հնչյունները ընդգրկում են խրոմատիկ գամմայի բոլոր տասներկու տոները:

Այս չորս տոնայնությունն էլ իրար նկատմամբ կոնգրուենտ են*, այսինքն արտապատկերում են միմյանց: Եթե մենք այդ չորս սիմետրիկ կառուցվածքներից որևէ մեկը ընդունենք որպես կենտրոնական, ապա մյուսները սրա նկատմամբ կլինեն կոնգրուենտ: Միևնույն ժամանակ, եթե այդ համակարգը տեղաշարժվի մի որևէ նոր բարձրության տոնայնություն, ապա նա նախորդ համակարգի նկատմամբ դարձյալ կլինի կոնգրուենտ (տոնայնությունները կոնգրուենտ կարող են լինել միայն այն դեպքում, երբ նրանց աստիճանների միջև եղած տոների թիվը իրար հավասար են):

Ցիկլում առաջին պիեսը կոչվում է «Սիմետրիկ լադ». այս անվանումը մատնացույց է անում պիեսի կառուցվածքը, որի հիմքը հանդիսանում է տվյալ սիմետրիկ լադը:

Առաջին պիեսում այս չորս տոնայնությունից յուրաքանչյուրը հանդես գալով ուրույն ձևով, պիեսի կառուցվածքի և ձևի մեջ ստանում են իրենց որոշակի խնդիրները: Այս պիեսը բաղկացած է զարգացման չորս փուլից, դրանք են. նյութի ցուցադրման փուլը, նյութի մշակման փուլը, զարգացման գագաթնակետը և եզրափակումը: Ամեն փուլ ունի իր բնորոշ տոնայնությունը, տվյալ փուլին հատկանշական ինտերվալային շարժումը և նրան հատուկ զարգացման սկզբունքը:

Առաջին փուլը գրված է ***Ա*** տոնայնությունում. նրա բնորոշ ինտերվալներն են (հատկապես դաշնամուրի նվագաբաժնում) մա-

* Եթե Ա պատկերը հնարավոր է արտապատկերել Ա1, պատկերի վրա այնպես, որ Ա պատկերի ցանկացած երկու կետերի միջև եղած հեռավորությունը հավասար է Ա1 պատկերի համապատասխան կետերի միջև եղած հեռավորությանը, ապա ասում ենք, որ Ա պատկերը կոնգրուենտ է Ա1 պատկերին:

քուր կվինտան և փոքր սեկունդան: Այս ցուցադրման փուլին հատկանշական է գալարափողի և դաշնամուրի խիստ հակադիր շարժումը՝ գալարափողի վարընթաց շարժմանը հակադրվում է դաշնամուրի վերընթաց շարժումը (այդ հակադիր շարժումները կենտրոնի նկատմամբ կազմում են սիմետրիա):

«Սիմետրիկ լադ»-ի ցուցադրման փուլը բաղկացած է երեք միկրոտոնիկայից: Հաշվի առնելով գալարափողի բնական հնչողությունը կոմպոզիտորը *"F"* հնչյունը (այսինքն գալարափողի ամենաբնական հնչյունը) օգտագործում է որպես առաջին ֆրազի միկրոտոնիկա, որի համար էլ առաջին տոնայնությունը, որով սկսվում է պիեսը հանդիսանում է ***Ա***-ն:

Առաջին հայացքից պարզվում է, որ գալարափողի նվագաբաժնին հատուկ է (լադի ցուցադրման հաջորդականությունը. հնչյունները միմյանց հաջորդում են հերթականությամբ՝ առանց որևէ հնչյուն բաց թողնելու): Քանի որ գալարափողի նվագաբաժնին սկզբնական շրջանում հատուկ է վարընթաց շարժումը, ուրեմն բնական է, որ երկրորդ ֆրազի միկրոտոնիկան կլինի *"Cis"* հնչյունը, իսկ երրորդինը՝ *"A"* հնչյունը:

Երաժշտության զարգացման ընթացքում ակնհայտ են դառնում միկրոտոնիկաների առաջացումը ըստ հերթականության, որը շեշտում է լադի սիմետրիկությունը: Սրանց էլ հետևում է տոնայնությունների հերթականությունը ***Ա, Բ, Գ, Դ:***



Եթե պիեսի սկզբում գալարափողին հատուկ է վարընթաց շարժումը, ապա ցուցադրման փուլի վերջում այն դառնում է վերընթաց:

Այս երկու հակադիր շարժման երաժշտական կերպարներն ամեն կերպ հակադրվում են միմյանց: Եթե վարընթաց շարժման ժամանակ գերակշռում է հանդիսավոր վեհությունը և կոչական բնույթը, ապա վերընթաց շարժման ժամանակ՝ նուրբ հուզականությամբ լի երգային շարադրանքը, առաջին դինամիկ ուժգնությանը հակադրվելով մեղմությամբ:

Երկրորդ՝ մշակման փուլը ընթանում է **Բ** տոնայնությունում: Գալարափողի երաժշտությանը հատուկ է ռիթմիկ ակտիվությունը և դինամիկ աճը: Այս փուլի հատկանշական ինտերվալն է մեծ սեպտիման: Մշակման փուլը կառուցված է ցուցադրման փուլի առաջին ֆրազի նյութից, որի էներգետիկ և սուր սկզբնական «ցնցումը» իմպուլս հանդիսանալով սկիզբ է առնում անընդհատ շարժմանը, որտեղ հնչյունների խիտ շղթան սլանում է դեպի զարգացման գագաթնակետը:



Այս ռիթմիկ զարգացմանը զուգընթաց անընդհատ աճում է դինամիկան: Նրա աճի զարգացման վերընթաց շարժման հետ, փոխվում է նաև գալարափողի ռեգիստրը, որի արծաթահունչ հնչողությունը մի նոր երանգ է տալիս դաշնամուրի և գալարափողի տեմբրային հարաբերությանը:

Նյութի զարգացման գագաթնակետը՝ երրորդ փուլը, գրված է **Գ** տոնայնության մեջ: Ինտերվալային շարժումը մեծ տերցիան է և փոքր սեկունդան: Դինամիկ լարվածությամբ, ռեգիստրի բարձրությամբ և խիտ ֆակտուրայի այս փուլի սկիզբը հանդիսանում է պիեսի կուլմինացիան:

Եթե «Սիմետրիկ լադի» շարադրման փուլում գալարափողի հն-

չողության մեջ բնորոշ էր վարընթաց շարժումը, ապա հաջորդ փուլում անընդհատ բարձրանալով, 3-րդ փուլում հասնում է գալարափողի ձայնասահմանի ամենաբարձր հնչյուններին: Գործիքի այսպիսի լայն դիապազոնի օգտագործումը հնարավորություն է տալիս ստեղծագործության տարբեր փուլերում ցուցադրել գործիքի տեմբրային բազմազանությունը, որով հարուստ է գալարափողը:



Կուլմինացիային հաջորդում է նյութի բացահայտման պոլիֆոնիկ-իմիտացիոն շարադրման ձևը, որտեղ գալարափողի և դաշնամուրի երկխոսությունը շարադրված է հայելաձև իմիտացիայի ձևով և ունի վարընթաց շարժում: Այս երկխոսությունը գնալով մարում, դառնում է արձագանք և հասնում իր հենակետին՝ մեծ օկտավայի *"A"* տոնիկական հնչյունին, որից հետո մեկ անգամ ևս վերընթաց շարժումով ցուցադրվում է լադը հենակետերով՝ միկրոտոնիկաներով:



Եզրափակիչ 4-րդ փուլը գրված է ***«Դ»*** տոնայնությունում, որի ինտերվալային շարժումը փոքր սեքստան է: Տվյալ եզրափակիչ փուլում լադի բոլոր հնչյունները ցուցադրվում են տարբեր ռեգիստրներում և ձգվում են մինչև վերջ: Այդ փուլի անշարժ «մթնոլորտը» նախապատրաստում է անցումը դեպի երկրորդ պիեսը: Այդ անցումը նախապատրաստում է փոքր սեքստա ինտերվալը, որը երկրորդ պիեսի մինոր կվարտսեքստակկորդի հիմքի և գագաթի ինտերվալն է կազմում:

Գ.Հովունցը հաշվի առնելով գալարափողի տեխնիկական հնարավորությունները, ռեգիստրների գունային հարաբերությունները «Սիմետրիկ լադ» պիեսի գեղարվեստական նկատառումներից ելնելով, օգտագործում է գալարափողի հնչողության ամենատարբեր արտահայտչամիջոցները, որոնցից են՝ տեմբրային նրբությունն ու հարստությունը, կոչական բնույթը, հանդիսավոր վեհությունը:



Ցիկլի երկրորդ պիեսն անմիջապես, առանց դադարի հաջորդում է առաջինին և կոչվում է «Լադի եռահնչյուններ»: Այս անվանումը ելնում է պիեսի կառուցվածքից, որի հիմքը հանդիսանում են **Գ**-տոնայնության մինոր և մեծացրած եռահնչյունները: Մինոր եռահնչյուններից ամեն մեկի հիմքում ընկած է **Գ**-տոնայնության միկրոտոնիկական հնչյունից որևէ մեկը, իսկ մեծացրած եռահնչյունը կառուցված է միայն միկրոտոնիկաներից:



Մինոր եռահնչյունները մեծ մասամբ հանդես են գալիս կվարտսեքստակկորդով, որը ստեղծում է որոշակի տրամադրություն և

դառնում պիեսի բնորոշ կողմերից մեկը: Մինոր կվարտսեքստակկորդները պիեսի մեջ ունեն միշտ վարընթաց շարժում (օրինակ 1), իսկ մեծացրած եռահնչյունները վերընթաց, որը հանդես է գալիս մեծ մասամբ սեքստակկորդով և կվարտսեքստակկորդով (օրինակ 2):



Այս չորս հնչյունների շրջվածքների հիմքի և գագաթի միջև առկա է փոքր սեքստա ինտերվալը, որը կապում է նախորդ պիեսը երկրորդի հետ:

Դաշնամուրի և գալարափողի հարաբերությունը «Լադի եռահնչյուններ»ում ստանում է գունային նոր երանգ: Գալարափողը, որն ամբողջ պիեսի ընթացքում կատարվում է մեղմոցով միախառնվելով դաշնամուրի մեղմ նվագակցությանը, ստանում է հնչողության նոր որակ, որն ստեղծում է խաղաղ և անդորր տրամադրություն: պաշնամուրի անշարժ նվագակցությունը և անխառն հնչողությունը, (որտեղ աջ և ձախ ձեռքերի միջև տարածությունը երեք օկտավ է), ստեղծում է եզակի մթնոլորտ:



Կոմպոզիտորն ամբողջ պիեսի ընթացքում դաշնամուրի նվագաբաժնում օգտագործել է հինգ հնչյուն՝ Դ-տոնայնության միկրոտոնիկական հնչյուններ *Es* և *Fis*, որոնց հաջորդում են միշտ նրանց ձգող տոները *"D"* և *"G"* : Իսկ մյուս միկրոտոնիկական *"H"* հնչյունից կառուցվող եռահնչյունը հնչում է պիեսի վերջում որպես եզրափակող եռահնչյուն:

Երրորդ պիեսը՝ «Վերջաբան»ը սկսվում է նույնպես առանց դա-

դարի և նախորդին խիստ հակադրվում է: «Վերջաբան»ի ընդգծված կոնտրաստային ներխուժումը՝ երազկոտ տրամադրության ոլորտից տեղափոխում է նոր՝ լի դրամատիզմով մի աշխարհ: Երրորդ պիեսի կառուցվածքի հիմքում նույնպես առկա է սիմետրիկ լադը: «Վերջաբան»ը, որը նաև ֆինալն է, օրգանապես կապված է նախորդ պիեսների հետ և հանդես է գալիս որպես ամբողջ ցիկլի ընդհանրացնող ավարտ: Երաժշտական արտահայտչականության արդեն մինչ այդ օգտագործված միջոցների և հնարների ամբողջ մի շարք երրորդ պիեսում ստանում է զգացմունքային-կերպարային նոր իմաստավորում:

Երրորդ պիեսի հիմքում առկա է երկու իրարամերժ մոտիվ: Առաջինը կենսահաստատ բնույթ ունի, որի ինտոնացիան կապված է «Սիմետրիկ լադ» պիեսի առաջին ֆրազի հետ: Սրան հետևում է երկրորդ մոտիվի մրրիկային, հողմացրիվ շարժումը, որը մխրճվելով առաջին մոտիվի մեջ, ասես արգելակում է մտքի բնական ընթացքը: պրանց հակամարտությունից էլ հնչողական մթնոլորտը շիկանում է:

Երրորդ պիեսի բնորոշ հատկանիշներից մեկն էլ լադի հերթականությունն է, որը պարզ արտահայտված կամարով միացնում է ցիկլի առաջին և երկրորդ պիեսները, միևնույն ժամանակ իր մեջ ունի մի առանձնահատկություն, որով և տարբերվում է մյուսներից: Այսպես. պիեսի սկզբում, որը գրված է ***Բ***-տոնայնության մեջ, գալարափողի և դաշնամուրի նվագաբաժիններում բացակայում են համապատասխանաբար G և C հնչյունները: Բայց երկու գործիքը միասին վերցրած լրացնում են միմյանց: «Վերջաբան»ում նույնպես օգտագործված են սիմետրիկ լադի բոլոր տոնայնությունները: Ի տարբերություն առաջին պիեսի, որտեղ տոնայնությունները միմյանց հաջորդում են հերթականությամբ ***Ա, Բ, Գ, Դ***՝ այսինքն բարձրից հետզհետե ցածրանում են, երկրորդ պիեսից սկսած, իսկ հիմնականում երրորդ պիեսում, տոնայնությունների հաջորդականությունը կառուցված է առաջինին հակառակ: Այսպես, եթե երկրորդ պիեսը ամբողջովին ընթանում էր ***Գ***-տոնայնությունում, ապա նրան հաջորդում է ոչ թե ***Դ***-ն, ինչպես այն տեսանք առաջին պիեսում, այլ ***Բ***-տո-

նայնությունը: «Վերջաբան»ի կառուցվածքը ըստ տոնայնությունների հերթականության, դիտվում է այսպես՝

Բ, Ա, Դ, Գ, Բ, Ա, Դ.

Ինչպես տեսնում ենք, բոլոր տոնայնությունները բացի **Գ**-ից հանդես են գալիս երկու անգամ: Եվ այսպես, ցիկլում այս չորս տոնայնություններից ամեն մեկը առանձին-առանձին հանդես են գալիս երեք անգամ, որով էլ շեշտում է սիմետրիան, որն այս ցիկլի համար ունի կառուցվածքային հիմնական նշանակություն: Կոմպոզիտորի տոնայնությունների հավասար տեղաբաշխման շնորհիվ այս ստեղծագործությունը դառնում է կուռ և ամբողջական: Իսկ «Վերջաբան»ում տոնայնությունների հաճախակի օգտագործմամբ ընդհանրացվում է ամբողջ ցիկլը:

Առաջին մոտիվի կենսահաստատ, պայքարով լի տրամադրությունը **Ա**-տոնայնությունում փոխելով իր զգացմունքայինկերպարանքը, դառնում է ինքնամփոփ, թախիծով լի, հուզված երգ: Այս վերաիմաստավորմանը նպաստում է մեղմ հնչողությունը *(P), legato* շտրիխը և նուրբ *dolce* կատարումը:



Այս երգը աստիճանաբար ուժեղանալով (որի ընթացքում բարձրանում է նաև ռեգիստրը) ձեռք է բերում բողոքի և պայքարի ինտոնացիա: պեռ լրիվ չվերականգնելով իր սկզբնական ուժը, նրա մեջ մխրճվում է երկրորդ մոտիվից առաջացած թեման իր դաժան, ոչնչացնող մրրիկային ուժով.

Այստեղ ևս գալարափողի և դաշնամուրի նվագաբաժիններում լադի շարքից բացակայում են *“C”* և *“F”, “B”, “D”* և *“A”* հնչյունները:



Երկրորդ թեման իրեն լրիվ սպառելով մարում է և այստեղ որպես եզրափակիչ փուլ՝ հնչում է առաջին թեման: Սրա հիմքն է առաջին մոտիվը: Ի տարբերություն նախորդի՝ եզրափակիչ փուլում առաջին թեման հնչում է հաստատուն և այս երկու իրարամերժ թեմաների բախումից հաղթանակած այն հնչում է իր ամբողջ ուժով: Ի վերջո որպես հենակետ հանդես է գալիս սիմետրիկ լադը իր բոլոր աստիճաններով, իրենց տոնայնական հերթականությամբ:



Այսպիսով, տվյալ պիեսների կառուցվածքային առանձնահատկությունները կլինեն ընդհանրացված հետևյալ սխեմաներով.

«Սիմետրիկ լադ»

Փուլեր	1	2	3	4
Տոնայնություն-ները	*Ա*	*Բ*	*Գ*	*Դ*
Միկրոտոնի-կաները	*F, Cs, A*	*E, C, Gis*	*Es, H, G*	*D, B, Fis*
Տեմպը ♩=52-56	52	56	56→52	52
Շարժումը	Գ-վարընթաց Բ-դաշ՝ վերընթաց	վերընթաց ազատ	գագաթնա-կետին վարընթաց	վերընթաց ուղիղ
Բնորոշ ինտերվալները դաշնամուրի նվագաբաժնում	Մաք. 5 Փ.2	Մեծ 7	Մեծ 3 փոքր 2	Փոքր 6
Երաժշտության բնույթը	վեհ-հանդիսավոր, կոչական	ռիթմիկ-ակտիվ դինամիկ-լարված փոթորկոտ	հաստատուն, հաղթանակային հաղթանակ	հանգչող (նուրբ երգային)
Ամենահատկա-նշական	ցուցադրում	մշակում	կուլմինացիա	եզրափակում
Գործիքի օգտագործման տեմբրը	բաց	բաց	բաց	բաց

(Պայմանական բովանդակությունը)
Անալոգիա

Փողեր հնչեցին որսի գնալու,
Անտառը դարձավ զոհերի վկան
Տերևը ընկավ, ցավից կուչ եկավ:

Վերլուծելով տվյալ երկերը լիիրավ կարող ենք երաշխավորել ինչպես երաժշտական ուսումնարանների բարձր կուրսերի, այնպես էլ կոնսերվատորիայում կատարողական բաժնում սովորող ուսանողների կատարման համար:

«Լադի եռահնչյուններ»

Տոնայնություն	Գ
Միկրոտոնիկաներ	*Es, H, G*
Տեմպը	♩= 40-44
Որոշակի եռահնչյուններ	Մինոր կվարտսեքստակորդ, մեծացրած սեքստակորդ և կվարտսեքստակորդ
Գալարափողի օգտագործած տեմբրը	Փակ (մեղմիչով) sord
Կապը առաջին սիմետրիկ պիեսի հետ	Գ-տոնայնությունը իր միկրոտոնիկաներով 1. Փոքր սեքստային ընդգծված օգտագործում՝
Երաժշտության բնույթը	Երազկոտ ու նուրբ, երգային

(Պայմանական բովանդակությունը)
Անալոգիա

Աշնան թանձր մշուշի մեջ
Մոլորված ճամփորդի նման
պեղնած ծառերն են կանգնած:

«Վերջաբան»

Տոնայնությունների հերթականությունը	*Բ, Ա, Դ, Գ, Բ, Ա, Դ*
Շարժումը	Երկրորդ մոտիվի ժամանակ գալարափողը-վարընթաց Դաշնամուրը-վերընթաց
Լադի բնորոշ հատկությունը	Լադի շարքից գալարափողի և դաշնամուրի նվագաբաժիններում համապատասխանաբար բացակայում են *Ա (C-F), Բ (G-C), Գ (D-A), Դ (F-B)*
Տեմպը	♩=52-56
Երաժշտության բնույթը	Առաջին մոտիվ կենսահաստատ, երգային Երկրորդ մոտիվ՝ դաժան, ոչնչացնող, մրրիկային
Կապը 1-ին և 2-րդ պիեսների հետ	1. Ինտոնացիոն կապը առաջին մոտիվի առաջին պիեսի հետ. 2. Տոնայնությունների և միկրոտոնիկաների նույնություն
Տեմբրեր	Բաց

(Պայմանական բովանդակությունը)
Անալոգիա

Հողմը աչքերիս լույսը խավարեց
Մարմինս դարձավ ծառան տարերքի
Ոգիս էր միայն շողում աստղի պես:

Վերլուծելով տվյալ երկերը լիիրավ կարող ենք երաշխավորել ինչպես երաժշտական ուսումնարանների բարձր կուրսերի, այնպես էլ կոնսերվատորիայում կատարողական բաժնում սովորող ուսանողների կատարման համար:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Բրուտյան Ս.Ա., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Ե., Լույս, 1971:

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ ՄԱՆՈՒԿԻ
կոմպոզիտոր, գլխավոր փոխդեկան,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ

ԳԱԳԻԿ ՀՈՎՈՒՆՑԻ ՏՈՒԲԱՅԻ ԵՎ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԻՆՎԵՆՑԻՈՆ ԵՐԿՈՒ ՊԻԵՍԸ

Գ.Հովունցի տասը ինվենցիոն պիեսների շարքի վերջին՝ չորրորդ գործիքը տուբան է, որը հեղինակի *op.* 9-ում ներկայացված է երկպիեսանի ցիկլով: Ինչպես Ժողովածուի մյուս պիեսները, այնպես էլ տուբայի համար գրված պիեսները ունեն իրենց խորագրերը, որոնցից առաջինը կոչվում է «Իմիտացիա», իսկ երկրորդը՝ «Ֆոլկ-ռիթմիկա»: Ինչպես նախորդ պիեսների դիտարկումից գիտենք, խորագրերը մատնացույց են անում տվյալ պիեսի կառուցվածքը կամ շեշտում նրա շարադրանքի այս կամ այն եղանակը: Այս տեսակետից տուբայի համար գրված պիեսները բացառություն չեն կազմում: Առաջին պիեսի «Իմիտացիա» անվանումը բխում է պիեսի շարադրման եղանակից, որտեղ ամբողջ երաժշտական հյուսվածքը կառուցված է ընդօրինակման (ոչ խիստ իմաստով) սկզբունքով:



Եթե տուբայի մեղեդային գիծն առանձին վերցնենք, կտեսնենք, որ նրա զարգացման սկզբունքը միևնույն ինտոնացիաների հորիզոնական ընդօրինակման արդյունք է: Իսկ տուբան և դաշնամուրը մեկ միասնական ամբողջություն կազմելով, իրար ընդօրինակում են ուղղահայաց և հորիզոնական ուղղությամբ: «Իմիտացիա» պիե-

սում, որպես երաժշտության կազմավորող միջոց հանդիսանում է նյութի մեջ եղած հնչյունների տեղափոխումը կվինտա (կամ նոնա, որը կազմում է հիմքից երկրորդ կվինտան) վերև: Կվինտային շրջանի միտքը հայտնի է շատ վաղուց և կոմպոզիտորն այն օգտագործել է ժողովածուի մեջ: Սակայն «Իմիտացիա»-յում կառուցված կվինտային շրջանն աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ: Այդ ինքնատիպությունը խախտումն է տեղ-տեղ կվինտաների հաջորդականության: Այս հաջորդականությունների խախտումը պիեսի ձևի և դրամատուրգիայի մեջ ունի իր որոշակի խնդիրները: Այսպես՝ առաջին կվինտային օղակների խումբը, որը բաղկացած է հինգ կվինտային օղակից, ցույց է տալիս նյութի մեջ եղած հնչյունների փոխհարաբերությունն ու նրա ինտոնացիաների ընդօրինակման օրինաչափությունը:

8-րդ տակտից խախտվում է կվինտային շրջանի հաջորդականությունը: Երաժշտական մտքի սպասվող ընթացքի խզման շնորհիվ պիեսի միջին հատվածը դառնում է դինամիկ: Ուժգնության աճին զուգընթաց ավելի շարժուն է դառնում ռիթմը, որը նպաստում է կվինտային օղակների սրընթաց փոփոխմանը: Այս շատ փոքր հատվածում (8-րդից մինչև 12-րդ տակտեր) երկու անգամ խախտելով օղակների հաջորդականությունը, արագացնում է վերջնագծին հասնելու ձգտումը: Այդ ընթացքում անցնելով մեծ ճանապարհ, ավարտվում է կվինտային շրջանը:

«Իմիտացիա» պիեսի կվինտային շրջանի դիագրամը:



IV խումբ [*I-E-IV*, *II-H-I*, *III-Fis-II*, *IV-Cis-III*, *V-Gis*] II խումբ տառերի մոտ դրված թվերը հնչյունների հաջորդականության հերթականությունն է:

«Իմիտացիա»-յի բարձրակետի գագաթնակետն իր մեջ պարունակելով մինչև այդ եղած լարվածությունը, ուժեղ պայթյունից հետո լիցքաթափվում է, որով էլ դառնում է ամփոփման հատվածի սկիզբ: Պիեսում որպես եզրափակիչ ակկորդ հնչում է (ինչպես Գ.Հովունցի մյուս ստեղծագործություններում) բոլորովին նոր, մինչ այդ չհնչած *a-moll* եռահնչյունը: Այս մինոր հնչողությունը կարծես իր մեջ պարունակելով պիեսի տրամադրությունը, եզրագծում հնչելով, որպես հնչյունային նոր ներդաշնակություն, վավերացնում է ստեղծված տրամադրության իսկությունը:



«Ֆոլկ-ռիթմիկա»-ն նախորդին հաջորդում է առանց դադարի: Պիեսի անվանումը՝ ժողովրդական-ռիթմիկա, որը բխում է օգտագործված ռիթմից: Այստեղ օգտագործված ռիթմը ոչ թե ուղղակի որևէ պարեղանակի ռիթմ է, այլ իր բնույթով նման է ժողովրդական

խրոխտ պարերի ռիթմին:

Տուբայի և դաշնամուրի փոխհարաբերությունը երկրորդ պիեսում ստանում է որոշակի ուղղվածություն և դրանով ստանում նոր որակ: Տուբայի տեխնիկական հնարավորությունները, որոնք ինչոր չափով սահմանափակ են, դժվարացնում են հաղթահարել անընդհատ խրոխտ ու շարժուն երկրորդ պիեսի երաժշտական նյութը: Այդ իսկ պատճառով երկրորդ պիեսում տուբայի մեղեդային գծի շարժման ընթացքի մեջ կան ժամանակավոր ընդհատումներ: Տուբայի այս ընդհատումներն էլ լրացնում է դաշնամուրը:



Տեմբրային տեսակետից, ներդաշնակություն ստեղծելու համար, կոմպոզիտորը դաշնամուրը օգտագործում է այն ռեգիստրներում, որտեղ հանդես է գալիս տուբան: պաշնամուրի նվագաբաժինը, որտեղ նյութը շարադրված է ունիսոն, ձախ և աջ ձեռքերով ընդգրկում է տուբայի ռեգիստրի հարևան օկտավաները, դրանով էլ ստեղծում գունային միօրինակություն, որը նպաստում է տեմբրային ամբողջականությանը: Այս տեմբրային ամբողջականության շնորհիվ էլ տուբայի մեղեդային գծի ընդհատվածությունը չի ընկալվում որպես մտքի կտրտվածություն, այլ միահյուսվելով դաշնամուրի հետ, դառնում է մի ընդհանուր հետևողական գործընթաց:

Ինչպես ժողովածուի մյուս ցիկլերը, այնպես էլ տուբայի համար գրված պիեսները իրար հետ կապված են նյութի կառուցման նույն սկզբունքով: Այդ կապը, որը օրգանական միասնություն է ստեղծում երկու պիեսների միջև, նյութի տեղաշարժումն է կվինտային քայլով: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ պիեսում երաժշտության կազմավորողի դերում հանդես է գալիս նյութի կառուցման շարժումը, կվինտային շրջանով:

Երկրորդ պիեսում կվինտային շրջանի կառուցման սկզբունքը տարբերվում է առաջինից: «Ֆոլկ-ռիթմիկա»յում կվինտային օղակները հանդես են գալիս մեկը մյուսից մեծ սեկունդա ցած:



Գ.Հովունցի փողային գործիքների շարքի հայտնի երկերից է, որ մշտապես կատարում են կոնսերվատորիայի ուսանողները, հուսով ենք, որ այս վերլուծությունը կօգնի նրանց գեղարվեստական կատարողականությանը, առավելապես հղկելու իրենց նվագը: Տուբայի համար երկացանկը ինչպես հայտնի է քիչ թվով երկեր կարելի է նշել, սակայն ժամանակակից հայ կոմպոզիտորներից անդրադարձել են այս գործիքին ստեղծելով հետաքրքիր երկեր:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Բրուտյան Ս.Ա., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Ե., Լույս, 1971:

Summary

Composer, chore singer Stepan Manuk Suqiasyan introduces another article "Gagik Hovunts's tube and piano two pieces". These works are included Gagik Hovunts's "10 invention pieces for cuprous brass". This article is remarkable for its professional and detailed analysis.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԱՄԲԻՈՆ

КАФЕДРА ОБЩЕГО ФОРТЕПИАНО

АЛТУНЯН АЛИСА РУБЕНОВНА
пианистка,
преподаватель ЕГК им.Комитаса

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ НА КАФЕДРЕ ОБЩЕГО ФОРТЕПИАНО

Как и другие виды духовной деятельности человека, музыка — это средство познания мира, данное человеку, чтобы он научился понимать самого себя, постигать смысл жизни.

“Музыка — это язык чувств” сказал Р.Шуман. Эмоции и ощущения, быт и природа, реальное и фантастическое, нюансы колорита и грандиозное обобщение — все доступно музыке. Какими средствами располагает музыкальное искусство, в каких формах выражает столь многообразное содержание? Носителем смысла и структурой музыкального языка является интонация. Средства музыкальной выразительности — мелодия, метроритм, лад, гармония — должны быть определенным образом организованы, должны находить некое воплощение. За это в музыке отвечает фактура, способ построения музыкальной ткани. Все это имеет основополагающее значение для музыки, но существует только на нотной бумаге до тех пор, пока не воплотится в звуках.

Теперь, когда мы рассмотрели различные элементы музыкального языка, увидели всю сложность и многообразие связей, необходимо вспомнить о том, что все они являются лишь средством выражения художественного образа. Для выражения нескольких художественных образов в музыке существует форма, которая связывает все части композиции воедино.

М.И.Глинка отметил: “Форма — значит красота”. В форме

отражается смена музыкальных образов, раскрывается их контраст и связь, развитие и преобразование. Лишь охватив музыкальную форму целиком, мы можем уяснить логику развития художественного образа и ход творческой мысли композитора.

Говоря о средствах и формах выражения в музыке, следует помнить, что мы со значительной долей условности можем рассматривать их совокупность как единый художественный язык. В действительности каждый композитор говорит на своем языке и это позволяет музыке оставаться вечно живым, бесконечно разнообразным искусством (1.). Безусловно прав замечательный музыковед и писатель Ромен Роллан, сказавший: “Музыка, это интимное искусство, может быть также искусством общественности, она может быть плодом внутренней сосредоточенности и скорби, но может быть порождением радости и даже легкомыслия...

Для одного теоретика сущность музыки — в мелодии, для другого — в гармонии. Музыка не умещается ни в одну формулу. Это песнь веков и цветов, истории, которую могут взрастить как горести, так и радости человеческие” (2.).

Музыкальная педагогика в равной степени искусство и наука. Поэтому наряду со способностями к преподаванию, любовью к своей профессии, будущему педагогу необходимы и специальные знания, которые относятся к сфере науки. Профессиональный уровень образования определяется, прежде всего, понятием “школы”, где каждый элемент должен быть прочувствован и освоен.

Любая профессиональная деятельность, особенно музыкальная, требует предельной деликатности. Нельзя забывать, что цель обучения — овладение искусством игры на фортепиано. Легкость этого обучения обманчива, на самом деле это плод упорной ежедневной работы, и сделать этот труд привлекательным для студента одна из задач педагога.

Работая сегодня, любой педагог понимает, что результат его

работы проявится может быть через несколько месяцев. Сейчас педагогу необходимы знания новых, современных систем музыкального образования. Необходимо обучать будущего музыканта искусству творческого общения. Профессиональная деятельность музыканта заключается в контакте восприятия, выбора репертуара и построения концертной программы для студентов. Это требует от него больших знаний, терпения и оптимизма в работе. Современная методика, опираясь на предметную, эмпирическую наглядность, должна выводить педагога на более высокий уровень теоретического обобщения. Это позволяет педагогу выработать из обширного многообразия методических приемов наиболее подходящие для данного студента и сделать гибким, обобщенно-многогранным сам прием, увеличив спектр его воздействия. Другая важнейшая сторона вопроса — необходимость использования системного подхода в занятиях, чтобы новые знания не утомляли студента, а находили свое законное место в уже имеющейся у него системы собственных умений.

Обучение, проникнутое духом творчества, предполагает вовлечение учащегося в педагогический и воспитательный процесс воздействия. Системный подход предполагает развитие гармонического слуха, тембрового слуха тренировки музыкальной памяти при совместном музицировании в ансамбле.

Занятия проводятся еженедельно по 45 минут, в течении которых разбираются произведения из рекомендованного репертуарного списка, в который включена и экзаменационная программа студента. Урок — основная форма педагогического процесса. Важность предмета общего фортепиано состоит в раскрытии значимости этой дисциплины, которая создает все предпосылки гармонического музыкального развития студента. Через учебный репертуар идет процесс приобщения студента к разножанровой мировой литературе, расширяя кругозор и воспитывая вкус (3.).

Через предмет общего фортепиано проходит практически

весь контингент студентов (кроме учащихся класса специального фортепианно). Сложность преподавания заключена в том, что уровень подготовки студентов бывает различный — от начинающих до студентов, имеющих определенный уровень фортепианной подготовки, которая при обоюдном творческом стремлении помогает студенту достигнуть таких высот фортепианного искусства, которые не отличаются от игры студентов специального класса.

За долгие годы существования роль этого предмета возросла и получила более высокий профессиональный уровень. Участилось число концертов учащихся, которые выступают с разнообразной программой, начиная от классики до современной музыки, порой исполняют собственные произведения. Такой подход приветствуется, так как студент проявляет себя как в роли автора, так и в роли исполнителя. Этот синтез очень важен для становления музыканта.

Урок направлен на получение новых знаний, на закрепление уже полученных знаний, на умение работать дома, подготовку к выступлению и др.

Урок — форма человеческого общения. Вопрос контакта студента и преподавателя всегда были проблематичными и всегда приводили к индивидуальному подходу к каждому. Доброжелательность и профессионализм — залог успеха педагога.

Очень важен подбор программы студента, так как нужно довести исполнение этих произведений до уровня концертного выступления. Очень часто педагог, ссылаясь на свою интуицию меняет ту или иную программу, так как во время экзаменов игра студента должна выглядеть уверенной, четкой и выразительной. Конечно огромную роль в этом играет правильный выбор программы. Здесь сказывается многолетняя практика, глубокое знание фортепианного репертуара.

Дисциплина “Общее фортепиано” является важным компонентом музыкального обучения. Очевидно, что многие студенты

в виду специфики профессии ограничены в воспроизведении многоголосия. В этом смысле неоспоримы возможности фортепианного исполнительства. Применительно к предмету это означает в первую очередь возможность студента лично познакомится с огромными фактурными возможностями фортепиано.

В настоящее время в педагогике заметно возрос интерес к ансамблевой, коллективной форме музицирования. При этом нужно говорить не о снижении мастерства сольного исполнительства, а о повышении и обогащении студентов рядом навыков. Совместное музицирование вызывает у учащихся неподдельный интерес, стимул в игре. Огромную роль в ансамблевой музыке играют новые переложения для двух фортепиано, джазовые версии для разных инструментов выполненные педагогами кафедры общего фортепиано. Это произведения таких крупнейших композиторов, как П.И.Чайковский, А.И.Хачатурян, Дж.Гершвин, Э.И.Багдасарян, Э.А.Абрамян и другие. В последние годы проводятся конкурсы международного масштаба по предмету общего фортепиано, программы которых своей сложностью и масштабностью не уступают другим фортепианным конкурсам. Сюда вовлечены теоретики, композиторы и хородирижеры, которые показывают свое мастерство и профессионализм.

Многие общетеоретические, методические проблемы рассматривались в трудах С.Л.Рубинштейна, А.Р.Алексеева, Л.А.Баренбойма.

Рассмотрим несколько пунктов в научной разработке методики преподавания общего фортепиано в консерватории:

• Определить пути и средства, обеспечивающие максимальное развитие личности и музыкальных способностей на занятиях по общему фортепиано.

• Разработать теоретическую модель и методические рекомендации, направленные на совершенсвование методики преподавания общего фортепиано в консерватории.

• Экспериментально проверить эффективность предполагаемых форм и методов работы.

Специфика методики преподавания позволяет эффективно решать задачи развивающего обучения в системе музыкального образования, дает возможность педагогам значительно повысить интерес студентов к дисциплине общего фортепиано в консерватории.

Владение игрой на фортепиано, дает огромный потенциал и свободу в становлении будущего музыканта. Необходимость владения инструментом в наш век становится все более актуальным, в связи с чем и методика преподавания стала более профессиональной, повысился уровень требований к студенту.

ПРИМЕЧАНИЯ

1. /Вопросы музыкальной педагогики., вып.2., М.:Музыка., 1980.
2. Аристархова Л.О., О чем и как говорит музыка?., //Искусство., 1 сентября 1999 N7.
3. Давыдова Н., Основы музыкального воспитания., 1994.

Ամփոփում

Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս, դաշնակահար Ա.Ռ.Ալթունյանի «Ընդհանուր դաշնամուրի ամբիոնում դասավանդման մեթոդիկան» հոդվածում հեղինակը նշում է, որ երաժշտությունը, ինչպես և մարդու հոգևոր գործունեության այլ տեսակներ, աշխարհընկալման, ինքնաճանաչման, կյանքի իմաստը հասկանալու միջոց է: Այնուհետև հոդվածագիրն անդրադառնում է այն արտիշամիջոցներին ու ձևերին, որոնք անհրաժեշտ են կոնսերվատորիայի դաշնամուրային ոչ մասնագիտական ամբիոնների ուսանողներին դաշնամուր նվագել սովորելու և, իհարկե, գործիքին ավելի արագ ու արդյունավետ տիրապետելու համար: Այս ասպարեզում մեծ նշանակություն ունի, դպրոցը, համակարգը, մեթոդիկան և շատ այլ բաղադրիչներ:

Summary

The part which presents the works of the specialists of Chair of Overall Piano starts with the article by YSC pedagogue, pianist Alisa Ruben Altunyan. She introduces the article "Teaching Methods in the Chair of Overall Piano". The author writes that the music is a means of self and the world understanding. As R.Shushan writes "Music is the language of emotions". The author also writes about the measures that should be taken for YSC students to love playing the piano.

АЛТУНЯН АЛИСА РУБЕНОВНА
пианистка,
преподаватель ЕГК им.Комитаса

ПРОИЗВЕДЕНИЯ Ф.ШОПЕНА В ИНТЕРПРЕТАЦИИ ВЫДАЮЩИХСЯ ИСПОЛНИТЕЛЕЙ

Не удивительно, что творчество Ф.Шопена со времени своего возникновения явилось и по сей день является столь популярным среди пианистов. Что же обусловило эту притягательную силу? Вероятней всего ценность его духовного мира, психологическая правдивость, глубина, искренность, жизненность его музыки.

Из написанных Л.Бетховеном, Ф.Шубертом, Ф.Листом произведений в концертный репертуар попадает лишь часть опусов. У Ф.Шопена можно назвать лишь несколько редко исполняемых сочинений (и то, благодаря объемности его творчества).

Если, скажем, в бетховенском творчестве мы обнаруживаем определенные градации (ранний Бетховен — зрелый классик, и поздний Л.Бетховен — романтик) и в зависимости от этого, “близость” данного пианиста к той, а не к иной области его фортепианной музыки, то у Ф.Шопена этого нет. В музыке Ф.Шопена не встречаются группы произведений, которые различались бы по своим стилистическим направлениям (скажем в одном случае классицизм, в другом — романтизм).

Возможно одной из причин популярности его творчества является то, что оно вобрало в себя и черты классицизма, и черты романтизма в совершенно специфическую единую целостность. И, наверное, поэтому среди истинных “шопенистов” нет таких, которые исключали бы из своего репертуара те или иные жанры.

Во все времена к Ф.Шопену обращались прежде всего пианисты романтического склада (Ф.Лист, С.В.Рахманинов, И.Гофман, А.Корто, А.Рубинштейн, К.Н.Игумнов, Г.Г.Нейгауз, В.Горовиц, В.В.Софроницкий, С.Т.Рихтер, В.Клайберн и другие). Конечно это неполный список шопенистов, которые в течение всей своей творческой деятельности обращались к его сочинениям. Но если перечислить всех пианистов, исполнявших Шопена, то совсем не трудно ошибиться в чем же различие между понятием "шопенист" и "пианист". К.Н.Игумнов писал, что творчество Ф.Шопена "чрезвычайно разнообразно и вмещает всю гамму человеческих чувств,— от глубоко личных, выражающих тончайшие переживания души ноктюрнов до грандиозных, блестящих полонезов, отображающих эпос целого народа" (1. С.52). Но в чем же таки разнообразие интерпретаторов? "Именно в *многогранности* единого, в *многокачественной монолитности* музыки Ф.Шопена сокрыта важнейшая *потенциальная* причина разнообразия типов шопенистов. Каждая эпоха находила в Ф.Шопене свое, вычленяла в его творчестве наиболее импонирующие ей элементы, порождала *направления* в шопенизме и борьбу этих направлений" (2.С.15). Только непонимание шопеновской музыки может привести к неправильному прочтению, толкованию.

К.Н.Игумнов в свое время высказал поучительные соображения по этому поводу. Особенно "нежелательным" ему представляются два типа исполнения — это Шопен "молодых девиц" и Шопен "виртуозов".

В определенной мере, к первому типу можно отнести таких пианистов, как В.Пахман, С.Франсуа, отчасти И.Я.Падеревский, ко второму — Ф.Листа, Р.Левина, из современных пианистов, пожалуй, Л.Бермана. Но нельзя сказать, что исполнение Ф.Шопена этими пианистами явилось столь малоценным с художественной стороны. Оно не имело ничего общего с крайней манерностью и с пустым виртуозничеством.

Уже при жизни Ф.Шопена стала появляться тенденция игно-

рировать содержащиеся в его творчестве великие идеи, бурные стремления чувств, миниатюризировать шопеновскую музыку. Ложное толкование музыки Ф.Шопена чаще выражалось в ее салонной трактовке. Недопонимание специфики индивидуальности композитора давало повод к лирическим преувеличениям, превращению шопеновской драматической лирики в сентимент, а тончайших переходов чувств — в манерную аффектацию. Существует мнение, на наш взгляд необоснованное, что родоначальником салонно-сентиментальной трактовки шопеновской музыки является ее автор.

Об игре Ф.Шопена, к сожалению, можно судить лишь по воспоминаниям его современников. Многие из них отмечали мягкость, нежность, естественное спокойствие его игры чуждой всякой резкости и грубости. Непременными правилами его игры были "нежность без жеманства", "энергия без грубости". Один из учеников Ф.Шопена К.Микули писал о его игре: "Это была речь, лишенная напыщенности, простая и в тоже время возвышенная" (3.С.35).

Известно, что Ф.Шопен мастерски владел именно нежными, приглушенными красками, мягким, бархатным туше. Но ему как большому музыканту всегда были чужды всяческие изощрения, томные *ritenuto* и ложная сентиментальность. По словам одного из учеников Ф.Шопена К.Микули "благородная энергия придавала некоторым эпизодам в его исполнении грандиозную мощь". "Он бывал полон мощи,- свидетельствует Ж.Матиас,- но это длилось не дольше чем вспышка молнии" (2.С.20).

Ф.Мендельсон отзывался о Ф.Шопене как о первом среди пианистов. Он писал: "Его игра доставляет нам столько же неожиданного, как и смычок Н.Паганини".

Одним из первых гениальнейших интерпретаторов произведений Ф.Шопена был Ф.Лист. Игра Ф.Листа поражала своей красочностью и исключительной виртуозностью. В одном из писем Ф.Шопен пишет Ф.Гиллеру: "Я хотел бы похитить у него манеру

исполнения своих собственных этюдов". Как пишет Д.Рабинович в своей статье "Шопен и шопенисты" именно с Ф.Листа начинается большая история шопенизма (Ф.Бузони, А.Корто, А.Рубинштейн и другие).

Музыка Ф.Шопена на редкость соответствовала творческой индивидуальности Гофмана-пианиста. Поэтичность, мягкость, пластичность образов, прозрачность фактуры — эти черты шопеновской музыки очень ярко выражены в гофмановском исполнении.

В противоположность И.Гофману, фортепианное искусство Ф.Бузони является более новаторским. "Провозвестник эры доминирования интеллектуального фактора в сфере искусства фортепианной игры и сам зачинатель такого нового стилевого направления в пианизме, Ф.Бузони, распространял свои художественные взгляды и принципы также на область истолкования сочинений Ф.Шопена" (2.С.26). В бузониевском Шопене чувствуется, с одной стороны, философское начало, глубина идей, с другой — тонкая живописная красочность поэта-колориста. Также изумляет красочность педализации.

Историю шопенизма невозможно представить без такого выдающегося пианиста, каким является Альфред Корто. Он был гениальным интерпретатором шопеновской музыки. Недаром в одной из итальянских газет (еще при жизни А.Корто) были напечатаны замечательные слова: "Когда руки Корто перестанут существовать, Шопен умрет во второй раз". Он необыкновено ярко передает трагедийность, простоту шопеновской музыки. Вслушиваясь в записи исполнения А.Корто цикла Прелюдий и Баллад замечаешь непосредственность выражения, необычайный драматизм и мужественность шопеновских произведений. "Наше искусство тем чудесно, что оно помогает нам воссоздавать красоту если не умершую, то заснувшую между строками нотного стана",- писал А.Корто. И он сумел воссоздать эту красоту в шопеновских прелюдиях.

“Я так часто пытался, помимо какой-либо документации или литературы, лишь путем интимно-искренного музыкального общения представить себе каков был Ф.Шопен. Я так желал увидеть его духовно и физически живым перед собой, полным трепета, целомудренных и пылких терзаний, благородной печали, которыми пронизаны его песнопения, что, может быть, не совсем обманывался, придавая моим предположениям облик реальности”, — писал А.Корто.

Иным был Шопен С.В.Рахманинова — монументальным, мужественным, волевым, интеллектуальным. Б.В.Асафьев пишет: “С.В.Рахманинов в своем возрожденном Шопене конечно, творил жизнь мелодии... шопеновский мелос в его пальцах выходит из атмосферы парижского интеллектуализма блестящих талантов эпохи О.Бальзака, Г.Берлиоза, Жорж Санд, Ф.Листа... в “пленэр” русского северно-песенного интонирования” (2.С.32). Часто высказывается мнение, что С.В.Рахманинов играет не Шопена, а “самого себя”, это суждение слишком категорично, поскольку пианист расскрывает облик Ф.Шопена с ярко выраженной индивидуальной точки зрения. Бесспорно помогает нам по-новому ощутить глубину и значительность творчества композитора.

Всегда глубоко волновала проблема интерпретации шопеновских произведений Артура Рубинштейна. Пианист, записавший несколько раз почти все произведения Ф.Шопена, он с каждым разом стремился глубже постигнуть в его музыке нерасторжимое единство польских национальных элементов с элементами общеевропейского классического искусства. Его исполнения отличают замечательное техническое совершенство, объемное кантиленное звучание рояля, изумительное владение всей богатейшей палитрой фортепианной красочности, гибкость и пластика ритма.

Одну из ярчайших страниц в истории шопенизма представляет исполнительское искусство таких великих пианистов, как

К.Н.Игумнов и Г.Г.Нейгауз.

По мнению Д.Рабиновича в исполнении К.Н.Игумнова “Шопен оказывался до изысканности тонко прочувствованным”. Гуманизм, эмоциональность, реализм и в тоже время “несравненная и убеждающая простота” составляли одну из важнейших черт игумновского Шопена. “Из всех композиторов романтизма Ф.Шопен является наиболее реалистичным”,- писал К.Н.Игумнов (2.С.36).

Если К.Н.Игумнову был близок Шопен лирико-драматичный, то Г.Г.Нейгаузу — волевой, активный, масштабный. В его исполнении ярко обнаруживается связь с народно-национальными истоками (особенно это чувствуется в исполнении мазурок).

На протяжении ряда лет было сделано много редакций бетховенских сонат. Большая их часть отражает опыт выдающихся пианистов, облегчая учащимся исполнение трудных мест и понимание всего произведения. Среди изданий наиболее интересными были редакции И.Мошелеса, Ф.Листа, Г.Бюлова (у него только последние 12 сонат). Отличительной чертой этих исполнительских редакций, даже выполненных выдающимися музыкантами, является, прежде всего, свободное обращение с авторским текстом.

Позднее было опубликовано много новых редакций. В данной работе рассмотрена Соната *op.*31 N2 (1 часть) в трех ре-

дакциях: К.А.Мартинсена (4.), А.Б.Гольденвейзера (5.) и А.Шнабеля (6.).

К.А.Мартинсен в своей редакции сонат Л.Бетховена с большим уважением относится к авторскому тексту. По сравнению с другими редакциями он делает мало аппликатурных указаний, больше оставляя на усмотрение исполнителя.

Замечательный русский пианист и композитор А.Б.Гольденвейзер сделал редакцию сонат Л.Бетховена, которую закончил в 1960-е годы (2 вариант). Эта редакция пользуется большой популярностью. В ней сочетается стремление к текстологической точности с подробными указаниями и комментариями педагогического назначения. Ценность данной редакции заключается в том, что она доступна всем студентам. В педагогической практике часто пользуются редакцией А.Б.Гольденвейзера. А.Б.Гольденвейзер пишет: “При редактировании в текст можно добавлять педаль, аппликатуру и в некоторых случаях — распределение рук. В остальном текст должен быть таким, каким он написан автором” (7.).

А.Шнабель — один из крупнейших пианистов 1-й половины XX века. Его редакция сонат Л.Бетховена получила большое признание и оказала решающее влияние на воспитание многих музыкантов. А.Шнабель работал над подготовкой этого издания с 1921 года, а завершил к 100-летию со дня смерти Л.Бетховена в 1927 году. Эта редакция большого художника. Она современна, показывает новый и интересный подход к чисто пианистическим проблемам, выраженный, в частности, во многих аппликатурных решениях.

А.Шнабель был одним из немногих мастеров в истории фортепианного искусства, дававших циклы концертов, посвященных всем 32-м сонатам и фортепианным концертам Л.Бетховена. До нас дошли записи его исполнений. Исполнительский стиль А.Шнабеля характеризуется серьезностью, углубленностью и необычайной выразительностью.

Сделаем сравнительный анализ выше перечисленных редакций Сонаты *d-moll* N17 (*op.*31 N2). А.Б.Гольденвейзер и К.А.Мартинсен не дают метрономических указаний темпов. У А.Шнабеля с точностью определяются темп не только в начале произведения, но и в каждом фрагменте. Его указания в экспозиции таковы:

Largo (♩ = 60) ***Allegro*** (𝅗𝅥 = 120) ***Adagio*** (♩ = 56)

Largo (♩ = 60) ***Allegro*** (𝅗𝅥 = 120)

В репризе: ***Largo*** (♩ = 60) ***Allegro*** (𝅗𝅥 = 120)

Adagio (♩ =66) ***Largo*** (♩ = 60)

Allegro (𝅗𝅥 = 108).

Интересно, что *Allegro* в репризе стало 𝅗𝅥 = 108, в то время как в экспозиции было 𝅗𝅥 = 120.

Следует отметить, что эти точные метрономические указания противоречат принципам самого А.Шнабеля, т.к. он как педагог стремился воспитать в ученике индивидуальность. Вероятно, он хотел дать ученикам подробный план-путеводитель, внимательно изучив который, учащийся найдет свой собственный путь. Подтверждением этого может служить его исполнение: он никогда не следовал буквально своим же зафиксированным указаниям. Черты редакций А.Шнабеля, во многом определены особенностями его пианизма.

Аппликатура А.Шнабеля многим пианистам кажется нелогичной и бессистемной. На самом деле она на удивление логична и является новаторской во многих отношениях. Вероятно, А.Шнабель не задумывался над тем, совпадают ли его аппликатурные принципы с бетховенскими. В ряде случаев бетховенская аппликатура, по своему характеру очень близка шнабелевской. На этот примечательный факт обратил внимание Н.Копчевский во вступительной статье к советскому изданию фортепианных сонат Л.Бетховена под редакцией А.Шнабеля.

Аппликатура А.Б.Гольденвейзера проста и удобна, она выте-

кает из естественного положения руки.

К.А.Мартинсен аппликатурных указаний дает очень мало.

Расставляя пальцы, А.Шнабель всегда сообразуется с регистром, в котором расположена та или иная звуковая последовательность. Он по возможности старается не пользоваться 1-м пальцем в середине клавиатуры, а также избегает применять его в низком регистре (имеется в виду правая рука) и в высоком регистре (речь идет о левой). Легко заметить, что многие шнабелевские аппликатуры предлагают пронацию руки (т.е. некоторый наклон в сторону 1-го пальца), положение 1-го пальца ниже клавиатуры и минимальное отведение кисти.

Allegro (*пример редакции А.Шнабеля)*



Allegro (*пример редакции А.Б.Гольденвейзера)*



К.А.Мартинсен в данном случае указаний не дает.

А.Шнабель иногда специально ограничивает количество используемых пальцев. Вот пример нередко встречающейся у него аппликатуры без 1-го пальца:

Largo *(пример редакции А.Шнабеля)*



Сравним аналогичное место в редакции А.Б.Гольденвейзера

Largo (*пример редакции А.Б.Гольденвейзера)*



К.А.Мартинсен в этом фрагменте не дает указаний.

Largo (*пример редакции К.А.Мартинсена)*



Интересна следующая расстановка аппликатуры:
пример редакции А.Шнабеля



Здесь А.Шнабель применяет прием клавесинной игры, используя в левой руке переход с 3-го на 2-й палец (с *“a”* на *“gis”*).

А.Б.Гольденвейзер в своей редакции предложил следующую аппликатуру:



(пример редакции А.Б.Гольденвейзера)

К.А.Мартинсен оставляет аппликатуру на усмотрение исполнителя.

А.Шнабель в приведенном ниже фрагменте предлагает играть 1-м пальцем.

пример редакции А.Шнабеля (правая рука):



А.Б.Гольденвейзер предлагает играть 3-м пальцем:
пример редакции А.Б.Гольденвейзера



К.А.Мартинсен не дает указаний.

Интересно высказывание самого А.Шнабеля по поводу своей аппликатуры: “Аппликатура в моей редакции очень часто определялась целью заставить учащегося остановиться и немного поразмыслить. Иногда эта аппликатура была очень трудна — как указание, что в данном месте рекомендуется быть особенно внимательным. При более легком аппликатурном варианте от внимания ученика могло бы ускользнуть значение какого-либо важного, но скрытого элемента”.

А.Шнабель иногда ударяет несколько клавиш подряд одним и тем же пальцем.

Рассмотрим следующий пример:



А.Б.Гольденвейзер и К.А.Мартинсен пользуются сменой пальцев, но каждый подходит по-своему:

Allegro (*пример редакции А.Б.Гольденвейзера)*



Allegro (*пример редакции К.А.Мартинсена)*



Что касается артикуляции, то в этой Сонате редакторы близки к авторскому замыслу и никто из них не вносит ничего своего.

В динамике А.Б.Гольденвейзер и К.А.Мартинсен близки, можно даже сказать, что одинаковы, а А.Шнабель, сохраняя общую схему — детализирует, предлагает ряд уточняющих оттенков.

Так например, А.Б.Гольденвейзер и К.А.Мартинсен указывают *p*, а А.Шнабель вводит *subito p*:



В данном фрагменте А.Шнабель уточняет *pp liberamente*, чего нет у А.Б.Гольденвейзера и К.А.Мартинсена:



Иногда А.Шнабель пишет нюанс прямо противоположный нюансам А.Б.Гольденвейзера и К.А.Мартинсена.

У А.Б.Гольденвейзера и К.А.Мартинсена дано *f*, а А.Шнабель пишет *sempre p*:



Каждый редактор стремится в этом фрагменте сгладить скачок в левой руке и по-своему достигает этой цели.

пример редакции А.Шнабеля



пример редакции А.Б.Гольденвейзера



пример редакции К.А.Мартинсена



Интересно, как пользовался педалью Л.Бетховен? Мы можем судить об этом по бетховенским указаниям в его произведениях. Порой они представляются нам удивительно скупыми. Кстати, К.Черни говорил, что Л.Бетховен пользовался педалью очень часто, гораздо чаще, чем обозначено в его произведениях. Но не надо думать, что он пользовался педалью так, как мы делаем это сегодня. Исследователи полагают, что Л.Бетховен записывал лишь те педальные эффекты, которые охватывали большое пространство или казались ему наиболее важными; но не проставлял отдельные подробности педализации, предназначенные для связывания сменяющихся гармоний.

По поводу обозначения Л.Бетховеном педали часто ведутся споры. Многие музыканты (в их числе А.Б.Гольденвейзер) считают, что такие обозначения “большей частью неприемлемы на современных инструментах”, хотя и признают их большое значение для понимания авторского замысла.

А.Шнабель — почти целиком придерживается в своей исполнительской и редакторской практике бетховенского оригинала в отношении педализации. Он настаивал на соблюдении бетховенской педализации — одной педали на весь речитатив и последующую паузу. Г.Г.Нейгауз назвал такую педализацию “нелепой”.

Место с “гулкой педалью”:



А.Шнабель и К.А.Мартинсен за авторскую педаль, а А.Б.Гольденвейзер за “чистую”.



У А.Б.Гольденвейзера частая педаль

А.Шнабель и К.А.Мартинсен вновь за авторскую педаль.

Исходя из анализа трех редакций можно придти к следующему выводу, что для педагогической работы лучше всего использовать редакцию А.Б.Гольденвейзера, а чтобы студент познакомился ближе с авторским текстом предложить ему редакцию К.А.Мартинсена. Более способному студенту можно рекомендовать редакцию А.Шнабеля.

Завоевания Л.Бетховена в области фортепианного стиля колосальны. Он раздвинул до предела диапазон звучания, выявил не-

ведомые до того выразительные свойства крайних регистров: поэзию высоких воздушно-прозрачных тонов и мятежный рокот басов.

Передвигая в нижние регистры мелодию, он уравновесил мелодическое значение низких, средних и высоких регистров. Обогащение педальной техники умножило динамические колористические оттенки фортепианной звучности. Л.Бетховен, насыщая фактуру тематическими элементами, сообщил ей выразительность, при которой любой вид фигурации, любой пассаж или короткая гамма приобретает смысловую значительность. Из совокупности этих и множества других средств выразительности сложился качественно новый фортепианный стиль, который стал почвой для расцвета пианизма XIX века.

ПРИМЕЧАНИЯ

1. /Бетховен Л., Л.:Издательство Государственной академической филармонии., 1927.
3. Роллан Ромен., т.7., Собр. муз.истор.соч. в 9 томах., Бетховен. Великие творческие эпохи., М.:Искусство., 1938.
4. Бетховен Л., Сонаты для фортепиано., (ред.К.А.Мартинсена)., Лейпциг:Петерс., 1927.
5. Бетховен Л., Сонаты для фортепиано., (ред.А.Б.Гольденвейзера)., М.:Музыка., 1965.
6. Бетховен Л., Сонаты для фортепиано., (ред.А.Шнабеля)., М.:Музыка., 1985.
7. Гольденвейзер А.Б., О редактировании., /Вопросы фортепианного исполнительства., вып.1., М.:Музыка., 1965.

Ամփոփում

Ա.Հ.Հովսեփյանը իր «Լ.վ.Բեթհովենի d moll N17 Սոնատի խմբագրումների համեմատական վերլուծությունը» հոդվածում անդրադառնում է Ա.Շինդլերի, Ա.Շնաբելի, Ի.Մոշելեսի, Ֆ.Լիստի, Հ.Բյուլովի, Ա.Գոլդենվեյզերի, Կ.Մարտինսենի՝ Լ.Բեթհովենի Սոնատի խմբագրումներին. անշուշտ, նրանցից յուրաքանչյուրն իր տաղանդի տեսանկյունից մոտենալով, յուրովի է խմբագրում և իր նկատառումները կատարում Սոնատների մեկնաբանություններում: Հեղինակն ուսանողներին հորդորում է կատարել Սոնատների Ա.Շնաբելի խմբագրումը, նշելով, որ նա ընդլայնել է Լ.Բեթհովենի Սոնատների հնչողության շայնասահմանը, վեր հանելով ծայրի ռեգիստրների արտահայտիչ հատկությունները, վերին եթերային-թափանցիկ հնչյունների և բասերի ահարկու պոեզիան:

ОВСЕПЯН АНАИДА ГАРИБОВНА
пианистка,
преподаватель ЕГК им.Комитаса

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АППЛИКАТУРНЫХ ПРИНЦИПОВ ФОРТЕПИАННЫХ СОНАТ Л.БЕТХОВЕНА В РЕДАКЦИЯХ Г.БЮЛОВА, З.ЛЕБЕРТА, А.Б.ГОЛЬДЕНВЕЙЗЕРА, А.ШНАБЕЛЯ

Сонаты Людвига ван Бетховена являются гениальными образцами его музыкально-философской мысли, требующими тщательности изучения и подлинности исполнительского стиля. Отсюда необходимость некоторых точных технических средств, целесообразных форм движений и целесообразной аппликатуры*.

Чтобы раскрыть авторский замысел и содержание сочинения, исполнитель должен овладеть деталями сочинения, характером звучания, средствами динамики, формами пианистических движений. Вопрос аппликатуры приобретает важное значение. Гипноз отпечатанных в нотном тексте рядов пальцев весьма силен. Не всякий играющий умеет обойти их непременное использование. Между тем, хотя основанием для выбора пальцев является их удобство, многие редакции грешат небрежностями в области аппликатуры.

Соната f-moll N 1 (op.2 N 1) ч. III, Trio (редакция Ф.Лямонда, 1.)

---

* Аппликатура (от лат. *applico,* нем. *applikatur,* фр. *application des doigts* — прикладываю, прижимаю) — порядок чередования пальцев при игре на муз. инструменте. В иностранной музыкально-технической терминологии часто понятие аппликатуры обозначается словом, производным от слова “палец”. Так, например, *doigte* по-французски, *fingersatz* или *fingersatzung* по-немецки. В русской терминологии такого термина нет, но в практике бытует слова “пальцовка”.

тт. 5-7



тт. 30-32



Чем объясняется разная аппликатура в аналогичных местах текста (отмечено кружочками).

Соната A-dur N 2 (op.2. N2) Rondo (редакция Ф.Лямонда)

тт. 97-99



Такие примеры встречаются и в других редакциях. Встречаются образцы надуманности аппликатурных построений.

Редакция А.Шнабеля. Соната G-dur N 16(op.31 N1) ч. I (2.)



Такая аппликатура может привести к пальцевой путанице и неровности звучания. Количество таких примеров встречается немало.

Проблема построения наиболее целесообразной аппликатуры интересовала многих редакторов. Основой же являются образцы аппликатуры Л.Бетховена.

Построенная должным образом аппликатура создает условия для наилучшего решения технических и художественных задач, что вынуждает исполнителя работать над выбором аппликатуры и в результате исполнительского опыта находить удовлетворяющий его вариант. Отсюда бесчисленное множество вариантов аппликатуры.

Неизвестно, какими мотивами руководствовался Л.Бетховен, но в своих сонатах он обозначил аппликатуру лишь в некоторых случаях. Может быть, она выставлена по просьбе изучавших его сонаты. Примеры бетховенской аппликатуры появляются в самых, казалось бы нетрудных для исполнения местах. И наоборот, в сложных фрагментах ни одного примера аппликатуры. Почему вдруг оказались так необходимы два пальца, выставленные в Сонате *A-dur?*

Соната A-dur N 28 (op.101). Кода финала (Уртекст, 3.)



Вероятно, выставленная аппликатура явилась результатом разучивания всего эпизода, причем Л.Бетховен пришел к заключению, что терции надо играть обеими руками. По-видимому, выполнение терций одной рукой ему казалось нецелесообразным. Например, Г.Бюлов предлагает играть этот фрагмент следующим образом:



Հ.Շնաբել և Հ.Բ.Գոլդենվեյզեր հետևում են հեղինակի ցուցումին.

(խմբագրություն Հ.Շնաբելի)



(խմբագրություն Հ.Բ.Գոլդենվեյզերի, 4.)



Օրինակներ Լ.Բեթհովենի դարձվածների, որոնք համոզիչ են, որ նա ունեցել է որոշակի մեկնաբանություն։

Սոնատ As-dur N 31 (op.110) Meno allegro (Ուրտեքստ, 3.)



Առաջին հրատարակությունը Լ.Բեթհովենի սոնատների մեծ մասի մոտ տուժել է բազմաթիվ թերություններից։ Հեղինակի տեքստի ազատ մեկնաբանումը, տգեղ տպագրությունը, դարձվածների բացակայությունը գրգռել են բազմաթիվ խոշոր

исполнителей и педагогов к их редактированию и переизданию.

Замечательный музыкант, прекрасный знаток Л.Бетховена, великолепный виртуоз-пианист и дирижер **Ганс фон Бюлов (1830-1894)** — редактор последних 12-ти сонат композитора.

Г.Бюлов был учеником Ф.Вика и Ф.Листа. В его исполнении сочетались классическая ясность с глубоким пониманием авторского замысла. С точки зрения аппликатуры, редакция Г.Бюлова представляет собой глубокое и объективное решение проблемы. Основным принципом Г.Бюлова является нахождение такой аппликатуры, которая исключает возможность исполнительской неточности по отношению к тексту.

Соната Fis-dur N24 (op.78) ч. I (редакция Г.Бюлова)



Г.Бюлов предлагает смены пальцев, что поможет и четкому исполнению пассажа и, одновременно, хорошему легато.

Перемена пальцев вокруг одной клавиши дает безошибочность технического исполнения (как выражается сам Г.Бюлов — *"Verhindern der verstosses"*- "Предотвращение ошибки").

Соната Fis-dur N24 (op. 78) ч. I (редакция Г.Бюлова)



Соната Fis-dur N24 (op. 78) ч. I (редакция Г.Бюлова)



Таким образом, при помощи аппликатуры Г.Бюлов исключает возможность технических неудач и неточность выполнения текста. Главное для него — сохранить в точности авторский замысел.

К редакциям второй половины XIX века относится работа **Зигмунда Леберта (1822-1884),** который осуществил редакции две трети сонат Л.Бетховена. Редакция З.Леберта может быть охарактеризована как упрощенная правильность. Аппликатура рассчитана только на удобное техническое выполнение, он *боится употребления первого пальца на черной клавише, рекомендует класть первый палец на белую клавишу.*

Соната c-moll N8 (op.13), ч. III, Rondo (редакция З.Леберта)



Соната c-moll N8 (op.13), ч. III, Rondo (редакция З.Леберта)



Большой популярностью пользуется, выполненная на основе своей громадной эрудиции, многолетнего исполнительского и педагогического опыта, редакция **Александра Борисовича Гольденвейзера (1875-1961).** Анализ этого труда раскрывает творческий метод Гольденвейзера-пианиста и помогает понять его рекомендации как педагога. Основные тенденции толкования бетховенских сонат А.Б.Гольденвейзером заключается в строгом следовании за текстом. В редакции А.Б.Гольденвейзера преобладает структура, не навязывающая определенных прие-

мов исполнения или определенных исполнительских намерений, поэтому она может быть использована при различных интерпретациях (4.).

Индивидуальной особенностью аппликатуры А.Б.Гольденвейзера является *широкое применение первого пальца вообще и частое использование его на черных клавишах.*

Соната C-dur N 21 (op. 53), ч.I (редакция А.Б.Гольденвейзера, левая рука)



Соната C-dur N 21 (op. 53), ч.I (редакция А.Б.Гольденвейзера, правая рука)



А.Б.Гольденвейзер весьма часто *отказывается от использования четвертого пальца, который рассматривает как наименее надежный.*

Соната C-dur N 21 (op.53), ч. I (редакция А.Б.Гольденвейзера)



Соната C-dur N 21 (op.53), ч. I (редакция А.Б.Гольденвейзера)



Соната C-dur N 21 (op.53), ч. I (редакция А.Б.Гольденвейзера)



В редакции А.Б.Гольденвейзера сочетаются две стороны: академическая педагогическая и индивидуально-исполнительская. Эта редакция представляет собой большой интерес как образец проявления пианистической индивидуальности, но вряд ли сам редактор рекомендует ее для всеобщего безусловного использования.

Артур Шнабель (1822-1951) — яркая, самобытная фигура в пианизме XX века. Он не только завоевал видное место среди пианистов, но и оказал существенное влияние на последующие поколения музыкантов. А.Шнабель прославился не только как выдающийся пианист, но и как яркий, интересный педагог и вдумчивый, оригинальный редактор сонат Л.Бетховена (его редакция пользуется всемирной известностью). Пианисту, впервые знакомящемуся с аппликатурой А.Шнабеля, она нередко кажется нелогичной, бессистемной и неудобной, а порой вызывает недоумение. Аппликатурные замыслы А.Шнабеля даются пианисту не сразу. При поверхностном ознакомлении с методом расстановки пальцев, некоторые пианисты делают скороспелый вывод, будто “странные” аппликатуры А.Шнабеля — результат его прихоти. Только многократное проигрывание шнабелевской аппликатурой, приводит к познанию смысла его плодотворной, новаторской системы расстановки пальцев.

“Некоторые аппликатуры этого издания вызовут, вероятно, удивление; для объяснения непривычных аппликатур следует указать, что выбор их направлен был не только на удобство рук, но в гораздо большей степени исходил из желания обеспечить или по меньшей мере разъяснить музыкальную выразительность

того или иного места...” — пишет А.Шнабель в предисловии к своей редакции сонат Л.Бетховена (2.).

А.Шнабель настаивал на том, чтобы ученик вначале знакомился с оригинальным (авторским) текстом сочинения, и лишь потом обращался к редакциям.

“Пальцовка Бетховена, без сомнения, из возможных лучшая”, — замечает А.Шнабель. Аппликатурные приемы А.Шнабеля многообразны, но авторскую аппликатуру он сохранил в точности.

Соната A-dur N28 (op. 101) ч.II (Уртекст)



Соната A-dur N28 (op. 101) ч.II (редакция А.Шнабеля)



Отметим некоторые из наиболее важных аппликатурных приемов А.Шнабеля. Он часто использует *смену пальцев на одной и той же клавише.*

Соната As-dur N12 (op. 26) ч. I вар.V (левая рука)



Нередко А.Шнабель обращается к *скольжению пальцев. Скольжение — с черной клавиши на белую.*

Соната C-dur N3 (op. 2. N3) ч. I, Allegro con brio (редакция А.Шнабеля)



Соната D-dur N15 (op. 28) ч. IV, Rondo, Allegro ma non troppo (редакция А.Шнабеля)



А.Шнабель нередко играет *staccato* или *non legato* такой аппликатурой, которая не позволяет связывать звуки.

Соната B-dur N11 (op. 22) ч. I (редакция А.Шнабеля, правая рука)



Соната B-dur N11 (op. 22) ч. I (редакция А.Шнабеля, левая рука)



В одних случаях А.Шнабель смело использует пятипалую аппликатуру.

Соната d-moll N17 (op. 31 N2) ч. II, Adagio (редакция А.Шнабеля)



Соната E-dur N9 (op. 14 N1) ч. III, Rondo, Allegro commodo (левая рука)



В других случаях редактор специально ограничивает количество используемых пальцев. Нередко встречается аппликатура без 1-го пальца:

Есть случаи, где Шнабель дает указания сыграть несколько нот подряд одним и тем же пальцем:

Соната c-moll N8 (op. 13) ч. II, Adagio cantabile (левая рука)



Соната C-dur N3 (op. 2 N3) ч. I, Allegro con brio



Соната As-dur N12 (op. 26) ч. I, Andante con Variazioni, Var.V



Иногда кажется, что указанная А.Шнабелем аппликатура не имеет особого значения, но достаточно проиграть этот отрывок несколько раз, чтобы понять смысл.

Соната cis-moll N14 (op.27 N2) ч. I



Аппликатура А.Шнабеля позволяет плавно подвести 1-й палец к клавишам *"fis"* и *"e"*, избежать невольного акцента на этих звуках и добиться ровного *diminuendo.*

Аппликатурные принципы Шнабеля оформились в результате длительных творческих поисков. Они родились из особенностей его пианизма.

Исходя из анализа различных редакций, можно сделать следующий вывод, что любая аппликатурная редакция, которая вытекает из индивидуального подхода к исполнению, не удовлетворяет широких требований, как и не удовлетворяет требований редакция, которая не учитывает результата разучивания сочинения и предлагает лишь элементарные формы аппликатуры. В одних на первый план выступает исполнительское намерение и подчиняет себе техническое исполнение, в других целью аппликатуры становится совершенство технического исполнения.

Пианисты могут руководствоваться следующим замечанием Г.Г.Нейгауза: "Если изучать внимательно игру целого ряда крупных пианистов, то легко заметить, что аппликатуры различаются так же, как их педаль, "туше", фразировка, вообще — все исполнение" (5.С.161).

В воспитании и работе пианиста аппликатура, прежде всего, играет роль организующей исполнительство дисциплины, где от нее в значительной степени зависит относительное техническое совершенство.

Небрежное отношение к аппликатуре в работе учащегося отражает его невнимание к тексту, его неумение разобраться в фразировке, в мелодической линии, показывает, что он не представляет себе ясно технических задач. Такое отношение к аппликатуре становится препятствием в техническом совершенствовании, а в целом приводит к дилетантскому беспорядку. Педагогу следует не только наблюдать за правильностью аппликатуры и соблюдать предлагаемые изданием аппликатурные образцы, а, учитывая технические возможности ученика, искать для него на

основе музыкального текста целесообразные аппликатурные средства. Сравнения разных аппликатурных вариантов дает педагогу возможность использовать для каждого учащегося наиболее практичную аппликатуру.

Из учебно-методических соображений изучение бетховенских сонат дает пианисту неисчерпаемые возможности для исполнительства, являются ключом ко всей классической музыке. Изучение аппликатуры самого Бетховена безусловно необходимо, и если исполнитель необязательно ее использует в своей практике, то во всяком случае знание ее может служить отправной точкой для поисков собственной аппликатуры.

ПРИМЕЧАНИЯ

1. Бетховен Л., Сонаты для фортепиано., ред. Ф.Лямонда., Киев:Муз. Украина., 1969 .
2. Бетховен Л., 32 сонаты для фортепиано., ред. А. Шнабеля., М.:Музыка.,1983.
3. Бетховен Л.., Сонаты для фортепиано., Urtext.,. Будапешт., 1994.
4. Бетховен Л., Сонаты для фортепиано., ред. А.Б. Гольденвезера., М.:Музыка., 1965.
5. Нейгауз Г.Г., Об искусстве фортепианной игры., М.:Музгиз., 1958.

Ամփոփում

Հ.Հովսեփյանը «Լ.Բեթհովենի դաշնամուրային Սոնատների ապլիկատուրան» հոդվածում անդրադառնալով Ա.Շինդլերի, Ա.Շնաբելի, Ի.Մոշելեսի, Ֆ.Լիստի, Հ.Բյուլովի, Ա.Գոլդենվեյզերի, Կ.Մարտիենսենի խմբագրականների հեղինակների նշումներին, հոդվածագիրը մանրազնին նշում է յուրաքանչյուրի կատարած մեծ և նշանակալից աշխատանքը, հատկապես անհրաժեշտ օրինակներում նշելով ապլիկատուրայի ճիշտ հերթականությունն ու բացատրում դրանց առավելությունները, հարմարությունները:

Summary

YSC pedagogue, pianist Anahit Gharib Hovsepyan writes another article "The application of L.V.Beethoven's sonnets". The author again speaks about the above-mentioned authors' analysis. Starting with F.Lyumond's analysis A.H.Hovsepyan mentions each remarkable work in detail, writing about the fingers' right sequence and explaining their advantages.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ ՎԻԴՈԿԻ
դաշնակահարուհի,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դաշնամուրի ուսուցման ընթացքում, անհրաժեշտ է առանձնացնել սկզբնական շրջանի նշանակությունը: Յուրաքանչյուր մանկավարժ իր մանկավարժական գործունեության սկզբում այնպես չի աշխատում, ինչպես փորձառությունից հետո, եթե նույնիսկ իր աշխատանքը սկսելու ժամանակ եղել է բավարար չափով պատրաստված: Բայց իզուր չէ պրոֆեսոր Հ.Գ.Նեյհաուզը իր գրքում գրել, որ այնպիսի ասպարեզում, ինչպիսին արվեստին նվիրվելն է, ... միակ կայուն հիմքը միշտ կլինի սեփական ուժերով և սեփական փորձով ձեռք բերածը (1. էջ 22):

Իսկապես, յուրաքանչյուր ուսուցիչ իր ամենօրյա գործունեության ընթացքում պետք է նորից կարծես «բացահայտի» արդեն հայտնի ճշմարտությունը:

Փորձառու մանկավարժ, տաղանդաշատ ուսուցիչ Վ.Վ.Լիստովան միշտ ասել է, որ «մեթոդիկային վերաբերող գրքերի ընթերցումը և այլ մասնագետների մտքերին ծանոթանալը կարող է մեզ ձերբազատել լուրջ սխալներից, բայց չի սովորեցնի դասավանդել: Դրա համար պետք է մտածենք»*:

Մեր լարված և նպատակասլաց դարում առանձնապես կարևոր է գործը կատարել ոչ միայն հնարավորին չափ ավելի լավ, այլև հնարավորինս ավելի արագ փորձ ձեռք բերել: Պետք է փորձի փոխա-

* Լիստովայի Վ.Վ., Մանկավարժական սկզբունքների մասին ավելի մանրամասն տե՛ս (2.):

նակում կատարել, որպեսզի դաշնակահարի ձևավորման ընդհանուր նպատակին հասնելու առավել կարճ և լիարժեք ճանապարհը գտնենք:

Սովորեցնելու գաղտնիքը հասկանալու համար, պետք է պարզ գիտակցենք, թե ինչ պետք է սովորեցնենք, ինչպիսի արդյունքների պետք է հասնենք, ո՞րն է նպատակը, որի՞ն պետք է ձգտենք:

Ահա թե այդ մասին ինչ է գրել պրոֆեսոր Հ.Գ.Նեյհաուզը.

«Ես խորհուրդ եմ տալիս, որպեսզի հնարավորության սահմանում ուղղակիորեն, առանց ճանապարհից շեղվելու և ոչ էլ չափից ավելի դանդաղ անցնելով այդ փուլերը, ձգտել նպատակին, իսկ այդ նպատակը երաժշտական գրականության գեղարվեստորեն կատարումն է, համր նոտաները կյանքի կոչելը» (1. էջ 24):

«Գեղարվեստական կերպարների իրագործումը սկսվում է երաժշտության և երաժշտական գործիքի ուսումնասիրության առաջին իսկ քայլերից» (1. էջ 22):

«...Աշակերտին սովորեցնել հասկանալու կատարվող ստեղծագործության ձևը, թեմատիկ նյութը, ներդաշնակության և մեղեդայնության կառուցվածքը»:

Վերն ասվածը բավական է, որպեսզի պարզվի վերջնական նպատակը, և՛ դրան հասնելու ճանապարհին եղած խնդիրները: Առաջին իսկ քայլերից աշակերտի ունակությունները ներդաշնակ զարգացնել ոչ թե դաշնակահար, այլ երաժիշտ-դաշնակահար պատրաստելուն: Եվ դա առաջին հայացքից կարող է թվալ ժամանակի ավելորդ վատնում: Նրա հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունի նաև երգերի կատարումը, լսողությամբ ընտրությունը, դասատուի ղեկավարությամբ անսամբլում նվագելը, ռիթմիկ վարժությունները. այս բոլորի նպատակը աշակերտին երաժիշտ դաստիարակելու աշխատանքն է, որը կատարվում է դաշնամուրի ուսուցման առաջին դասից:

Ուսուցիչը պետք է ստեղծագործորեն մոտենա յուրաքանչյուր աշակերտի, յուրաքանչյուր որոշակի դեպքում:

Առաջին քայլերից պետք է.

- զարգացնել աշակերտի ներքին լսողությունը, սովորեցնել

նրան լսել այն, ինչ որ նվագում է, զարգացնել նրա ճաշակը և երևակայությունը.

- սովորեցնել նրան առաջին իսկ քայլերից մտածել յուրացնել տարրական երաժշտական գրագիտություն՝ ֆրազի, (երաժշտական արտահայտչականության), ռիթմի հասկացողություն և այլն: Աշխատանքի բոլոր այս բաժինները պետք է կատարվեն զուգահեռաբար և ուսուցման առաջին դասից սկսած:

Նպատակին պետք է հասնել ուղղակի և պարզ ձևով, յուրաքանչյուր աշակերտի հետ խոսելով նրա հասկացողության համար մատչելի լեզվով և միշտ հիշել, որ «երաժշտությունն ապրում է մեր մեջ», որ երաժշտությունն օրգանական երևույթ է և երաժշտության լեզուն միշտ հասկանալի է երաժշտականությամբ օժտված երեխային:

Անհրաժեշտ է մշտապես դիմել աշակերտի երաժշտական ներքին զգացողությանը և նրան ստիպել ստեղծագործությունը հասկանալ երաժշտության միջոցով (այլ ոչ թե վերացական դատողության միջոցով): Առաջին քայլերից աշակերտին պետք է սովորեցնել կատարման ժամանակ լսել իր նվագը: Չպետք է լինի ոչ մի դատարկ, ավելորդ նոտա, ուշադրություն դարձնել ձայնային և գեղարվեստական խնդիրներին:

Ուսուցիչը պետք է հեռանկարային հայացք ունենա աշակերտի նկատմամբ: Աշխատել «հեռավոր նշանառությամբ», այսինքն մտովի պատկերացնել աշակերտի զարգացման ուղին և այդ տեսանկյունից նրան ժամանակակից պահանջներ ներկայացնել: Չի կարելի արհեստականորեն արագացնել աշակերտի զարգացումը, հարկադրել ընդօրինակել, հարկավոր է ուղղություն տալ, միշտ դիմելով աշակերտի ներքին լսողությանը, այսինքն բնածին երաժշտականությանը: Պետք է դաստիարակել, բացատրել, կազմակերպել, արթնացնել: Ուսուցիչը քաջություն պետք է ունենա ելույթի ժամանակ լսելու իր աշակերտի թերությունները և առանց նրա վրա ճնշում գործադրելու, համբերատարությամբ սպասել, մինչև աշակերտը երաժշտականորեն զարգանա և նրա նվագը իմաստ և ցայտունություն ձեռք բերի: Աշակերտը երբեմն միանգամից չի հասկանում ինչ են իրենից պահանջում, բայց երբ սկսում է հասկանալ, գործն

առաջ է ընթանում «ունեցածը կիրառելու» սկզբունքով:

Ուսուցման սկզբում ոչ միայն օգուտ, այլ ավելի շուտ կվնասի նոտային տեքստում արված նշանների առատությունը (դինամիկ և այլ նշաններ): Հենվելով «սկզբում պետք է ճանաչել, ապա անվանել» սկզբունքի վրա, պետք է հասնել նրան, որ աշակերտը սկզբից լսի երաժշտության հիմքում ընկած շարժման կամ տրամադրության փոփոխությունը (հանդարտություն կամ հուզում, ուրախություն կամ տխրություն), ապա նոտաներում սովորի տեսնել ագոգիկ կամ դինամիկ նշանները, որոնք օգնում են նրան կարդալ երաժշտության մեջ եղած բովանդակությունը, այլ ոչ թե կողմնակի միջամտությունը:

Հենց սկզբից աշակերտի մեջ պետք է դաստիարակել կատարողական պատասխանատվություն: Երաժշտությունը, ինչպես ամեն մի արվեստի ճյուղ, պետք է հոգեկան բավականություն պատճառի: Այն պետք է շփվի առաջին իսկ վայրկյանից, երաժշտություն սովորելու առաջին քայլերից:

Հենց սկզբից աշակերտին պետք է հնարավորություն տալ հասկանալու երաժշտական ձևի սկզբնական տարրը՝ ֆրազի երաժշտական արտահայտությունը: Այնուհետև պետք է սկսել երաժշտական մտածողության տրամաբանության դաստիարակումը: «Երաժշտական արտահայտություն» հասկացողությունը աշակերտը ավելի շուտ պետք է հասկանա, քան այն կանվանի այդ անունով: Երաժշտական արտահայտությունը (ֆրազը) կարելի է անվանել «երաժշտական տող», ըստ երգի խոսքերի նմանության: Աշակերտը սովորում է լսողությամբ որոշել ֆրազը, ապա ցույց է տալիս նաև նոտաներում: Աշակերտն այն կհասկանա իր ձևով, բայց ճշմարտացիորեն կհասկանա և չի կարող չհասկանալ, քանի որ երաժշտության լեզուն օրգանական է, տրամաբանական, ինչպես ժողովրդական բանահյուսությունում:

Հետևյալ կարևոր պարագան ռիթմիկայի զարգացումն է: Ռիթմիկ խնդիրները պետք է դնել առաջին քայլերից, հասնել դրանց լուծմանը՝ դինամիկայի հետ մեկտեղ: Անհրաժեշտ է հասնել գեղարվեստորեն լիարժեք կատարման, անկախ, թե ինչքանով այդ կհաջողվի:

Պետք է զարգացնել աշակերտի երաժշտականությունը, սովորեցնել հասկանալ երգի, երաժշտության իմաստը և բնույթը, որպեսզի կարողանա արտահայտել կատարման մեջ: Երաժշտության իմաստը պարզելուն, երաժշտական կերպարը ճանաչելուն օգնում են պատկերավոր, վառ փոխհաբերությունները, հաջող կերպարները և փոխհարաբերություններն արթնացնում են աշակերտի երևակայությունը: Շատ է օգնում նոտաների տակ բառերի տեղադրումն այնտեղ, որտեղ տեքստում դրանք չկան: Բառերը հուզականորեն են ներգործում աշակերտի վրա և օգնում նրան իր հույզերն արտահայտել երաժշտության միջոցով:

Մատներն ավելի արագ չպետք է շարժվեն, քան թելադրում է ուղեղը և լսել՝ ականջները: Հենց որ վերանում է լսողության վերահսկումը (առանձնապես արագ տեմպով նվագելու ժամանակ, եթե դրան ավելանում է նաև փորձառության պակասը և նյարդային համակարգի անհավասարակշիռ վիճակը), անմիջապես կատարումը դառնում է աղավաղված, նյարդային և իմաստազուրկ:

Այս տեսակետից լսողական վերահսկումը կարծես կատարում է դիրիժորի պարտականություն, ղեկավարում է մտածելու և նվագելու գործընթացները և դրանք հավասարակշռում: Լսողության այդ վերահսկումը կարևոր է նաև ամենօրյա աշխատանքում և պետք է անհրաժեշտության դեպքում արտահայտվի հետևյալ ձևով՝ գտնել անհրաժեշտ հնչողությունը, դինամիկան, արտաբերումը, լսել կատարման ռիթմիկ հավասարությունը, ընդգրկել երաժշտական ծավալուն կառուցվածք, ինչպես նաև ստեղծագործությունն ամբողջապես:

Լսողական վերահսկումն աննպատակ է առանց երաժշտական մտածողության հետ սերտ, փոխադարձ կապի, որն աշակերտին օգնում է իրականացնել իր կատարողական մտահղացումը: Սովորողներին անհրաժեշտ է մտածել, վերլուծել հանդիպող տեխնիկական դժվարությունները և ճանապարհ գտնել դրանք վերացնելու համար: Չի կարելի անվերջ, երկար ժամանակ և աննպատակ կրկնել միևնույն անհարմար տեղը, չիմանալով այդ անհարմարության պատճառները:

Ուսուցման առաջին քայլերից աշակերտին պետք է մասնակից դարձնել արագ տեմպերին: Աշակերտը սովորում է լսել արագ տեմպ, որն առաջին նախադրյալն է հետագայում մատների վարժվածության զարգացման համար: Բացի այդ, հարմարվելով արագ տեմպին, աշակերտն ընտելանում է «հարմարվողականաթյուն ընթացքի ժամանակ» և սովորում է նվագել ազատ ձեռքերով:

Արագ տեմպով նվագելը հետաքրքիր և դժվար աշխատանք է: Արագ տեմպը հնարավորություն է տալիս ընդգրկել ստեղծագործությունն ամբողջությամբ և առավել ցայտունորեն բացահայտել կատարողի անհատականությունը:

Դանդաղ տեմպից արագին անցնելը առաջացնում է նոր դժվարություններ:

Արագ տեմպով նվագելու դեպքում ստուգվում են աշակերտի ֆիզիկական դիմացկունությունը, նրա կազմակերպվածությունը, միաժամանակ մտածելով և լսելով նվագել կարողանալը: Դրա համար արագ տեմպով նվագելուն պետք է պատրաստվել շատ լավ և ոչ մի դեպքում չափից ավելի չբարդացնել ծրագրի դժվարությունը, եթե աշակերտը դրան չի նախապատրաստվել, որովհետև այդպիսի դժվարություններով և ուժից վեր խնդիրներով տարվելու հետևանքով առաջանում են մկանների գերլարվածություն և ձեռքերի հիվանդություն:

Ուսուցման ընթացքում պարտադիր են լսողության հսկողությունն ու պահանջկոտությունը: Շատ կարևոր է առաջին քայլերից աշակերտին սովորեցնել երաժշտության մեջ ուշադրությամբ լսել դաշնամուրի ձայնի գեղեցկությունը և տևողությունը, դրանով իսկ ձևավորելով նրա լսողական զգացողությունը: Այդ պատճառով, պարապմունքների ընթացքում ուսուցիչը պետք է օգտագործի մեթոդապես ճիշտ տերմինոլոգիա: Օրինակ՝ երկար տևողության նոտաներ նվագելիս աշակերտի ուշադրությունը բևեռել, որ երկար նոտան պետք է վերցնել ավելի խորը, որպեսզի այն ավելի երկար հնչի (այլ ոչ թե «պահել» երկարատև), *Legato* (առանց ընդհատման) նվագելիս պետք է միացնել ձայները, այլ ոչ թե մատները, դաշնամուրային անսամբլում (չորս ձեռք) նվագելիս պետք է լսել դադարը

(պաուզա):

Հետագայում, պետք է նվագել «ամուր ձայնով», և ոչ թե «ամուր մատներով», պեդալը (ոտնակը) օգտագործել լսողության, և ոչ թե տեսողական ընկալման միջոցով և այլն: Սովորեցնել աշակերտին տեսնել այն ամենը, ինչ որ կա նոտաներում, և միայն այդ ժամանակ սկսել նվագել: Առաջին վերլուծության ժամանակ բոլորը լսել կարողանալը նախադրյալ է հետագայում թերթից նոտաներ կարդալու համար:

Ցանկալի է վերլուծությունը կատարել միանգամից, երկու ձեռքով: Առանձին, յուրաքանչյուր ձեռքով նվագել պետք է սովորեցնել երկու ձեռքով վերլուծելուց հետո, այլ ոչ թե միանգամից վերլուծելու ժամանակ: Այս եղանակն ավելի արագ է զարգացնում աշակերտին, թեև կարող է սկզբից դժվար թվալ: Աշակերտին տրվող բացատրությունները պետք է լինեն պարզ, վարժությունները՝ կարճ:

Ձեռքերի դրվածքի մասին խոսելը դժվար է, քանի որ ամեն մի ուսուցիչ աշակերտին կերտում է իր նման, սակայն չպետք է մոռանալ ընդհանուր սկզբունքների մասին: Դրանք մոտավորապես այսպիսին են՝

- մարմնի ընդհանուր ազատությունը,
- ազատ ձեռքի ծանրության զգացողությունը,
- առաջին մատի ազատությունը,
- ճկուն և ակտիվ դաստակ:

Ընդ որում՝ ձեռքերի ազատությունը մեծապես կախված է այլ (երաժշտական և հոգեբանական) պատճառից: Դրա համար աշակերտին պետք է հենց սկզբից զարգացնել բոլոր առումներով: Տեխնիկայի վրա աշխատելը չպետք է և չի կարող առանձնանալ կերպարային կողմի վրա աշխատելուց: Այն, ինչ նվագում է աշակերտը, պետք է լինի երաժշտության տարր: Նույնիսկ վարժությունները չպետք է նվագել ոչ երաժշտական ձայնով:

Ինչում է կայանում սկզբնական աշխատանքը պիանիզմի վրա: Առաջնահերթ խնդիր է՝ սովորել երգեցիկ, խոր ձայն ստանալու և յուրացնել ստեղնաշարի վրա առաջին շարժումները, սկզբում *non tegato,* իսկ այնուհետև *legato:* Քանի որ աշակերտի տեխնիկական

զարգացման համար պետք է ընթանալ լսողական զգացողությունների ճանապարհով. չափազանց կարևոր է աշակերտին դաստիարակել յուրաքանչյուր հնչյուն մինչև վերջ լսելու ունակությունը:

Անհրաժեշտ է ուսուցման առաջին քայլերից հետևել, որպեսզի աշակերտը նվագի բոլոր մատներով, հասնի ձեռքի լրիվ ազատման՝ այն վերցնելու ժամանակ: Կան բնությունից կաշկանդված աշակերտներ: Նրանց աստիճանաբար պետք է ուղղել, ազդելով նրանց հոգեբանության վրա և ընդհանուր երաժշտական զարգացմանը:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Աշակերտի ակտիվության, ստեղծագործական մտածողության ինքնուրույն դաստիարակումը մանկական երաժշտական դպրոցների խնդիրներից մեկն է՝ գեղագիտական դաստիարակության առումով: Դպրոցում սովորելիս ձևավորվող ինքնուրույն գործողությունների եղանակները օգնում են սովորողներին ստացած հմտությունները ապագայում կիրառել գործնականում: Դրա համար շատ կարևոր է աշակերտներին սովորեցնել ինքնուրույն վերլուծություններ և ընդհանրացումներ կատարել: Այստեղ մեծ դեր ունի երաժշտական ստեղծագործության իմաստավորումը, այն սովորելու և կատարելու ժամանակ ինքնուրույն գործողությունների տարբեր եղանակների օգտագործումը:

Ներկայումս, երաժշտական գործունեության մեջ սովորողների ինքնուրույնության ձևավորման հարցի վերաբերյալ հրապարակված են մեծ թվով գրքեր և մեթոդական ձեռնարկներ: Ակայն շատ հեղինակներ նշում են, որ մանկավարժական պրակտիկայում քիչ չեն այն դեպքերը, երբ սովորողները, վերջացնելով երաժշտական դպրոցը, իսկ երբեմն էլ միջնակարգ երաժշտական ուսումնական հաստատությունը, նվագելով բավական բարդ ծրագրեր, ամենևին նախապատրաստված չեն լինում ինքնուրույն աշխատանքի:

Ուսումնական գործընթացում տարբերում են երկու կողմ, որոնք միմյանց հետ սերտորեն կապված են և դիալեկտիկորեն մեկն անցնում է մյուսին:

- ուսուցչի՝ արվեստի նկատմամբ իր վերաբերմունքը, իր գիտե-

լիքները, հմտությունները, կատարողական աշխատանքի ձևերը սովորողներին հաղորդելը,

- աշակերտի անհատական լավագույն տվյալների հայտնաբերումն ու զարգացումը: Ընդգծվում է, որ ուսուցչի գլխավոր խնդիրը և մեծ արվեստը այնպիսի դաստիարակության մեջ է, որի շնորհիվ նրա երաժշտական ձգտումներն ու տեխնիկական կարողությունները ներդաշնակության հետ կազմեն մեկ ամբողջություն:

Աշակերտը պետք է հասկանա, թե ուսուցիչն ինչ է ուզում և կարողանա ինքնուրույն իրականացնել իր մտադրությունները: Աշակերտին գիտելիքներ հաղորդելով, զարգացնելով նրա կատարողական հմտությունները, ուսուցիչը պետք է կիրառի պարապմունքների այնպիսի ձև, որն աշակերտից պահանջի գիտակցական ջանքեր, նրան տրամադրի մտածել և փնտրել ոչ միայն ընկալելով, այլև գիտելիքները վերամշակելով իր անձնական փորձառության համապատասխան, այսինքն ստեղծագործաբար դրանք յուրացնելով:

Այսպիսով, երաժշտական ուսումնական գործընթացում սովորողի ինքնուրույնության ձևավորման խնդիրը անհանգստացնում է շատ երաժշտագետների և մանկավարժությամբ զբաղվողների: Չնայած այդ հարցի նկատմամբ եղած մեծ հետաքրքրությանը, մինչև այժմ միասնական կարծիք գոյություն չունի այդ հարցի քննարկման մեջ: Այսպես, որոշ հեղինակներ ինքնուրույնություն ասելով հասկանում են, երբ աշակերտը կարողանում է գրագետ, առանց ուսուցչի օգնության, հասկանալ նոտային տեքստը, մյուսները՝ երաժշտական ստեղծագործությունը ստեղծագործաբար իմաստավորելու և հուզումնալից վերարտադրելու կարողությունը, երևի յուրաքանչյուր հետազոտող ճիշտ է տվյալ նեղ խնդրի հարցում, որն ինքը վճռել է, իրոք, առանց աշակերտի տարրական գրագիտության, որոշակի գիտելիքների ու կարողությունների հնարավոր չէ խոսել երաժշտական ստեղծագործության վրա ինքնուրույն որևէ աշխատանքի մասին: Արդարացի է նաև այն, որ առանց լսողական վերահսկողության և երաժշտալսողական պատկերացումների, կատարողի գործընթացն անիրականանալի է: Հնարավոր չէ նաև երաժշտական ստեղծագործության նկատմամբ ստեղծագործական

մոտեցումը: Ինքնուրույնության առկայությունը և, հետևաբար, նրա դաստիարակումը հանդիսանում է անհրաժեշտ տարր երաժշտի կատարողականի գործում:

Ինքնուրույն գործողությունների եղանակները հանդես են գալիս անհատապես:

Ստեղծագործությունը վերլուծելը նպաստում է ինքնուրույն մտածողության զարգացմանը: Վերլուծության տարրը մենք օգտագործում ենք ստեղծագործության վրա աշխատելու բոլոր փուլերում: Ստեղծագործության հետ սկզբնական ծանոթության ժամանակ նրա վերլուծությունն սկսվում է պիեսի առաջին անգամ ուսուցչի նվագելուց անմիջապես հետո, որի դեպքում աշակերտը ստեղծագործության մասին ստանում է ամբողջական պատկերացում: Աշխատանքի տվյալ փուլում, երբ աշակերտը ամեն անգամ ստեղծագործությունը լսելուց առաջ ստանում է որոշակի առաջադրանք, կարելի է խնդիր դնել ձևավորելու ինքնուրույն գործողությունների եղանակներ, որոնք ուղղված կլինեն.

- ստեղծագործության ելևէջային (ինտոնացիոն) թեմատիկ բովանդակության ընկալումը,
- բնույթի, տեմպի, ռիթմիկ առանձնահատկությունների, դինամիկ զարգացման, ձևի վերլուծության և այլնի բացահայտումը,
- ստեղծագործության բանավոր մեկնաբանության:

Նոտային թերթից կարդալու կանոնավոր պարապմունքները ձևավորում են գործողությունների եղանակներ, որոնք ուղղված են անծանոթ երաժշտական տեքստը արագ և որակով կարդալու կարողություններ դաստիարակելուն:

Ինքնուրույն գործողությունների եղանակների ձևավորման մեջ համակարգումը լավ արդյունք է տալիս, սովորողները սկսում են ավելի ճիշտ և իմաստավորված երևան բերել ստեղծագործության բնույթը: Նրանց համար ուղեցույց են դառնում հեղինակային նշագրումները: Նվագելը դադարում է կրել նոտաների ուղղակի կատարման բնույթ, այն իմաստավորվում է: Նշագրումների ներդաշնակության վերլուծությունը, դինամիկ կառուցվածքը օգնում են աշակերտներին առավել նրբորեն թափանցել հեղինակի մտահղացում-

ների մեջ:

Սովորողների ինքնուրույն գործողությունների դրսևորումների դիտարկումների փորձը բացահայտում է, որ նրանցից շատերի համար մեծ մասամբ աշխատանքը հանգում է ստեղծագործությունը անթիվ և հաճախ անմիտ սկզբից մինչև վերջ նվագելուն: Այդ սովորության դեմ պայքարելու դժվարությունը հաճախ խորանում է, հավանաբար, այն պատճառով, որ արդեն ստեղծագործության նախնական վերլուծության դեպքում աշակերտին գրավում է արագ նվագել, սկզբից մինչև վերջ: Բազմիցս մեխանիկորեն կրկնելու հետևանքով սխալները շերտավորվում են և ամրանում:

Այսպիսով, վերն ասվածից կարելի է հետևյալ եզրակացությունն անել, աշակերտի ասոցիատիվ մտածողությունը, երաժշտալսողական պատկերացումները անմիջականորեն կախված են միմյանցից և գտնվում են ուղղակի կապի մեջ: Որքան աշակերտի ասոցիատիվ մտածողությունը և երաժշտալսողական պատկերացումները ավելի զարգացած են, այնքան նա մեծ ինքնուրույնություն կարող է դրսևորել աշխատանքում:

Հարկ է ընդգծել, որ ինքնուրույնության ձևավորման վրա աշխատանքը զանազան խնդիրների համակարգ է: Դրանցում զուգահեռաբար պետք է վճռվեն երաժշտական մտածողության զարգացման, լսողական ակտիվության, հետաքրքրության բոլոր հարցերը: Միայն այդ համակարգի հիմքի վրա է դաստիարակվում գիտակցական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, ձևավորվում է սովորողների ինքնուրույնությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Нейгауз Г.Г., Об искусстве фортепианной игры., М.:Музыка., 1961.
2. Макуренкова Е., О педагогике В.В.Листовой., М.:Музыка., 1971.

Summary

YSC pedagogue, pianist Naira Vidok Harutsunyan introduces the article "Musical upbringing and independence forming in piano classes". The author speaks about new starting musicians' musical upbriging, teacher's role in their independence forming.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ ՎԻԴՈԿԻ
դաշնակահարուհի,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Մանկավարժության մեջ հայտնի է ուսուցման երեք հիմնական ձև՝ անհատական, սահմանված դասարանային, դասախոսական՝ սեմինար: Յուրաքանչյուր ձևն ունի իր ծագման պատմական նախադրյալները: Ուսուցման անհատական ձևը գերիշխող էր դեռևս անտիկ մանկավարժության մեջ: Մի շարք հետազոտողներ մեր ժամանակներում էլ շարունակում են պարապմունքների անհատական ձևը համարել մանկավարժական գործընթացի կազմակերպման կատարյալ սխեմա: Իր բնույթով իսկ, այն պայմանավորում է դասախոսի և ուսանողի շփումը՝ վերջինիս զգալի ակտիվության դեպքում: Նման փոխազդեցության պարագայում ուսանողը չի կարող մնալ միանգամայն պասիվ վիճակում, քանի որ այդ դեպքում ուսուցման գործընթացը կդառնա անհնար:

Պարապմունքների անհատական ձևի պայմաններում լավ է գործում ուսանող - դասախոս փոխադարձ կապը: Այսպիսով, հնարավորություն է ստեղծվում ժամանակին հաղթահարել ուսանողի մոտ ծագած դժվարությունները, կանոնավորել նրա գործունեությունը մանկավարժական իրավիճակից ելնելով, փոխել ուսումնական նյութի անցման ժամկետները, իսկ այդ ամենը նպաստում է նրա առջև դրված խնդիրների հաջող իրականացմանը:

Երաժշտական գործիք՝ մասնավորապես դաշնամուր նվագել սովորեցնելը տեղի է ունենում անհատական պարապմունքների ձևով և այն անհատական ուսուցման ձևի դասական օրինակ է (1. էջ 21-23): Ուսանողի հետ անմիջական շփումը դասախոսին հնարավորություն է տալիս որոշել նրա նախնական երաժշտական մակարդակը, մտածելակերպը, անհատական առանձնահատկությունները,

հետաքրքրությունը, նրա առջև դնել որոշակի խնդիրներ:

Ելնելով թե՛ ուսանողի և թե՛ դասախոսի անհատականությունից՝ դաշնամուրի յուրաքանչյուր դաս ունենում է իմպրովիզացիայի ինչ-որ մի մասնիկ: Սակայն դասախոսը, պահպանելով իմպրովիզացիան մասնավոր դեպքերում (երբեմն էլ ընդհանուր առմամբ), պետք է կարողանա դասն անցկացնել ըստ ուսումնական ծրագրի: Սովորաբար դասն սկսվում է տնային աշխատանքի ստուգումից, որպեսզի ուսանողը նրա հանդեպ անփույթ չվերաբերվի: Դասատուն հակիրճ բնութագրում է կատարումը և գնահատում այն:

Սկսելով դասարանային աշխատանքը ստեղծագործության կատարումից՝ շատ կարևոր է գտնել հիմնական թերությունները աշխատանքի ընթացիկ փուլում և չհրապուրվել ավելորդ մանրամասնությունների աշխատանքով: Ուսանողի ուշադրությունը չպետք է ծանրաբեռնել բազմաթիվ նկատողություններով, քանի որ նա կարող է անտեսել գլխավորը: Դասարանում պետք է յուրացվեն կամ ցույց տրվեն ինքնուրույն աշխատանքի համար առավել դժվար հատվածները: Դա պետք է օրինակ ծառայի տնային աշխատանքի ճիշտ կազմակերպման համար: Դասից դաս պետք է ժամանակ գտնել թերթից կարդալու, վարժությունների ու գամմաների վրա աշխատելու համար:

Ուսանողի տնային առաջադրանքը պետք է լինի հնարավորինս հստակ, հատկապես ցածր կուրսերում (1. էջ 42-48): Այդ դեպքում դասախոսի գրառումները դառնում են ուղեցույց տնային աշխատանքի համար: Դասատուն պետք է վստահ լինի, որ ուսանողը հասկացել է, թե ինչի և ինչպես պետք է աշխատի: Գնահատականը նշանակելիս պետք է բացատրել ուսանողին, թե ինչու է նա այն ստանում: Դաշնամուրային մանկավարժության մեջ ենթադրվում է ցուցադրման երկու եղանակ՝ մանկավարժական և կատարողական: Մանկավարժական ցուցադրումն ուղեկցվում է կատարողականության հնարների բանավոր վերլուծությամբ և դրանց յուրացման եղանակների ցուցումով: Առավել ակներև կատարողականության հնարները կարող են փոքր-ինչ չափազանցված ձևով ցուցադրվել: Կատարողական ցուցադրումը ավելի շատ ուղղված է ու-

սանողի հուզական ապրումներին՝ նրա պատկերացման մեջ գեղարվեստական կերպարը որոշակի դարձնելու համար:

Սակայն կան դասախոսներ, ովքեր խուսափում են ուսանողի հետ պարապելիս կիրառել ցուցադրական մեթոդը՝ համարելով, որ այն կարող է հանգեցնել իրենց նվագի մեխանիկական ընդօրինակմանը՝ ստեղծագործական մոտեցումից զրկված կատարման: Անմիջական, անձնապես դրական է (պոզիտիվ) ցուցադրումը մանկավարժական ներգործության պատասխանատու փուլը, այն պետք է լինի խիստ պրոֆեսիոնալ: Սովորողը ոչ միայն լսում, այլև «տեսնում» է դասախոսի նվագը, ընդօրինակում կատարողական շարժումները: Աշխատանքի միջին փուլում անհրաժեշտ է հատվածների ցուցադրումը:

Խոսքը (բանավոր) ներգործության մեթոդներին վերաբերում են ամեն տեսակի բանավոր բնութագրումները, կերպարի մասին բացատրություններն ու կատարված մեկնաբանաթյունները:

Մեկնաբանությունների, բացատրությունների, նկատողությունների մեթոդը առաջատար տեղ է գրավում երաժշտական մանկավարժության մեջ: Այստեղ կարող են լինել և՛ զրույցներ երաժշտության, արվեստի՝ իրար հարակից տեսակների մասին և՛ բացատրություններ ու մեկնաբանություններ, և՛ վերլուծություններ ստեղծագործությունների մասին, ուսանողի ինքնուրույն կատարման վերաբերյալ տպավորություններ, և՛ գնահատում և այլն:

Մանկավարժական խոսքը պետք է ունենա երեք հատկանիշ՝ համառոտություն, պատկերավորություն և հստակություն:

Ուղղելու ընդհատումների մեթոդը խորհուրդ է տրվում աշխատանքի սկզբնական փուլում, երբ դեռ թույլ են տրվում տարրական սխալներ: Եզրափակիչ փուլում այդ մեթոդը չարաշահել չարժե, որովհետև ուսանողը դրանով կկորցնի կատարման ամբողջականության զգացողությունը, ուշադրության կենտրոնացումն ու ակտիվությունը և կատարումը կտուժի:

Երևակայական ունկնդրի մեթոդը սովորաբար նպատակահարմար են գտնում կիրառել վերջում, բեմ դուրս գալուց առաջ: Դրա իմաստն այն է, որ դասարանում կամ նույնիսկ տանը, կատարումնե-

րից մեկը պետք է համերգային բնույթ հիշեցնի: Դա հոգեբանորեն նախապատրաստում է ուսանողին՝ տեսանելի ունկնդրի առաջ ելույթ ունենալու:

Ոմանք գտնում են, որ նյութը սովորելու ընթացքում անգամ օգտակար է պատկերացնել ունկնդրին: Ենթադրելով նրա ներկայությունը՝ կատարման ժամանակ հարկ է հասնել ինտոնացիոն և մետրառիթմական առավել արտահայտչականության, ավելի պարզորոշ սահմանել ֆակտուրայի գլխավոր և երկրորդական շերտերը, հստակեցնել ոտնակի օգտագործումը:

Ուսանողի տնային աշխատանքի կազմակերպումը ուսումնական գործընթացի կարևոր օղակն է: Հաճախ սխալ կազմակերպված տնային աշխատանքը խաթարում է դասախոսի դասարանային ամբողջ աշխատանքը: Ուսուցիչը պետք է հնարավորինս ավելի ակտիվորեն իրականացնի տնային աշխատանքի հսկողությունը: Ցանկալի է ուսանողի հետ միասին կազմել օրվա պլանը ելնելով նրա անհատական պլանից: Դաշնամուրային պարապմունքներին ավելի լավ է հատկացնել առավոտյան ժամերը:

Անհատական պարապմունքները դաշնամուրի դասարանում չպետք է հակասության մեջ մտնեն ուսումնական գործընթացի պարբերականության և պլանաչափության հետ: Դաշնամուրի դասարանի դասախոսը պարբերաբար աշխատանքի անհատական ծրագիր է կազմում յուրաքանչյուր ուսանողի համար: Դա չափազանց պատասխանատու աշխատանք է դասախոսի համար: Մի կողմից՝ այն պետք է արտացոլի տվյալ փուլում ուսանողի զարգացման առանձնահատկությունները, իսկ մյուս կողմից՝ ուրվագծի դաշնակահարի հետագա աճի հեռանկարը:

Հաջող կազմված աշխատանքային պլանից մեծապես կախված է ուսանողի հաջողությունը համերգի կամ քննության ժամանակ: Այդ պատճառով էլ փորձառու մանկավարժը չի թողնում այդ աշխատանքը վերջին օրերին, այլ դեռևս նախորդ ծրագրի վրա աշխատելիս ուրվագծում է նորը: Մասնավորապես կարելի է նախապես ուսումնասիրել առաջիկա նվագացանկի առավել դժվար հատվածները: Ծրագիրը կազմելիս դասախոսը պետք է հաշվի առնի, թե ինչ-

պիսի համերգային ելույթներ են նախատեսվում կիսամյակում (քննություններ, ունկնդրումներ, համերգներ) և որոշի, թե ինչի վրա է անհրաժեշտ առաջին հերթին աշխատել:

Կիսամյակի ծրագրերը կազմվում են ոչ միայն սկսնակների, այլ նաև. այն ուսանողների համար, որոնք նոր են ընդունվել սովորելու տվյալ դասախոսի մոտ: Ընդունված կարգի համաձայն՝ ծրագրի մեջ մտնում են մեծակտավ երկեր, տարբեր բնույթի պիեսներ, պոլիֆոնիկ ստեղծագործություններ և նվագակցություն: Թերթից կարդալու համար ընտրված ստեղծագործություններում նշվում է լոկ դրանց բարդության աստիճանը: Անհատական պլանի մեջ մտնող մի քանի ստեղծագործություն պետք է անցնել ծանոթացման կարգով:

Սկզբնական ուսուցումը ամենապատասխանատու փուլն է երաժիշտ դաստիարակելու գործում: Այդ փուլում թույլ տրված սխալները որպես ծանր բեռ ընկնում են ուսանողի՝ երաժշտի ապագայի վրա: Թերևս, երաժշտական զարգացման համար ամենավտանգավոր ձևական մանկավարժության «արագ մակերեսային վարժեցման» ուղին է: Այն ուսանողները, որոնց դասավանդում են նման եղանակով, շատ շուտ կորցնում են հետաքրքրությունը երաժշտության նկատմամբ. նրանք՝ որպես կանոն չեն կարողանում իրենց լսել:

Առաջին հանդիպումը ուսանողի հետ պարտադիր չէ դասի վերածել: Կարելի է խոսել տարբեր թեմաների շուրջ, որոշել նրա ընդհանուր զարգացման աստիճանը և նախապատրաստվածությանը, երաժշտության նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Դաշնամուրային մանկավարժության պատմության մեջ եղել է մի երկարատև շրջան, երբ ուսուցման տեսության և պրակտիկայի հիմնական խնդիրը համարվել է ուսանողի կատարողական տեխնիկայի զարգացումը, ընդ որում, այդ հասկացության ամենանեղ իմաստով: XIX-րդ դարի վերջին դաշնամուրային մանկավարժությունը հաղթահարում է մեխանիկական դպրոցի թերությունները և հանգում դաշնամուրային ուսուցման ընթացքում լսողական դաստիարակության դերի կարևորությանը: Երաժշտական լսողությունը և մոտորիկան ոչ միայն պետք է բավականաչափ զարգացած լինեն

յուրաքանչյուրն առանձին-առանձին, այլ նաև պետք է համակարգված լինեն միմյանց հետ, ըստ որում լսողության դերը պետք է լինի առաջնային:

Մեր ժամանակներում ճիշտ կազմակերպված կատարման գործընթացում լսողական պատկերացման առաջնության և շարժողական-մոտորային ակտի երկրորդականության գաղափարը գերակշռող է և հիմնովին մտել է դաշնամուրային մանկավարժության մեջ: Սակայն այսօր էլ ոչ բոլոր դասախոսներին է հաջողվում հաղթահարել ուսանող դաշնակահարների երաժշտալսողական դաստիարակության խնդրի լուծումը: Ստեղծագործության վարպեստ կատարման համար անհրաժեշտ է շարժումների որոշակի ավտոմատացում («մատների հիշողություն»), որն ազատում է ավելորդ ծանրաբեռնվածությունից՝ ավելի բարդ գեղարվեստական խնդիրների լուծման համար:

Խոսենք դաշնամուրային դասարանում լսողական դաստիարակությունը թուլացնող ևս մեկ պատճառի մասին, որը կապված է ուսանողի անհատական ծրագիրը կազմելու սկզբունքի և այն իրականացնելու հետ: Դասարանում ուսուցանվող նյութերի մեծ մասը (իսկ երբեմն բոլորը) ներկայացվում են հաշվետու ցուցադրման, որի արդյունքից է կախված ոչ միայն ուսանողի, այլ նաև. դասախոսի հաջողությունը: Ուսուցիչը, ջանալով խուսափել հաշվետու ցուցադրման ժամանակ ամեն տեսակ անակնկալներից, ուսանողին խորհուրդ է տալիս զբաղվել երկարատև մոտորային սերտումով: Դասարանում աշխատում են մինչև հանդիսատեսի հետ հանդիպելը, ամեն ինչ այնքան ամրապնդել, կատարումը ծուլել այնպիսի ամուր ձևի մեջ, որ ելույթի ժամանակ բեմական անակնկալների վտանգը հասցվի նվազագույնի, ինչից, թերևս նրանք ամենից շատ են վախենում: Այսպիսին են կատարման կաղապարված սուբյեկտիվ պատճառները, որոնք բացասաբար են ազդում լսողության զարգացման վրա: Այդ խմբի լուծումը հետևյալն է. որոշ ստեղծագործություններ պետք է անցնել միայն դասարանում, իսկ քննության ժամանակ ավելի ճիշտ ձևով գնահատել կատարումը՝ պատահական վրիպումների պատճառով չիջեցնել գնահատականը, և

դրանով իսկ չդրդել կատարման միօրինականացման:

Երաժշտական լսողությունը (2. էջ 22-25) կազմվում է մի շարք բաղադրամասերից, որոնց մեջ առավել կարևորներն են՝ հնչյունաբարձրության լսողությունը, մեղեդիական լսողությունը, պոլիֆոն լսողությունը, հնչերանգային-դինամիկ լսողությունը և ներքին լսողությունը: Կա այն կարծիքը, որ հնչյունաբարձրության լսողությունն ավելի լավ է զարգացած լարայինների ու վոկալիստների մոտ, որոնք նվագելու ժամանակ անընդհատ «փնտրելով գտնում են» հնչյունի ճշգրիտ բարձրությունը (այսինքն՝ սա հենց այն դեպքն է, երբ ընդունակությունը զարգանում է նվագելու ընթացքում), իսկ դաշնակահարը, որը նվագում է հնչյունի պատրաստի բարձրություն ունեցող գործիքով, տվյալ ընդունակությունը ավելի վատ է զարգանում:

Դաշնակահարի հնչյունաբարձրության լսողության զարգացումը կապված է նաև կատարման ժամանակ վոկալ մոտորիկայի զուգընթաց գործելակերպի հետ: Բոլոր դասախոսներին ծանոթ է այն երևույթը, երբ ուսանողը ձայնակցում է իր կատարումը, որն ուժեղանում է հուզական ոգևորության ժամանակ: Ուսուցիչները պայքարում են այդ բացասական, նվագին խանգարող երևույթի դեմ, ձգտում են բարձրաձայն ձայնակցումը տեղափոխել մեղեդիական նկարագրի ներքին ձայնակցման ոլորտ: Այդպիսի ներքին ձայնակցումն այլևս չի խանգարում լսել մնացած ամբողջ ֆակտուրան:

Մեղեդիական լսողությունը (1. էջ 84-90), ինտոնացիոն առումով արտահայտիչ ինտերվալների գումարը լսելու ընդունակություն չէ, այլ առաջին հերթին, ամբողջի ընդգրկումն է, որտեղ յուրաքանչյուր ինտոնացիան դիտվում է ոչ թե առանձին, այլ ամբողջի մեջ նրա ունեցած նշանակության տեսակետից: Դա երբեմն անվանում են մեղեդիական գծի զարգացման տրամաբանություն, կամ ֆրազավորման վարպետություն, կամ էլ՝ հորիզոնական մտածողություն:

Մեղեդիական լսողությունը կարող է շատ լավ զարգանալ երգային բնույթի ստեղծագործությունների վրա աշխատելիս: «Դաշնամուրով երգելու» դաշնամուրային ավանդույթի հունով ուսանողին դաստիարակելը հուսալի ճանապարհ է դաշնամուրի մասնագիտա-

կան դասարանում մեղեդիական լսողության զարգացման համար: Սակայն պետք է հիշել, որ «դաշնամուրային երգեցողությունը» բնական է միայն դաշնամուրային այն երկերին, որոնք մեղեդային են:

Եթե մեղեդիական լսողությունը ի հայտ է գալիս միաձայն մեղեդու, ապա պոլիֆոն լսողությունն ի հայտ է գալիս երկու և ավելի ինքնուրույն զարգացող ձայների առկայությամբ: Արդեն իսկ բազմաձայն ֆակտուրա ունեցող դաշնամուրային երկերի կատարումը նախադրյալներ է ստեղծում պոլիֆոն լսողության զարգացման համար: Պոլիֆոն լսողությունը զարգանում է ոչ միայն պոլիֆոն, այլ նաև դաշնամուրային ամեն մի ստեղծագործություն կատարելիս, երբ հարկ է լինում հնչող թեմաներից մեկն ընդգծել և հնչյունային l-ին պլան մղել և ինչ-որ բան տանել հետին պլան, որն էլ իր հերթին կարող է շերտավորվել բազմապլանայնության: Այսպիսին է դաշնամուրային ֆակտուրայի հատկությունը:

Հարմոնիկ լսողությունը երաժշտական այն լսողությունն է, որը դրսևորվում է համահնչյունների նկատմամբ: Այն զարգանում է արդեն զարգացած մեղեդիական լսողության առկայության դեպքում: Ինչպես պոլիֆոն լսողության, այնպես էլ հարմոնիկ լսողության առկայությունը, երաժշտական լսողության զարգացման ավելի բարձր մակարդակի դրսևորումն է: Հնչյունի հնչերանգի զգացողության մեջ առկա է պարզ զգացողություն, այսինքն՝ լսողության՝ վերլուծության չենթարկվող համահնչյունություն, իսկ հարմոնիկ զգացողության մեջ՝ բարդ զգացողություն, այսինքն՝ միասնության և բազմաքանակության միաժամանակյա ընկալում: Հարմոնիկ լսողությունը, ինչպես և մեղեդիականը, ստեղծվում է լադային զգացողության հիման վրա:

Մեզանից յուրաքանչյուրն ունի ներքին լսողական պատկերացումներ: Երաժշտի լսողությունը պետք է ընդունակ լինի հմտորեն օգտվելու լսողական պատկերացումներից: Այդ պատճառով ներքին լսողությունը մենք սահմանում ենք՝ որպես երաժշտական լսողական պատկերացումները ինքնակամորեն օգտագործելու ընդունակություն:

Ռիթմի պրոբլեմը երաժշտական տեսության և գեղագիտության ամենաբարդ պրոբլեմներից է: Այդ առումով մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել բավական հակասական տեսակետների: Դեռևս մշակված չէ միասնական տերմինաբանությունը: Այդ պատճառով էլ, նախքան երաժշտական ռիթմի մասին խոսելը, անհրաժեշտ է քննարկել տերմինաբանությունը (3. էջ 9-13):

Ավանդական երաժշտական տեսությունը սահմանում է մետրի հասկացությունը որպես հավասարաչափ ուժեղ և թույլ մասերի հարաբերակցության զգացողություն տակտի ներսում: Այսպիսով, մետրը դինամիկա արտահայտող յուրատեսակ ցանց է, որն իր մեջ է ներգրավում ռիթմական տակտերը: Մետրի և ռիթմի նման հասկացությունն օգտագործում ենք այն դեպքերում, երբ խոսում ենք նոտային տեքստին առնչվող հարցերի մասին:

Ռիթմի զգացողությունը ժամանակի զգացողությունն է: Մանկավարժները ռիթմի զգացողության մասին ունեն այնպիսի կայուն կարծիք, որ այն զարգացմանը ամենադժվար ենթարկվող ընդունակությունն է: Այդ կարծիքը ծագել է այն պատճառով, որ միջին ընդունակությունների տեր ուսանողների պասիվ ներքին երաժշտական պատկերացումները ամենից առավել ազդում են կատարման ռիթմական կողմի վրա: Ասենք, բավական է, որ դաշնակահարը ճիշտ կատարի նոտային տեքստը, և կստանա ճշգրիտ հնչյունաբարձրություն, նույնիսկ եթե ներքին լսողությամբ այն չի լսում: Սակայն այդ դեպքում նա կստանա տեսողության լոկ մոտավոր հարաբերակցություն: Եվ վտանգավորն այն է, որ ուսանողը, ձևականորեն ճիշտ կատարելով ստեղծագործությունը, որպես իրական երաժշտական ռիթմ կարող է ընկալել ռիթմի համար բացարձակ խորթ ինչ-որ մի բան:

Երաժշտությունը, ինչպես և արվեստի ամեն մի ճյուղ, արտացոլում է որոշակի բովանդակություն: Հետազոտողներն ու տաղանդավոր մանկավարժները համոզված են, որ ռիթմի զգացողության դաստիարակումը պետք է հիմնված լինի վառ երաժշտակերպարային պատկերացումների դաստիարակման, այսինքն՝ երաժշտական բովանդակության խոր ըմբռնման վրա:

Դաշնամուրի դասարանում ռիթմի պրոբլեմների որոշակի լուծման հարցը խիստ բարդանում է ժանրերի և երաժշտական ոճերի հետ կապված հարցերի զուգակցման ժամանակ:

Պարապմունքներն օգտակար են այն դեպքում, երբ շարժումներով հաղորդվում է երաժշտության ռիթմը, երբ ուշադրության կենտրոնում երաժշտությունն է: Իսկ երբ երաժշտությունը դառնում է նվագակցություն, այդ դեպքում պարապմունքները դառնում են ևս մի ճանապարհ՝ երաժշտական ռիթմի նկատմամբ ձևական վերաբերմունքի դաստիարակման համար: Երաժշտական ռիթմիկայի պարապմունքները զարգացնում են ուսանողի խոշոր մոտորիկան և անմիջականորեն չեն օգնում դաշնակահարին մանր և նուրբ մոտորիկայի զարգացմանը: Սակայն դանդաղեցված տեմպերում կատարվող ուսումնական աշխատանքից հետո կողմնակի թերությունները դաշնամուրի դասարանում կարող են վերացվել երաժշտական ռիթմիկայի պարապմունքների ժամանակ, որտեղ դասախոսը ազատ է տեմպերի ընտրության մեջ:

Երաժշտական ռիթմի իսկական զգացողությունն սկսվում է այն փաստի ըմբռնումից, որ նոտագրության ռիթմական կողմը ավելի շուտ կրում է թվաբանական, և որպեսզի բացահայտվի «գեղարվեստական բնույթը», անհրաժեշտ են ստեղծագործական, մեկնաբանական ջանքեր:

Հաշվելը ռիթմական գործընթացի շարժողական-մոտորային (ձայնային) արտացոլման ամենատարածված ձևն է: Բարձրաձայն հաշվելիս անհրաժեշտ է հետևել հստակ առոգանությանը և մետրական շեշտերի ճիշտ դասավորությանը:

Շատ կարևոր է հիշել, որ հաշվելու նպատակը նոտագրության վերծանումն է, այլ ոչ թե ռիթմական զգացողության դաստիարակումը: Բարձրաձայն հաշվելիս պետք է աշխատել ինչքան հնարավոր է շուտ անցնել մտովի հաշվելուն, իսկ այնուհետև՝ ռիթմական զարկերակի զգացողությանը:

Մետրառիթմական կառուցվածքները թակելով կամ ծափով արտահայտելը օգտակար է բարդ ռիթմական պատկեր ունեցող երաժշտական հատվածներում: Այն պետք է ուղեկցվի կամ երաժշ-

տությունը մտովի պատկերացնելով կամ երգելով:

Տեմպի թերությունները (արագացումը, դանդաղեցումը) վերացնելուն կօգնի զանազան դրվագների միմյանց և սկզբնական տակտերին կցելու եղանակի կիրառումը:

Ուսանողի ռիթմական զգացողության վրա ներգործելու դասախոսի արտահայտած արտաքին միջոցներին վերաբերում են նվագին զուգընթաց համաչափ թակոցը, համատեղ հաշիվը, ուսանողի ուսին ձեռքով թեթևակի խփելը, ռիթմիկ ձեռածափությունը: Ներգործելու բոլոր արտաքին ձևերը լավ են, քանի դեռ խթանում են ուսանողի ակտիվությունը, այլ ոչ թե ճնշում նրան: Այդ առումով, մետրոնոմով նվագելը պարզապես հակացուցված է: Մետրոնոմը գործիք է, որը կարելի է օգտագործել միայն տեմպը որոշելու հանար: Ռիթմական զգացողության դաստիարակման համար լավ միջոց է անսամբլներում նվազելը:

Բարդ, բազմառիթմական պատկերների դեպքում ամեն մի դասախոս ունի իր աշխատանքի նախընտրած մեթոդը: Այս դեպքում համամիասնական է համարվում ընդհանուր հայտարար գտնելը և տարբեր ռիթմական բանաձևերի հանգեցումը այդ հայտարարին (զարկերակին): Օրինակ, պատահում է, որ ելևէջի մեղեդիական շարժման մեջ հանդիպում են ոչ հավասար բաշխված խմբավորումներ՝ քառամաս չափում յուրաքանչյուր մաս բաժանված է մերթ հինգ, մերթ յոթ, մերթ էլ ինը հավասար տևողություն ունեցող նոտաների: Նման դեպքում ճիշտ է պարապել զուգահեռաբար թակելով: Արդյունավետ է տակտային մասերը նախապես արտահայտել նվագավարությամբ՝ մտովի պատկերացնելով ռիթմական պատկերը, որից հետո այն վերարտադրել գործիքով:

Դաշնամուր նվագելը, պահանջում է հիշել բազմաթիվ այնպիսի մանրամասնություններ, որոնք հեշտությամբ չեն հիշվում: Ինքնաբերաբար հիշելն ունի իր առավելությունը: Այն ավելի երկարատև է, իսկ երբեմն էլ՝ ավելի կայուն, և հենց այդ է պատճառը, որ հիմք է տալիս որոշ մանկավարժների որպես հենարան ընդունել այդ տեսակետը: Այստեղ հիշելու ժամանակ առաջնային լսողական-մոտորային հիշողությունն է, իսկ տրամաբանականը չի անջատվում, սա-

կայն մնում է հեռու ետևում:

Մտապահումը (1. էջ 34-38) պետք է լինի իմաստավորված, այսինքն՝ մտապահելու ժամանակ հիմնական դերը պետք է կատարի լսողական և կառուցվածքային-տրամաբանական հիշողությունը: Սակայն մտապահելու սկզբնական փուլին պետք է հաջորդի «նվագի մեջ մտնելու» բավական երկար մի շրջան՝ դա ստեղծագործական ինքնուրույն մեկնաբանության բյուրեղացման փուլն է:

Երաժշտական-մանկավարժական գործունեության մեջ նախապատվությունը տալով լսողական-մոտորային հիշողությանը, այն վերջնականորեն որպես հիմք ընդունելով՝ չի կարելի մոռանալ, որ մարդկային գործունեության մեջ գլխավորը տրամաբանական հիշողությունն է:

Հիշելու ժամանակ անհրաժեշտ պայման է երաժշտական նյութի նպատակադրված կրկնությունների կիրառումը: Առանց կրկնությունների հիշելն անհնար է: Սակայն, անիմաստ կրկնությունները չափազանց չնչին արդյունք են տալիս և անգամ կարող են վնասել: Մեխանիկական կրկնողության մեթոդը երկարացնում է ստեղծագործության անգիր սովորելու ընթացքը և, վերջին հաշվով, փոքրացնում ուսանողի նվագացանկը, նրա երաժշտական մտահորիզոնը, արգելակում երաժշտական մտածողության զարգացումը:

Յուրաքանչյուր կրկնություն պետք է նորություն մտցնի կատարման տեխնիկայի հնչողության մեջ: Կարևոր նշանակություն ունի կրկնողություններին հատկացվող ժամանակի ռացիոնալ բաշխումը: Անգիր սովորելիս շատ օգտակար է դանդաղ տեմպով նվագելը: Այսպիսով, ստեղծագործությունն ամբողջությամբ, ասես, նորից անց է կացվում լսողական պատկերացման միջով: Մեծակտավ ստեղծագործությունների վրա աշխատելիս պետք է նախապես վերլուծել դրանց կառուցվածքը, իսկ այնուհետև՝ բաժանել իմաստավորված մասերի: Ուսուցանվող հատվածները պետք է լինեն ոչ շատ մեծ, ոչ էլ շատ փոքր, որպեսզի հեշտ լինի դրանք հիշել: Տեքստում պետք է սահմանվեն հիշողության հենակետերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Алексеев А.Д., Методика обучения игре на фортепиано., III издание., II дополненное., М.:Музыка., 1978.
2. Алексеев А.Д., Работа над музыкальным произведением с учениками школы и училища., М.:Музгиз., 1957.
3. Баренбоúм Л.А., Фортепианная педагогика., 1 часть., Учебное пособие по курсу методики фортепианного обучения., М.:Госмузизд., 1937.

Резюме

В статье пианистки, преподавателя ЕГК им.Комитаса Н.В.Арутюнян "Некоторые методические вопросы, касающиеся дисциплины "Общее фортепиано" приводятся высказывания известных педагогов-пианистов и методические рекомендации педагогам.

Summary

YSC pedagogue, pianist Naira Vidok Harutsunyan writes another article "Several questions referring to the education of Overall piano". The author here discusses the musical questions (metro-rhythm, memory, melody hearing) during individual and pedagogical classes.

ДАВТЯН СВЕТЛАНА АРТАШЕСОВНА
пианистка,
преподаватель ЕГК им.Комитаса

МУЗЫКАЛЬНАЯ ПАМЯТЬ И НЕКОТОРЫЕ МЕТОДЫ ЕЕ РАЗВИТИЯ

В музыкальном исполнительстве и педагогической практике вопрос о музыкальной памяти как самостоятельной теоретической проблеме возник в середине XIX века. Свыше ста лет назад возникла проблема концертного исполнения без нот и с того времени по сей день этот вопрос волнует ученных, пианистов, студентов, педагогов. До середины прошлого века игра "наизусть" почти не практиковалась, а концертное исполнение без нот не только считалось необязательным, но даже рассматривалось как акт нескромности со стороны исполнителя. Еще при Р.Шумане игра без нот воспринималась как "нарушение традиций", "ненужный риск" и даже как "шарлатанство" (1.С.254). В то время память не являлась необходимой составляющей комплекса музыкальной одаренности и рассматривалась как вспомогательная способность в запоминании трудных пассажей или такты переворачивания страниц.

Что же явилось причиной перехода от игры по нотам к игре наизусть? Анализируя историю музыкального исполнительства, мы пришли к выводу, что причиной этого бесспорно явилась эпоха романтизма. Характерная для этого периода философия "Бури и натиска", отразилась в усложнении фактуры музыкальных произведений, в более глубоких философских обобщениях, ощущениях и переживаниях. Естественно, что игра по нотам ограничивала музыкально-исполнительскую и творческую свободу "раздваивая" внимание между клавиатурой и нотным текстом,

с течением времени концертное исполнительство без нот стало эстетической нормой, однако, отношение многих исполнителей и педагогов оставалось негативным.

Так, немецкий музыковед, композитор и педагог Карл Шмидт явился инициатором дискусии: является ли обязательным требование игры наизусть в концертах (2.). С ним согласны многие крупные исполнители и композиторы того времени: Барри Брук, Карл Клиндворт, Рихард Штраус, а также некоторые врачи и психологи. Нелестно высказывался в адрес артистов всю жизнь торгующих “вразнос” полдюжиной концертов немецкий музыковед и критик доктор Вильгельм Альтман (3.). В игре наизусть он усматривал препятствие к расширению репертуара и потому ратовал за отмену принуждения к подобной игре.

Интересен тот факт, что несмотря на то, что исполнительская практика однозначно решила вопрос о концертном исполнении наизусть, многие крупные музыканты считали его открытым.

Это объясняется тем, что много талантливых исполнителей вынуждены были прекратить концертную деятельность из-за боязни сцены. К примеру подобные страхи испытывала Клара Шуман, которая, по свидетельству современников пролила немало слез из-за необходимости играть без нот и лишь немногие наперекор установившимся правилам, продолжали ставить перед собой ноты (Р.Пюньо, Т.Лешетицкий).

Прошло время и затихло эхо полемических дуэлей, но вопросы запоминания и воспроизведения музыкального материала до сих пор актуальны. Один из крупных советских методистов А.Щапов высказывал предположение о том, что “пианисты со временем частично вернутся к игре с раскрытыми нотами” (Это делали М.Юдина, Г.Гульд, С.Рихтер).

Исполнительское искусство блещет примерами выдающихся пианистов, показавших беспредельные возможности человеческой памяти: А.Рубинштейн, И.Гофман, С.Рахманинов, С.Рихтер, Э.Гиллельс и многие другие. Исключительной памятью обладали

юный В.А.Моцарт*, К.Бюлов, А.К.Глазунов. Однако природа не всех в одинаковой степени наделила этим замечательным даром. Зачастую многие музыканты, не обладая отличной памятью, достигали прекрасных результатов благодаря упорному труду и поиску решений возникающих перед ними проблем.

Благодаря успехам в поисках, находкам, стали создаваться определенные теоретические обобщения о сущности музыкальной памяти, которые порой доходили до абсурдности. Так, немецкий педагог фортепиано и теоретик Герман Вальтц рекомендовал заучивать музыкальный материал таким образом, чтобы ученик мог сыграть пьесу в ракообразном движении от последнего такта к первому либо через такт.

Естественно, современная методика опровергает подобные методы. Опираясь на изучение передового опыта виднейших музыкантов и достижения науки в области психологии она выявляет сущность основных процессов, управляющих памятью; “наблюдения за многими сотнями и тысячами учащихся любой ступени музыкального образования потверждают, что неспособность к запоминанию музыки и ее исполнению на память составляет ничтожный процент, обычно это говорит о недостаточной музыкальной одаренности и даже непригодности к музыкально-профессиональной деятельности. Если вспомнить, что каждый ребенок, даже дошкольного возраста, как правило, поет, а иногда и играет по слуху ряд песенок, то должно быть ясно, что музыкальная память присуща людям как норма” (4.С.30).

Что же представляет собой музыкальная память? По словам Г.Цыпина она “представляет собой способность человека к запоминанию, сохранению (кратковременному и долговременному) в сознании и последующему воспроизведению музыкального материала” (5.С.101).

---

* В.А.Моцарт несколько раз прослушав “Сотворение мира” Й.Гайдна, сделал клавир оратории и с одобрения композитора издал ее.

Наряду с музыкальным слухом и чувством ритма, музыкальная память образует триаду основных музыкальных способностей.

Под музыкальной памятью мы обычно понимаем совокупность различных видов памяти, которыми обладает каждый нормальный человек. Музыкант-исполнитель опирается в своей практической деятельности на слухо-образную, конструктивно-логическую, двигательно-моторную и зрительную память. Поскольку музыка это искусство слуховых впечатлений и восприятий, музыкальная память представляет собой прежде всего слуховую память.

Слухо-образная память играет приоритетную роль в музыкальном развитии ученика. Не случайно в курс музыкального образования введены музыкальные предметы, необходимые для ее развития и усовершенствования. Гармония, сольфеджио, транспонировка, музыкальный диктант, пение в хоре — являются основой для успешного развития музыкальной памяти. Для исполнителя специфика запоминания музыкального материала создает все предпосылки для развития направленности пианиста на выучивание музыкального произведения наизусть, предполагает активизацию процессов запоминания. Воспроизводя звуковой материал исполнитель развивает свое слухо-образное мышление, тем самым создавая драгоценную привычку мыслить в звуковых образах. Психологи утверждают, что при игре степень восприятия значительно возрастает в сравнении с только лишь прослушиванием.

Конструктивно-логическая память является “дирижером” в оркестре других видов памяти и говорить о развитии логической памяти — значит говорить о развитии человеческого интеллекта вообще. В связи с этим необходимо особенно отметить важность наличия у музыканта широкого кругозора, к сожалению, зачастую отсуствующего даже у способных студентов, если они находятся в ограниченных рамках своей узкой специаль-

ности и считают другие предметы второстепенными. Как показывает опыт, подобные студенты не могут быть ни хорошими музыкантами, ни, тем более, хорошими педагогами.

Конструктивно-логическая память связана с логическими категориями, которые относятся к структуре произведения и технике его исполнения. Тональности, модуляции, драматургическая планировка, свойства фактуры, голосоведения, игровые особенности — все это необходимо осмыслить, отметить и затем запомнить.

Моторно-двигательная память зачастую называется “пальцевой” памятью. Этот вид памяти имеет свои и положительные, и отрицательные стороны. С одной стороны, она необходима, а с другой — ненадежна.

Значительная часть учащихся — природная музыкальная одаренность которых не слишком высока — занимаются механически: на основе многократных, однообразных повторений разучиваемого произведения. В ходе таких занятий произведение постепенно заучивается наизусть, или как называют педагоги “входит в пальцы”. Происходит процесс запоминания прежде всего через пальцы, а уши и голова в этом почти не участвуют. Насколько быстро приобретается память движений, настолько она недолговечна. В результате на сцене происходят “провалы” памяти, так как часто в состоянии волнения пальцы трясутся и дают сбой. Такой студент, забыв текст не в силах найти места с которого может продолжить исполнение произведения. Таким образом, известное высказывание большинства студентов, что дома все получалось, а на сцене “вдруг” случилась неудача — находит свое естественное объяснение. Как следствие отсюда начинается боязнь сцены. Моторно-двигательная память необходима лишь в комплексе с другими видами памяти. Механическое заучивание (зазубривание) очень распространенное явление и с ним нужно целенаправленно бороться.

Зрительная память для пианиста полезна, но не обязатель-

на. Этот вид памяти выступает в различных комбинациях с другими видами памяти. Ведь выучить музыкальное произведение можно и не видя его. Таким примером могут служить выступления слепых музыкантов: Юлиуса Тимелиуса, Леонида Михайловича Зюзина и других. Здесь каждый сам для себя решает в какой степени способен полагаться на зрительную память, так как у всех она разная. Существуют одаренные люди с фотографической памятью. Во время исполнения нотный текст словно стоит у них перед глазами, как будто они играют по нотам. Представителем этого типа музыкантов был выдающийся дирижер Артуро Тосканини.

Зрительную память можно развивать при помощи систематического воспитания наблюдательности, концентрации внимания, собранности.

Вокруг проблемы запоминания музыкального материала до сих пор ведутся оживленные споры. Мнения разделились весьма категорично. С точки зрения одних, запоминание должно быть намеренным. По мнению других - это не должно быть самоцелью, то есть эффект запоминания должен быть сопутствующим, возникающим параллельно с разрешением художественно-интерпретаторских, исполнительских проблем. Для примера сравним высказывания двух маститых музыкантов педагогов.

Л.Маккинон: «Многие студенты спрашивают: Когда мне приступить к запоминанию?" На это есть только один ответ: "Когда в следующий раз сядешь за инструмент"».

С.Э.Фейнберг: "Педагог нередко требует от ученика прежде всего исполнения наизусть. Считается, что такой метод укрепляет память. Мне кажется, что это не совсем верно... Минуя творческий момент, начинается мучительный и нецелесообразный процесс запоминания... Вам необходимо запомнить данное произведение, но для этого чтобы его запомнить, вам надо его исполнить".

Таким образом, совершенно очевидно, что единого мнения

по данному вопросу не существует. Музыкальная память, как и все психические процессы раскрывается в практической деятельности. Обладая различными свойствами музыкальная память отличается по качеству и “силе”. Один может запомнить пьесу только прослушав или проиграв ее, другому же для запоминания необходимы недели. Но память первого может оказаться менее надежной и точной, чем память второго, кто много работает и “впитывает” музыку постепенно. Зачастую студенты с легкостью выучившие произведение “наизусть” не всегда изучают его добросовестно, что очень важно для уверенного исполнения без нот. Развитие памяти во многом зависит от систематической привычки учить наизусть, так как человеческая память как и его тело нуждается в гимнастике. Обобщая вышесказанное можно прийти к выводу, что только высокоорганизованная, целенаправленная работа над музыкальным материалом, стимулированная заинтересованностью может привести к положительным результатам и внутренней удовлетворенности.

Важнейшим условием плодотворной работы памяти, является осознаная установка на запоминание. Быстроте и прочности запоминания способствует интерес к изучаемому материалу и сосредоточение на нем внимания. С.И.Савшинский считает, что: “Эмоциональная заинтересованность действует на память подобно тому, как яркое освещение действует на фотографическую пластинку, оставляя яркий след” (4.С.40).

Психологи утверждают: что все то, что особенно интересует человека укладывается в памяти легко, а то что вызывает скуку, к чему он равнодушен запоминается с трудом и быстро забывается. Поэтому на первый план выступает роль педагога, от которого во многом зависит в какое русло будет направлен процесс приобщения ученика к музыке. Привить любовь к музыке, вызвать искренний интерес, вот те ответственные задачи, которые определяют уровень осознанного глубокого подхода к вопросам музыкальной педагогики.

Интерес напрямую связан с вниманием. Существуют два типа внимания: активное и пассивное. Для быстрого заучивания музыкального материала пианист чаще всего пользуется активным вниманием. В это понятие входят: анализ произведения, ритмические характеристики, соотношение частей и целого, динамические и агогические указания. Пассивное внимание выходит на первый план при воспроизведении заученного, где главенствующим для него является идейно-эмоциональное содержание. В течение занятий велика значимость психологических установок как педагога, так и студента, очень важно умение педагога поддержать внимание учащегося. Если происходит перенапряжение, притупляется внимание из-за усталости, необходимо найти поощряющий работу мощный стимул.

Лилиас Маккинон предлагает аппелировать к эгоизму-магниту, который неизменно притягивает внимание. При этом, согласно Л.Маккинон следует рассуждать так: “Делая это хорошо, я разовью способность сосредотачиваться, делая это как можно быстрее, я сэкономлю больше времени для интересующей меня работы. Эти простые аргументы творят чудеса, и их следует всегда приводить себе, когда приступаешь к задаче, которую нужно обязательно решить, какой бы неприятной она не оказалась” (6.).

Из вышесказанного видно как важно для пианиста выработать в себе волевые качества, направленность запоминания.

Для пианиста-исполнителя основным критерием его профессиональных возможностей является публичное выступление. Здесь мы вплотную подходим к проблеме сценического волнения, которая часто является причиной сбоя работы памяти. Даже мгновенное замешательство может нарушить течение исполнительского процесса и вывести исполнителя из творческого состояния. Случайности провалов памяти присутствуют в практике выдающихся исполнителей. Так С.Рахманинов, наделенный природой гениальной музыкальной памятью, рассказывает о казусе,

который произошел с ним во время концерта: “Вчера, в концерте, впервые в моей жизни, на какой-то фермате позабыл, что дальше делать, и, к великому ужасу оркестра, мучительно долго думал, вспомнил, что и как дирижировать дальше”. Описанию этого случая предшествует горькая жалоба: “Я просто устал — очень устал и живу из последних силенок”. (Это было 1912 году, когда Рахманинову было всего 40 лет.)

Из сказанного выше напрашивается единственный вывод, что не только подход к работе над музыкальным материалом и природные данные являются причиной срывов во время концертного выступления. В этот процесс вовлекаются и другие факторы: состояние психологического настроя нервной системы, утомленность, рассеянность и отсуствие мобилизованности всего организма. Волнение, чувство повышенной ответственности перед выступлением или во время его вызывают отрицательные эмоции, которые угнетают нервную систему человека. Исполнитель начинает играть быстрее, или, наоборот, медленее обычного. Это обстоятельство нарушает ту гармонию, в которой прибывали его привычки, и они сразу же отказывают.

Во избежание на сцене различных казусов, необходимо, чтобы студент умел играть данное произведение в различных темпах, при условии, что не будет нарушено художественное содержание произведения. Умение предотвращать появление новых, непривычных ощущений не даст волнению на сцене застигнуть музыканта врасплох.

При заучивании важно заранее проконтролировать не только то, как будет сыграно произведение, но и свое состояние на сцене. Для этого необходимо создать близкую к сценической обстановку (выступление в присутствии других студентов и т. д.).

Интересным и результативным в заучивании музыкального материала является метод мысленного проигрывания, когда воспроизведение музыки происходит через внутрислуховые представления. В этом случае активизация памяти происходит в сфе-

ре слухо-образных представлений.

Причин “отказа” памяти на сцене множество. Перечислим некоторые из них:

- боязнь концертного выступления из-за отсуствия привычки общения с аудиторией;
- исполнение на эстраде непосильно трудного произведения (что очень опасно, так как может нанести ученику психологическую травму, потерю уверенности в себе);
- болезненое состояние;
- слабая воля;
- страх перед трудностями технического и художественного плана вследствие незнание музыкального материала.

По этому поводу представляет интерес высказывания И.Я.Падеревского: “В течение многих лет моей артистической деятельности я испытывал эти ужасные страдания перед выступлением, эти муки, которые невозможно описать. Согласно моей теории, ужасное внутреннее волнение, страхи, связанные со всем и вся — публикой, фортепиано, обстановкой, памятью, - все это не что иное, как нечистая совесть. Страх — это только чувство ненадежности”.

В этом высказывании бесспорно присутствует огромная доля истины. В практике часто наблюдаются случаи, когда педагоги расценивают неудачи в публичных выступлениях аномалией природной памяти студента, не понимая, что основой таких сбоев памяти могут явиться и другие причины, а именно — неорганизованность студента, неумение самостоятельно правильно заниматься.

Перед педагогом стоит ответственная задача — развивать память студента, устраняя те факторы, которые отрицательно сказываются на его памяти. Очень часто эти факторы бывают столь незначительны, что можно и не придать им значения. Но именно они могут стать причиной неудачного выступления и даже провала.

Для примера приведем некоторые из них*:

- непривычность обстановки;
- отвлекающая внимание неудобная одежда;
- слишком яркий или тусклый свет на сцене;
- слишком низкий или высокий стул**.
- Упругость клавиатуры или ее поверхностность и т. д.

Все эти вопросы должны находиться в поле зрения педагога и студента. Хороший педагог обязан тонко и многогранно подходить к индивидуальности студента, находить сильные и слабые стороны его возможностей, умело вникать в суть процессов, управляющих памятью. Только через этот путь можно достигнуть успеха.

Только тренировка памяти, осуществляемая через выучивание новых произведений, повторение уже пройденных пьес, помогает сохранить и поддержать ее на должном уровне. Эта истина находит полное подтверждение в словах известной английской пианистки и педагога, теоретика Лилиас Маккинон: “Лучший способ научиться запоминать — это запоминать”.

ПРИМЕЧАНИЯ

1. Шуман Р., Избранные статьи о музыке., 1956.
2. Соколова Ф., Игра наизусть., Л.,1967.
3. Krabbe W., W. Altmann. Die musikforschung., 1951.
4. Савшинский С., Пианист и его работа., Л.:Советский композитор., 1961.
5. Цыпин Г., Методы игры на фортепиано., М.:Просвещение., 1984.
6. Маккинон Л., Игра наизусть., Л.:Музыка., 1969.

* Ассоциативные моменты, которые являются в жизни человека опорой, при других обстоятельствах могут явиться помехой.

** Неудобство, вызванное этим обстоятельством, может изменить привычные двигательные ощущения и отразиться и на технической стороне, и на самой памяти.

РЕКОМЕНДУЕМАЯ ЛИТЕРАТУРА

1. Баренбойм Л., Антон Григорьевич Г.Рубинштейн., т.1., Л.:Госмузиздат., 1957.
2. Соколов Е., Механизмы памяти., М.:Советская Россия.,1969.
3. Теплов Б., Избранные труды., М.:Педагогика, 1985.
4. Смирнов А., Проблемы психологии памяти., М., 1966.
5. Григорьев В., О развитии музыкальной памяти учащегося., М., 1980.
6. Щапов А., Фортепианная педагогика., М.:Советская Россия., 1960.

Ամփոփում

«Երաժշտական հիշողություն: Նրա զարգացման որոշ մեթոդներ», Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս, դաշնակահար Ս.Ա.Դավթյանի հոդվածն անդրադարձ է «անգիր» կատարման խնդրին, որն սկիզբ է առել դեռևս 19-րդ դարի կեսին: Ուսումնասիրելով հայտնի մարդկանց ասույթներն ու մտքերը երաժշտական հիշողության մասին, հոդվածագիրը նշում է. ով ցանկանում է, որ հիշողությունը չիամրի և պահպանվի, պետք է միայն այն մարզել, որն իրականացվում է նոր ստեղծագործություններ սովորելով անցածի կրկնությամբ, օգնում է պահպանել և հիշողությունը պահել անհրաժեշտ մակարդակի վրա:

Summary

YSC pedagogue, pianist Svetlanna Artashes Davtyan writes the article "Musical memory: some methods of its development". Discussing and saying the thoughts by famous people about musical memory, the author wishes that the memory remains with its colors, and be trained that can be realized by learning of new works, revising the past ones.

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

КАФЕДРА АРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ ФОЛЬКЛОРИСТИКИ

ԲՐՈՒՏՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՀՐԱՉԻ
Խմբավար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս

ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ

«Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացեք և սովորեք նրանից»:

ԿՈՄԻՏԱՍ

Կոմիտաս վարդապետի այս արտահայտությունը եղավ նրա կյանքի և գործի նշանաբանը: Նա իր գործունեության բոլոր բնագավառներում հենվեց հայ ավանդական գեղջուկ երգի վրա, որի մեջ նա տեսնում էր ամենից առաջ՝ կյանքի ճշմարտություն և իրականությունից վերցված բովանդակություն, ազգային դիմանկար և հոգեկան կերտվածք, երաժշտական մտածողական համակարգ, երաժշտական ճաշակ ու ոճ, իրականությունը գեղարվեստորեն արտահայտելու միջոց: Ժողովրդական երգը ժողովրդի կյանքի գեղարվեստական պատմությունն է, դրա բանավոր տարեգրությունը:

Դեռ Գևորգյան հոգևոր ճեմարանի երկրորդ դասարանի սան Սողոմոն Սողոմոնյանը առաջին անգամ լսելով հայերեն հնչող հայկական ժողովրդական երգերը, ամբողջապես համակվում է նրանց թովչանքով, սկսում հավաքել ու գրի առնել դրանք:

«Ազգի մը լեզուն և գրականությունը կարող են ձևավորվել և զարգանալ՝ օրինակ առնելով ուրիշ ազգերեն, բայց երբ նա ինքնահատուկ լեզու և գրականություն ունի, ունի և ինքնուրույն երաժշտություն, - գրում է Կոմիտասը, - յուրաքանչյուր ազգի երաժշտությունն իր ազգի հնչական ելևէջներեն կը ծնի ու կը ծավալի: Հայ լեզուն ունի իր հատուկ հնչավորությունը, ուրեմն և համապատասխանող երաժշտություն»: (1. էջ 49)

Եվ այսպիսի ինքնուրույն երաժշտությունը, իր բոլոր ճյուղերով՝ ժողովրդական, հոգևոր, գուսանական, աշուղական՝ ազգը պիտի ճանաչի, ժառանգորդը, կրողը դառնա և իհարկե փոխանցի եկող սերունդներին:

Հայ երաժշտական արվեստը հին է այնքան, որքան և ինքը՝ հայ ժողովուրդը, որի պատմության մի մասն է ազգային արվեստի պատմությունը: Իրենց գոյատևման ընթացքում հայ մոնոդիկ երաժշտության բոլոր ճյուղերն անցել են զարգացման մեծ և անհարթ ճանապարհ, փոփոխվել, ապրել կյանքի տարբեր փուլեր: Եվ այդ գոյության ընթացքում են ստեղծվել բազմաթիվ ժանրեր՝ աշխատանքային ընթացքը դրսևորող հոռովելներ և բազմապիսի աշխատանքային երգեր, հայ ժողովրդի կամքն ու ուժը, հոգևոր հարստությունն ու գեղեցկությունն ընդհանրացնող վիպերգեր, դաստիարակչական մեծ նշանակություն ունեցող երգիծական բնույթի կատակերգեր, հուզառատ սիրո երգեր, կենցաղում տարածված ավանդական սովորույթներ, բարքեր ու հարսանեկան արարողությունը ներկայացնող ծիսական երգեր, օտարության մեջ հնչող, պանդուխտի հոգեկան ապրումներն արտացոլող անտունիներ, նաև օրորներ, պարերգեր և այլն:

Ժողովրդական երգաստեղծությունը վաղնջական ժամանակներից մինչև այսօր գոյատևել է բանավոր ավանդվելով, և դրանով է բացատրվում ժողովրդի կատարողական արվեստում որևէ երգի բազմաթիվ տարբերակների գոյությունը: Դրանք որպես ժողովրդի հիշողություն, ազգի հարատևության հիմքն են իրենց անզուգական դասական նմուշներով, ինչպիսիք են՝ «Կռունկ»ը, «Անտունի»ն, «Մոկաց Միրզա»ն, «Լոռվա գութաներգ»ը և այլն: Այս ժառանգության ճանաչումը թույլ է տալիս ընկալել ժողովրդի աշխարհայացքը, վերաբերմունքը դեպի իրական կյանքի պատմական, սոցիալական և կենցաղային երևույթները:

Ժողովրդական երգը կոմպոզիտորական ստեղծագործության համար կենարար աղբյուր է: Յուրաքանչյուր ազգային մասնագիտացված արվեստ սկիզբ է առնում և զարգանում ժողովրդական ստեղծագործությունից, ձևավորվում ազգայինի հիմքով: Կոմպոզի-

տորական ստեղծագործությունն օգտագործում է ժողովրդական երգի ինքնատիպ ինտոնացիան, ճկուն ռիթմը, հարուստ ձայնակարգերը, և այստեղ նա ապրում է իր կյանքի մի նոր, ավելի հասուն շրջան:

«Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունի»ն, այդ էլ բավական կը լիներ նրան խոշոր արվեստագետ համարելու», - ասել է Կլոդ Դեբյուսին: (2. էջ 82)

«Անտունի»՝ անտուն հայ շինականի երգ: Հայ ազգի պատմության մեջ վերջին դարերում տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում ծնված ողբ, ... Եվ ահա այս երգի մշակումն է, որ հիացրել, ցնցել էր Դեբյուսիին:

Կոմիտասը սինթեզեց եվրոպական երաժշտության տեխնիկան հայ երաժշտությանը և մնաց ինքնատիպ և յուրօրինակ:

«Կոմիտասը մեր ազգային երաժշտական դպրոցի հիմքն է: Ինձ թվում է, որ ոչ մի հայ կոմպոզիտոր չի կարող չկրել Կոմիտասի բարերար ներգործությունը: Կոմիտասի երաժշտությունը մի այնպիսի անաղարտություն է, մի այնպիսի վսեմաշուք լեզու, որ դժվար է այս կամ այն կերպ նրան չառնչվելը, նրա ազդեցությունը չկրելը:

Ամեն մի հայ կոմպոզիտոր պետք է իմանա Կոմիտասի ստեղծագործությունները, պետք է խորհի դրանց մասին: Ես միշտ եղել և գերված կմնամ Կոմիտասի երաժշտությամբ», - գրել է Արամ Խաչատրյանը: (2. էջ 69)

«Ի՞նչ է ազգային երաժշտությունը, ի՞նչ է նյութ տալիս ազգային ժողովրդական երգերին: Արդյոք նրա հպարտ լեռնե՞րը, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դեպքերն ու անցքերը, ժողովրդի ներքին ու արտաքին կյանքը - այո, այս բոլորը, բոլորը նյութ են կազմում ազգային երաժշտության, մի խոսքով այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարանների ու մտքի վրա», - գրում է Կոմիտասը: (1. էջ 9)

Կոմիտասի հոդվածները և ուսումնասիրությունները, գրառած և ուսումնասիրված հայկական երաժշտական ժառանգության մասին, պիտի ճանաչողական հիմք հանդիսանան հայ երաժշտի ձևավորման համար: Կոմիտասը առաջինն էր, որ երազում էր երա-

ժշտանոց բացել թե՛ Էջմածնում, թե՛ Պոլսում, բայց ցավոք, ժամանակի և միջավայրի զոհ դարձան այդ երազանքները, որոնք իր մասնակցությամբ այդ ժամանակաշրջանում թույլ կտային տաղանդավոր ստեղծագործող երիտասարդներին իրենց հայրենիքում ստանալ երաժշտական մասնագիտական կրթություն: «Ա՜խ, որքան եմ ցանկանում, որ մեր երաժշտանոցը բացուէր և դու էլ գայիր այստեղ ու միասին առաջ մղէինք երաժշտությունը մեր շրջանակի մեջ. չես իմանում թե ինչ ընդունակութիւններ կան եւ որքան են սիրում գեղարուեստ», - գրում է Կոմիտասը Մարգարիտ Բաբայանին Պոլսից: (3. էջ 206)

Իր սիրելի ժողովրդի անցյալով, ներկայով ու նրա զարգացման ապագա հեռանկարներով տարված, Կոմիտասը ուզում էր ամբողջ աշխարհին ներկայացնել հայ բազմադարյան երգարվեստի գանձերը, որոնց ուսումնասիրությանն ու նորոգմանը նվիրեց իր գիտակցական ամբողջ կյանքը: Կոմիտասը դեռ ողջ էր, երբ 1921թ-ին Հայաստանում, Երևանում բացվեց երաժշտական ստուդիա, որն էլ երկու տարի անց արդեն վերակազմավորվեց որպես կոնսերվատորիա: Ավելի ուշ, 1946թ-ից կոնսերվատորիան կրում է Կոմիտասի անունը, ինչը պարտավորեցնող է հաստատության ուսանողների համար: Արդեն քառասուն տարի է, ինչ կոնսերվատորիայում գործում է ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետը, իսկ 1988թ-ից՝ Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնը, որի հիմնադիրն ու ղեկավարը շուրջ քսանհինգ տարի եղել է վաստակաշատ գիտնական, երաժշտագետ-բանահավաք Մարգարիտ Բրուտյանը: Ստեղծման օրվանից կաբինետում դասավանդվել են ֆոլկլոր, հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, հայկական նոտագրություն, գիտարշավների ժամանակ ձայնագրված երաժշտական նմուշների վերծանություն դասընթացները, իսկ ավելի ուշ, 1990-ականների սկզբից՝ հայ հոգևոր երաժշտություն, աշուղական արվեստ, քաղաքային կատարողական արվեստ, արևելքի երաժշտություն դասընթացները: Եվ իհարկե երաժշտագիտական բաժնի ուսանողների մասնագիտացում ֆոլկլոր, միջնադարագիտություն, արևելքի երաժշտություն, աշու-

դագիտություն բնագավառներում:

Ամբիոնի գործունեությունն իր բոլոր ուղղվածություններով՝ կրթական, բանահավաքչական, գիտահետազոտական, նպատակ ունի շարունակել այն գործը, որի հիմնադրման մասին էր երազում Կոմիտասը:

Անհնար է պատկերացնել հայ երաժշտի՝ կոմպոզիտոր, երաժշտագետ, խմբավար, դաշնակահար, երգիչ, ջութակահար կամ կատարողական որևէ այլ բաժնի ուսանող, ձևավորումը, որպես ազգային մասնագիտացված երաժշտական արվեստի կրող առանց այն իմացության, որը տալիս է ազգային երաժշտարվեստի ճանաչումը: Դա ժողովրդական երգն է իր անկեղծ, անմիջական ներգործությամբ, որի իմացությունը երբեք չի մոռացվում տարիների ընթացքում: Այս երգարվեստի ուսումնասիրությունը և կատարումը (որը կարևոր պահանջ է անգիր երգելու կամ նվագելու) թե պատմաճանաչողական և թե երաժշտական լեզվի տեսանկյունից ազգային դասական ստեղծագործությունների համար մեծ հիմք է հանդիսանում:

Հայ մոնոդիկ երաժշտության մյուս բոլոր ճյուղերի ուսումնասիրությունը, անկախ բաժնից ու մասնագիտությունից, ևս ազգայինի մեծ հիմք է դնում երաժշտի ձևավորման գործընթացում:

«Յերբ նա ինքնահատուկ լեզու և գրականություն ունի, ունի և ինքնուրույն երաժշտություն», - գրում է Կոմիտասը: - Այդ ինքնուրույնի ճանաչումը, կրումը, հետագայում՝ կատարողական արվեստում տալիս է և ինքնուրույն մեկնաբանություն ազգայինի, որի կրողը հենց կոնսերվատորիայի սաներն են, հենց այդ ժառանգության պաշարումով է, որ հայ երաժիշտը պիտի դառնա ազգային դասական երաժշտարվեստի կրողն ու տարածողը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Հայպետհրատ., Եր., 1941թ.
2. Ղազարյան Ռ., «Կոմիտաս» մատենագիտություն, Եր., Հայաստանի Ազգային գրադարան, 2009թ.
3. Կոմիտաս Վարդապետ, Նամականի, Եր., Սարգիս Խաչենց. Փրինթինֆո 2009թ.

ԲՐՈՒՏՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՀՐԱՉԻ
Խմբավար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս

ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԱԺԻՇՏ-ՈՒՍԱՆՈՂԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Ամբողջ մտատանջությունս է հասցնել աշակերտներ, որոնք դպրոցներու մեջ տեղ գրավեն, նվիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրության, տարածեն ժողովրդի մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդի մեջ ազգային երաժշտության խօսքը մարմնանա և անոր ազդեցության տակ ժողովուրդը թոթափելով իր թույլ պատյանը, մտնե վերակենդանացման շավղին մեջ: Ինչքան բաղձալի է ունենալ այս նպատակով առանձին վարժարան, որուն միջոցով մեծ արդյունքը կարելի կըլլար ձեռք բերել», - գրում է Կոմիտասը: (1, էջ 63)

Ահա այսպես էր կարևորում և գնահատում Կոմիտաս վարդապետը երաժշտության դերն ու նշանակությունը: Այն ոչ միայն ժողովրդի կյանքի ու ներաշխարհի արտացոլումն է, այլև փոխադարձաբար վերափոխվող այն զորեղ միջոցը, որն արթնացնում ու զորացնում է ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, դաստիարակում ոգին, առաջնորդելով նրան դեպի իր կյանքի վերափոխման ուղիները: Վեր հանելով երաժշտության անառարկելի դերը սերունդների դաստիարակության մեջ՝ նա նշում է այդ ներգործության իրականացման մեթոդական ուղիները:

«Յերգեցողությունը սրտին հետ կապ ունի, վոր ուղղակի հոգիին կերթա: Ուսուցիչ պարոններ և քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն ե ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կը խորտակեք

վերջը»,- գրում է Կոմիտասը: (2, էջ 67) «Իւուրաքանչյուր ազգի երաժշտությունը բխում է իր մայրենի լեզվի չորս անբաժան յատկություններից՝ ամանակ, ելեւէջ, հնչիւն և ոգի. սոքա են պատկերացնում մտքի և զգացմունքի աշխարհները: Մինչեւ որ չուսումնասիրենք վերոյիշյալ չորս հիմնական յատկությունները մանրակրկիտ կերպով, մինչեւ որ նոցա օրէնքները չպարզենք ու մարզենք, չենք կարող կատարեալ դաշնաւորումն անել որեւէ մի հոգեւոր կամ աշխարհիկ երգի»: (3, էջ 175)

Ստեղծագործել, բանավոր ավանդելով փոխանցել, պահպանել անգամ այն ժամանակ, երբ քեզ արգելում են խոսել, ստեղծագործել քո իսկ մայրենի լեզվով, որն անմիջականորեն արտահայտում է հոգուդ, սրտիդ ապրումները հայեցի ելևէջներով: Եվ այդ հայեցի ելևէջները չաղավաղվեցին անգամ այն ժամանակ, երբ վերջին դարերում հայ շինականի երգը դարձավ օտարալեզու, կրելով իր վրա ժամանակի կնիքը: Այդ օտարալեզու հայկական երգերը գրառելիս Կոմիտասը ամեն կերպ աշխատում էր մաքրել խոսքերից բխող օտար ելևէջներից, թարգմանել բառերը, վերադարձնել դրանց բնական հնչողությունը:

«Ես հավատում եմ հայ երաժշտության ապագային, որովհետև մի ազգ, որ ստեղծել է հայ երգը, մի ժողովուրդ, որ երաժշտական անցյալ է ունեցել, ապագայում աշխարհին պիտի ընծայի մի շարք մեծ անուններ, որոնցից առաջինը, անշուշտ, կլինի Կոմիտասի անունը: Խոնարհվենք անհուն անձնավորության, նրա կյանքի, նրա մեծ գործի առաջ, հավատանք նրա ամենախորհուն իղձերի իրագործմանը և բացականչենք՝ կեցցե՛ Կոմիտասը», - ասել է Թոմաս Հարթմանը: (4, էջ 335)

Եվ այդ «մեծ անունները» Կոմիտասից են առնում իրենց սկիզբը: Ուսումնասիրելով Կոմիտասի գրառած ժառանգությունը, «Հոդվածները և ուսումնասիրությունները» հայ ժողովրդական և հոգևոր երգերի մասին, նրա անզուգական ստեղծագործությունները՝ մենք կարողանում ենք ճանաչել ժողովրդի ինքնությունը, աշխարհայացքը, վերաբերմունքը դեպի իրական կյանքի հասարա-

կական ու պատմական անցյալը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում դասավանդվող բոլոր դասընթացները կարևոր խթան են հանդիսանում ազգային երաժշտական ժառանգության ճանաչման գործում: Ուսման առաջին իսկ տարվանից ուսանողները հնարավորություն ունեն անմիջականորեն ծանոթանալու ազգային երգաստեղծությանը՝ թե՛ տեսականորեն և թե՛ գործնականորեն:

Դասընթացների գործնական կողմն այն է, որ ուսանողները դասախոսության ժամանակ հնարավորություն ունեն ձայնագրությամբ լսելու ազգային երաժշտությունը, փորձում երգել խմբով, ինչը նրանք անում են մեծ սիրով: Կատարողական բաժիններում սովորող ուսանողները, բացառությամբ մեներգեցողության բաժնի, գրեթե երգեցողության փորձ չունեն, և հետաքրքրականն այն է, որ նրանք ամեն անգամ, երբ իրենց հնարավորություն է տրվում երգել միասին, շատ են ոգևորվում: Աստիճանաբար, երգելով հանձնարարվող երգերը, ուսանողները հաստատում են իրենց չբացահայտված երգչական կարողությունները: Չէ՞ որ ունենալով լավ լսողություն՝ նրանք արդեն իսկ ունեն և երգելու կարողություն՝ անկախ երգչական ձայնի առկայությունից:

Հայկական մոնոդիկ ժողովրդական երգարվեստն իր վառ մեղեդայնությամբ, լակոնիկ ելևէջային դարձվածքներով անմիջապես դրոշմվում է իրենց հոգիներում ու սրտերում՝ երբեք չջնջվելով լսողական հիշողությունից: Դա, իհարկե, գալիս է և երգաստեղծության հիմքը կազմող երգերի խոսքերից, չէ՞ որ երգը «ասելով» են երգում: Ժողովրդական երգարվեստը ազգային երաժշտության բոլոր ճյուղերից ամենից հեշտ ընկալվող և հիշվողն է իր անմիջականությամբ, պարզությամբ, երբեմն «միամիտ» անկեղծությամբ, ինչն էլ շատ բնորոշ է ֆոլկլորին: Ցավոք, մեզանում, ժողովրդական երգարվեստին երաժիշտ ուսանողը կարող է ծանոթանալ միայն երաժշտական կրթօջախներում, լինի ուսումնարան, կոնսերվատորիա թե մանկավարժական համալսարան: Իսկ ճանաչելու համար,

այն էլ ազգովի՝ նշվածը շատ քիչ է:

Դասընթացի ժամանակ, անկախ մասնագիտությունից, երբ ուսանողները դասից դաս ծանոթանալով և սովորելով առնվազն հինգից տասը երգ, սկսում են երգել կամ նվագել դրանք, իրենց մեջ ազգային մտածողության «սերմն արդեն գտնում է իր պարարտ հողը»: Եվ անմիջապես, կամ էլ տարիներ անց, նրանց կատարողական և ստեղծագործական մտածողությունը հարստանում, լցվում է նոր, անկրկնելի ճանաչողությամբ: Դեռ տարիներ առաջ, երբ առիթ ունեի լարային բաժնի ուսանողներից անգիր պահանջվող երգեր ընդունելու, երկու ուսանող երգելուց հետո ցանկություն հայտնեցին ցանկի վերջում պանդխտության երեք երգը նվագել իրենց գործիքով և լսել իմ կարծիքը: Երբ նրանք հնչեցրեցին այդ գոհարները («Կռունկ», «Կանչե կռունկ» և «Անտունի»), ես հուզմունքից չէի կարող խոսել. հիացած էի իրենց կատարումներով: Այդօրինակ դրսևորումներն ապացուցում են, որ ամեն մարդու մեջ կա հոգու այն աշխարհը, որը ճանաչելով է հաստատվում, որին պարտադիր պիտի փոխանցես իրեն հասանելիք ժառանգությունը՝ լինի երգիչ-ուսանող, որն առաջին անգամ է երգում կոմիտասյան «Գարուն ա»ն կամ «Կռունկ»ը, դաշնակահար, երաժշտագետ, կոմպոզիտոր, ջութակահար, կիթառահար, բոլոր, բոլորը, ովքեր առաջին անգամ են (գուցե և ոչ) լսարանում լսում Սբ.Ներսես Շնորհալու «Առաւոտ լուսոյ»ն, Կոմիտասի Պատարագից «Տէր ողորմեա»ն, Սբ.Մեսրոպ Մաշտոցի ապաշխարության շարականները, Գրիգոր Նարեկացու «Հաւուն հաւուն»ը և այլն: Լսում, ճանաչում, սովորում և արդեն ժառանգորդը դառնում մեր ազգի մտածողությանը, մեզ բացահայտող և ճանաչեցնող բազմադարյան ժողովրդական և հոգևոր երգերին: Այդ առաջին ունկնդրումը, երգելու փորձը, անգիր հանձնելը (ըստ դասընթացների պահանջների) առաջին սիրո նման երբեք չի ջնջվի հիշողությունից, չի հեռանա գիտակցությունից, այլ ընդհակառակը, տարիների ընթացքում իր ուրույն տեղը կգտնի հայ երաժիշտ-կատարողի երգացանկում, նվագացանկում: Իսկ ստեղծագործական բաժնի ուսանողների շրջանում դառնալով

ազգայինի անսպառ աղբյուր՝ կծնի հայ ժամանակակից դասական երաժշտության նոր գոհարների:

Հայ ավանդական երաժշտության գործնական ճանաչողության ընթացքում՝ լսարանում խմբով ունիսոն երգելիս կամ նվագելիս, ուխտագնացության ժամանակ ճանապարհին ժողովրդական երգեր երգելիս, մեր գործող և խոնարհված եկեղեցիներում ու վանքերում շարականներ, տաղեր, գանձեր երգելիս, իբրև միասնական երգվող աղոթք, երբ հուզմունքից ուսանողների աչքերը լցվում են , նրանք, վերապրելով այդ խորհրդավոր պահերը, նորովի են սկսում բացահայտել իրենց մեջ այն աշխարհը, որ մերն է՝ հայերինս: Բայց մեր պատմական ընթացքը վերջին 100-ամյակներում եղել է այնպիսին, որ անընդհատ կտրվել ենք մեր արմատներից, հեռացել տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր պատճառներով: Բայց 20-րդ և 21-րդ դարերում ապրող հայերիս ճանաչողությունը երանելի է նրանով, որ մեզ է հասել ազգային ավանդական երաժշտության մի մեծ ժառանգություն, որը մեզ տվեց Կոմիտաս վարդապետը, գրառելով այն, վերածայնագրելով, մաքրելով ժամանակի ազդեցությունից, մշակելով դրանք և ներկայացնելով ամբողջ աշխարհին որպես հայ դասական երաժշտության գոհարներ: Մեր ազգային ավանդական ժառանգության ուսումնասիրությունը, որի կարիքը դեռ շատ կա, կբացահայտի Կոմիտասի հետնորդների նոր անուններ, ինչպիսիք են հայ դասական երաժշտության դպրոցի շարունակողներ՝ Արամ Խաչատրյանը, Ղազարոս Սարյանը, Էդվարդ Միրզոյանը, Առնո Բաբաջանյանը, Էդգար Հովհաննիսյանը, Գոհար Գասպարյանը, Լուսինե Զաքարյանը, Զարեհ Սահակյանցը, Սվետլանա Նավասարդյանը և այլոք, որոնք, յուրաքանչյուրն իր չափով, աշխարհին շարունակում են ճանաչել տալ հայ ազգի մշակույթը, շարունակում են այն գործը, որի հիմնադիրն է եղել Կոմիտասը թե՛ որպես ստեղծագործող և թե՛ որպես կատարող:

«Երբ Կոմիտասը նստեց դաշնամուրի մոտ՝ մեղմորեն երգելու հայկական երգ, ունկնդիր հասարակությունը քարացած մնացել էր լուռ, և այնտեղ տիրեց այն վեհապանծ հմայքը, այն գերագույն

պարզությունը, որ բխում էր հայկական երաժշտությունից», - ասել է Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Մակլերը (4, էջ 333):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ղազարյան Դ., Կոմիտաս, մատենագիտություն, Եր., Հայաստանի Ազգային գրադարան, 2009թ.,
2. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., Հայպետհրատ, 1941թ.
3. Կոմիտաս, Նամականի, Եր., Սարգիս Խաչենց. Փրինթինֆո, 2009թ.
4. Սաֆարյան Խ., Կոմիտաս սքանչելագործ, Եր., Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 1999թ.

Резюме

Статья хормейстера, педагога ЕГК им.Комитаса К.Г.Брутян "Роль исследований армянской традиционной музыки в формировании студента-музыканта" основана на педагогической работе автора. В статье приводятся высказывания Комитаса, связанные с вопросами воспитания молодух музыкантов.

Summary

YSC pedagogue Karine Hrach Brutyan writes another article "The function of Armenian traditional music in the formation of musician-student". The article raises the importance of folk and sacred song's upbringing as an important function in folk independence.

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ անվ. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ИНСТРУМЕНТАЛЬНАЯ КАФЕДРА АРМЯНСКОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА им.Х.АБОВЯНА

ЕДИГАРЯН ВЯЧЕСЛАВ АРШАВИРОВИЧ
пианист, кандидат искусствоведения,
доцент ЕГПУ им.Х.Абовяна

ОБ ОПРЕДЕЛЕНИИ ПОНЯТИЯ “НЮАНС”

Определяйте значения слов и вы избавите свет от половины его заблуждений.
Р.Декарт

...обозначая одним и тем же термином разные явления, музыковеды рискуют перестать понимать друг друга.
Л.Дыс

Поступательное движение в науке непременно сопровождается появлением новых терминов, развитием и уточнением старых терминов и понятий. Еще в начале XVIII века Г.Лейбниц писал, что “нельзя заниматься науками, не давая в то же время определения терминов”(1.С.539)*.

Исполнительское музыковедение — наука относительно молодая. Становление этой науки (как и становление любой другой науки) предъявляет особые требования к гармонизации ее терминосистемы не только с точки зрения ее практического использования (педагогика, научный перевод), но, что еще более важно, с точки зрения разработки теоретических основ самой науки.

* Обратим внимание: в современной терминологической науке принято считать, что определения даются не терминам, а понятиям. Термин — это краткое словесное выражение понятия.

Как известно, при исследовании проблем музыкального исполнительства и педагогики повсеместно привлекаются не только данные других искусств, но также данные таких наук как анатомия, физиология, динамика, психология, в результате чего происходит перетекание терминов и понятий из терминосистемы одной науки в область терминосистемы другой — явление, в современном мире характерное для многих наук. Отсюда возникает необходимость использования таких определений, которые делали бы сами термины ясными и понятными в системе наук в целом, расширяли бы область их применения.

Термин "нюанс", которому посвящена данная статья, — один из самых распространенных музыкальных терминов. Это французское слово *(nuance)* означает оттенок: оттенок звука, оттенок цвета, оттенок мысли — продолжать можно долго. Французский термин получил настолько широкое распространение во многих европейских языках, что в настоящее время, как правило, не переводится.

Однако, поскольку термин вошел в науку из естественного языка, то во многих языках имеется его национальный эквивалент. Так, в немецком языке используется как французский термин "*nuance*", так и эквивалентное немецкое слово *"schattierrung"*, в английском принят французский термин "*nuance*" и присутствует английское слово *"shade"*, в итальянском наряду с французким присутствует итальянский термин *"sfumatura"*, в армянском — широко используется слово *«երանգ»*.

Здесь следует заметить, что обычно интернационализация терминов приветствуется учеными, поскольку способствует их взаимопониманию. Однако, при выборе заимствованного термина следует учитывать его словообразовательную потенцию, его способность образовывать однокорневые слова-термины. Так, от армянского слова «*երանգ*» возможно образовать однокорневые слова типа «*երանգավորում*», французское же слово *"nuance"* не укладывается в логику словообразования армян-

ского языка*.

Поэтому практику использования национального термина наряду с дополненным в скобках его инонациональным эквивалентом, особенно на ранних этапах становления терминосистемы, следует считать правильной.

Став названием специфического музыкального понятия, слово “нюанс” в основном сохранило свое обиходное значение “оттенка” и вместе с тем приобрело несколько более сложные, по сравнению с общелитературными, смыслы.

Под музыкальными оттенками подразумеваются, как оттенки динамики, так и оттенки характера звучания, которые обычно обозначают итальянскими терминами (dolce, appassionato и др.). И все же в исполнительской и педагогической практике под нюансом чаще всего понимают различные оттенки динамики. Нередко авторские указания динамики корректируются, а при их отсутствии вносятся самими исполнителями. Всю же совокупность оттенков, используемых во время исполнения музыкальных произведений, называют нюансировкой. Так, характеризуя исполнительское мастерство пианиста, говорят о “тонкой (или иной) нюансировке”.

Терминология, как общенаучная дисциплина, требует, чтобы определение понятия было однозначно целостным “какими бы средствами и способами ни передавалось его содержание” (2.С.35).

Приведем на выбор несколько цитат из разных источников — научных работ, журнальных статей, газетных интервью. “Сохранив баховские нюансы, редактор (имеется в виду К.Мострас. — *В.Е.*) счел нужным ввести дополнительную динамику” (Т.Суханова, 2007). “Если композитор задал темп, нюансы, гармонию, а

* В терминологии случаются и обратные ситуации. Так, от греческого термина *кинетика* образуется прилагательное *кинетический,* а от русского слова *движение* однокорневое прилагательное не образуется. (Пример взят из книги 2.С.68.)

ты воспринимаешь все это, но делаешь нечто иное, значит, ты просто не профессионал" (Ю.Давтян, 2007). "Авторские нюансы следует не запоминать, а изучать, но не формально, а с точки зрения их образной цели. Исполнить авторский нюанс мало, его нужно понять," "бетховенские нюансы тесно связаны с фактурой" (Н.Голубовская, 2007)*.

Д.Ойстрах в телефонном разговоре с Д.Шостаковичем предлагал автору ввести в текст 2-го скрипичного концерта некие "подкожные" нюансы, на что благожелательный автор отвечал "Все укажем"**.

Из приведенных примеров и великого множества подобных напрашивается логичный вывод, что нюансы выписаны в нотном тексте самими композиторами.

Несомненно, что все эти известные (и другие не очень известные) музыканты понимают о чем идет речь. Возможно тут происходит своеобразная аберрация, когда слышимое выдается за видимое.

Из всего вышесказанного следует, что термин "нюанс" как бы обслуживает две различные сферы музыкальной деятельности, каждая из которых опирается на собственную, достаточно или недостаточно разработанную, теорию: композиторскую и исполнительскую. Но в композиторской деятельности этот термин прикреплен к понятию, дефиниция которого описывает точные, зрительно абсолютно узнаваемые и единственные в своем роде графические знаки. Действительно, знаки *f* и *p*, *cresc* и *poco dim.*, *dolce* и *marcato*, и множество других пишутся композиторами, воспроизводятся в типографиях, читаются музыкантами и всеми, кто держит в руках эти тексты, одинаково. В исполнительской же деятельности дефиниция понятия "нюанс" объяс-

* Здесь следует сказать, что Надежда Иосифовна скончалась в 1975 году и работы, из которых взяты приведенные цитаты, были написаны, вероятно, в 1960-70-е годы, но впервые опубликованы ее учениками лишь в 2007 году.

** Разговор записан Д.Ойстрахом и опубликован (3.С.217).

няет явление с весьма значительной зоной различных интерпретаций. Таким образом, возникает весьма абсурдная ситуация, когда в сущности два различных понятия с различными дефинициями обслуживаются одним термином.

Интересна обратная ситуация. Если в композиторской деятельности овеществленный знак, так называемого, “нюанса” многозначен и несет в себе потенцию множества интерпретаций, то в исполнительской деятельности нюанс объективируется единичностью исполнения. Исполнительский нюанс, будучи произнесен однажды, более неповторим. Таким образом два различных явления названы одним термином.

Но для того чтобы продуктивно выполнять служебную роль по отношению к теории и практике, понятие должно быть адекватным отражением объекта. “Термины в языке науки используются только в своем прямом назначении (как наименования специальных понятий), поэтому они требуют особой строгости употребления, т.е. в соответствии с “объявленным” содержанием”, — пишет В.П.Даниленко (2.С.17).

Музыковед Е.В.Назайкинский, в сферу научных интересов которого входила и проблема музыковедческой терминологии, придает ей особый статус, он считает, что известная многозначность музыковедческих терминов устраняется контекстом: “из ситуации практической музыкальной деятельности, из всего хода теоретического изложения”. Вместе с тем тут же признает, что и при этом “опасность неверного истолкования все же остается” (4.С.71). Известный же русский ученый в области терминологии А.Реформатский считает, что однозначность термины получают не через условия контекста, а через принадлежность к определенному терминологическому полю*, которое и заменяет контекст, и в отличие от слов-нетерминов “слова-термины не зависят от контекста” (5.С.51).

* Понятие “терминологическое поле” введено в науку самим А.Реформатским.

Другой крупный ученый в области терминологии Д.Лотте считает многозначность самым существенным недостатком “для всех систем терминов”, но особенно недопустимым, когда “многозначный термин объединяет понятия достаточно близкие” (6.С.8).

Обратим внимание и на двусмысленность, присутствующую в определении “нюанса”, в широко распространенной “Музыкальной энциклопедии”. С одной стороны в ней сказано, что “термин относится преимущественно к *исполнению* музыкальных фраз и отдельных звуков (созвучий)”, но затем следует указание на то, что “основные оттенки исполнения произведения обычно *указываются автором*”. И тут же: “эти указания в определенных пределах реализуются каждым исполнителем по-разному в зависимости от его индивидуальных особенностей” (курсив наш.- *В.Е.,* 7. Стлб.1060-1061).

Такое размытое определение понятия “нюанс”, на наш взгляд, имеет две причины. Первая заключается в том, что в системе музыкальных терминов “нюанс” относится к многочисленному ряду терминов (звук, динамика, жанр, стиль, форма и др.), вошедших в музыкальную науку из естественного языка. Поэтому в отличие от музыкальных терминов, возникших внутри самой музыкальной науки (мажор, минор, субдоминанта, доминантсептаккорд и аналогичные) и обладающих четкой смысловой однозначностью, термин “нюанс” сохранил многозначность, столь свойственную бытовизмам. Трудно определить границы предмета или явления определяемого подобными терминами, довольно часто они не отличаются особой точностью и однозначностью*.

Вторая причина имеет исторические корни. И в вышеупомянутой статье Е.Назайкинский замечает, что “профессиональный

* Вместе с тем имеет место представление о естественных пределах точности термина. Так, Н.Комлев считает, что поскольку уровень знаний одного индивида отличается от уровня знания другого индивида, это может стать источником естественной неадекватности терминологии (8.С.106).

язык музыкантов может быть уподоблен живому свидетелю истории" (4.С.72-73). Нам представляется, что отсутствие строгой корректности в использовании термина "нюанс" провоцируется общеизвестной исторической традицией. Вероятно, в XVII-XVIII веках, когда исполнительское творчество еще не выделилось в самостоятельную область музыкальной деятельности, термин "нюанс" в синкретической деятельности композитора-исполнителя не вызывал противоречивых суждений. Композитор-исполнитель чаще всего не выписывал в тексте обозначений динамики, характера звучания (И.С.Бах), поскольку в этом не было практической необходимости, иногда же фиксировал лишь отдельные приемы собственного исполнения. Нюансы жили в исполнительской практике композитора и это были нюансы Баха-исполнителя, Моцарта-исполнителя, однако эти маленькие дополнения ("исполнитель") к именам великих за ненужностью отпадали. Опираясь на подобные примеры, уже в отрыве от исполнительской деятельности композитора стали складываться представления о "композиторских нюансах".

Сегодня, когда исполнительство не только стало самостоятельной профессией музыканта, но получает (как было сказано в начале статьи) все более и более твердую теоретическую основу, определение понятия "нюанс" нуждается в уточнении*.

Сегодня такая двусмысленность термина и с точки зрения теории композиции, и с точки зрения теории исполнительства неприемлема.

По-видимому, однозначность понятия "нюанс" устанавливается при определении его как *оттенка исполнения знака авторского текста*, наделенного известной условностью. Композитор записывает произведение нотными знаками, среди которых

* Внутреннее содержание термина меняется "в связи с перегруппировкой понятий в науке, в связи с развитием самой науки, с развитием новых представлений, взглядов", — пишет Л. апанадзе (9.С.78).

различают знаки высотности, ритма, метра, динамики, темпа, характера исполнения и многие другие. То, что мы *видим* в нотном тексте — это знаки и обозначения.

Исполнитель, занимаясь расшифровкой авторской записи, в процессе интерпретации почти все нотные знаки подвергает, мы бы сказали, нюансировке, т.е. различным оттенкам исполнительского воплощения. Современное представление о музыкальном произведении как о форме звучащей, форме исполняемой, логично приводит нас к пониманию нюанса-оттенка как явления сугубо исполнительского, явления одномоментного, нотно не фиксируемого, явления, которое мы *слышим.*

Поэтому понятие "нюанс" в терминологическом поле композиторской деятельности (уточним, в создании музыкальных текстов) не может присутствовать по самой природе этой деятельности. Но уже в известной условности нотной записи заложена возможность исполнительской деятельности, как деятельности творческой*, в которой понятие "нюанс" присутствует как одно из основополагающих.

Нам представляется, что нечеткое определение понятия "нюанс" может привести к неприятию новых идей и взглядов.

С развитием исполнительского музыковедения по всей вероятности будет происходить пересмотр содержания и некоторых других понятий. Изменения, происшедшие в содержании понятия "нюанс", связанные с возникновением знаковой теории, новыми определениями текста, в том числе нотного текста, должны найти отражение в переосмыслении определений некоторых музыкальных понятий. Термины "знаки динамики", "динамические обозначения" должны, по нашему мнению, заменить термин "нюанс" в терминологическом поле теории композиции,

* О том, что в условности нотной записи кроется причина ее совершенства замечательно написано в книге Н.Голубовской "Искусство исполнителя" (10.).

а термин “нюанс” — остаться в терминосистеме науки об исполнительстве.

ПРИМЕЧАНИЯ

1. Лейбниц Г.В., Собрание сочинений в 4-х томах., т.2.,1983.
2. Даниленко В., Русская терминология: опыт лингвистического описания., М.:Наука., 1974.
3. Юзефович В.А., Беседы с Игорем Ойстрахом., 2-е изд., М.:Советский композитор., 1985.
4. Назайкинский Е.В., Термины, понятия, метафоры., /Советская музыка, 1984 N10.
5. Реформатский А., Что такое термин и терминология. //Вопросы терминологии (Материалы Всесоюзного терминологического совещания)., М.:АН СССР., 1961.
6. Как работать над терминологией. Основы и методы (лекции Д.С.Лотте). М.:Наука., 1968.
7. Музыкальная энциклопедия., т.3., М.:Советская энциклопедия., 1976.
8. Комлев Н.Г., Естественные границы точности научного термина., //Место терминологии в системе современных наук. Научный симпозиум. (Тезисы докладов и сообщений)., М.:МГУ, 1970.
9. Капанадзе Л., О понятиях “термин” и “терминология”., //Развитие лексики современного русского языка., М.:Наука., 1965.
10. Голубовская Н., Искусство исполнителя., СПб.:Композитор., 2007.

Ամփոփում

Արվեստագիտության թեկնածու, դաշնակահար Վ.Ա.Եդիգարյանը «Նյուանս հասկացողության բնորոշման մասին» հոդվածում կարևորում է գիտությամբ զբաղվելով, միևնույն ժամանակ անպայմանորեն անհրաժեշտ է ուսումնասիրել տերմինային համակարգը:

Summary

PhD candidate, docent in YSPU after Kh.Abovyan, pianist Vyachislav Arshavir Yedigaryan introduces the article "Nuance about understanding's definition", which begins with the statement by G.Leibniz "Don't engage in science , not giving definitions of the terms" and as a main idea the author writes R.Dekart and L.Diss's thoughts. The author confirms that the French word ‘nuance’ means minor, distinction that is used all over the world.

ԻՍՊԻՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՄԵՐՈՒԺԱՆԻ
դաշնակահարուհի,
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ դոցենտ

ԻՆԵՐՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՆԸ ԴԱՇՆԱԿԱՀԱՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՆՎԱԳԱՅԻՆ ՇԱՐՁՈՒՄՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Կատարողական արվեստում գեղարվեստորեն իմաստավորված կատարում ստանալու համար կարևորագույն խնդիր է ուսանողի գեղարվեստական պատկերացումների ու դրանց արտահայչամիջոցների՝ դաշնամուրի կատարողական ունակությունների ձևավորումը: Այս բաղադրիչները փոխկապակցված են և հանդես են գալիս միասնաբար: Մենք խնդիր չունենք քննարկելու դրանցից որևէ մեկի առաջնային լինելը, սակայն նշենք, որքան կատարյալ են տեխնիկական կատարողական ունակությունները, այնքան անկաշկանդ, հետաքրքրական և վառ են իրագործվում կատարողի գեղարվեստական մտահաղացումներն ու պատկերացումները: Այս առումով տեղին է նշել Ս.Սավշինսկու հետևյալ միտքը. «Ձեռքերը ոչ միայն “ենթարկվող աշխատակիցներ են”»: Դրանք ուղեղի խորհրդականներն են և նույնիսկ նրա ուսուցիչները» (4, էջ 126): Մեր խնդիրն է վերոնշյալ փոխկապակցվածության մեջ դիտարկել շարժման իներցիայի դերն ու նշանակությունը՝ կատարողական շարժումները կազմավորելու բարդ գործընթացում:

Կատարողական շարժումներ հասկացությունը ենթադրում է ձեռքի և մատների համաձայնեցված ներդաշնակ գործընթաց: Երկարամյա ուսուցման ընթացքում սկզբնական տեխնիկական կարողություններն աստիճանաբար, կատարվող երաժշտական նյութի բարդացմանը զուգահեռ, փոփոխվում և համալրվում են բազմապիսի մկանային զգացողություններով, հարստանում մատնահպման բազմազան եղանակներով, ստանում նոր ձևեր: Հաճախ այս ամենը, ուսանողի համար դառնալով կարծրացած պայմանական

ռեֆլեքսներ, միշտ չէ, որ լինում է ռացիոնալ և նպատակահարմար: Ժամանակակից մանկավարժությունը գտնում է, որ դաշնամուրային տեխնիկան կազմավորելիս անհրաժեշտ է, որ մշակվի հմտությունների այնպիսի համակարգ, որն առաջադրվող զանազան տարբերակներում հանդես կգա որպես *անհրաժեշտ, ընդհանրացնող արժեք*, կդրսևորի շարժունակություն, ներքին մկանային զգացողությունները ճկուն վերափոխելու կարողություն, ցանկացած տեխնիկական խնդիր լուծելու համար կունենա հիմնորոշ նշանակություն: Խնդրի լուծման կարևոր նախադրյալներից է *կառավարելի իներցիոն շարժման* ձևավորումը:

Մարդու ֆիզիկական յուրաքանչյուր շարժման մեջ կա իներցիա: Հետևաբար, դաշնամուր, ջութակ, կամ որևէ այլ գործիք նվագելիս, խմբավարելիս կամ պարելիս, այսինքն՝ ցանկացած մասնագիտորեն կազմակերպված գործողություն կատարելիս առկա են իներցիոն շարժումները: Իներցիայի մասին ընդհանուր պատկերացում ունեն բոլորը, սակայն վերհիշենք հանրակրթական դպրոցների ֆիզիկայի դասագրքում դիտարկված որոշ պարզագույն մանրամասներ: «Այլ մարմինների ազդեցության բացակայության դեպքում մարմնի դադարի կամ ուղղագիծ, հավասարաչափ շարժման վիճակը պահպանելու երևույթը կոչվում է իներցիա: Իներցիայի երևույթին մենք ականատես ենք լինում բոլոր այն դեպքերում, երբ փորձում ենք շարժման մեջ դնել որևէ մարմին, կանգնեցնել շարժվող մարմինը կամ փոխել նրա շարժման ուղղությունը»: Եվս մեկ դրույթ՝ «Դադարի վիճակում գտնվող մարմինն սկսում է շարժվել, իսկ շարժվող մարմինն արագացնում, դանդաղացնում կամ փոխում է իր շարժման ուղղությունը միայն այն դեպքում, երբ նրա վրա ազդում են այլ մարմիններ» (1. էջ 35-36): Երևույթը ֆիզիկական է, սակայն, ինչպես գիտենք դաշնամուրաի կատարյալ նվագը հստակ, իմաստավորված, վառ գեղարվեստական պատկերացումների, ֆիզիոլոգիական և հոգեշարժական գործընթացների միասնական և ներդաշնակ գործելակերպի արդյունք է, ուստի տեխնիկական ոլորտի հետ կապված ցանկացած ֆիզիկական երևույթի ընկալումն ու իրագործումը պայմանավորված է վերոնշված համակցությամբ:

Հայտնի է, որ դաշնակահարի ռացիոնալ կատարողական շարժումների ձևավորումը պայմանավորված է ակտիվ և պասսիվ շարժումների ներդաշնակ համակցումով: Պասսիվ շարժումը նույն վերոնշյալ իներցիոն շարժումն է, երբ ձեռքը շարժման մեջ դնելով՝ հարկ չի լինում լրացուցիչ ֆիզիկական ուժ գործադրել, մատների հետագա գործելակերպը, նրանց հաղորդվող էներգիան կառավարելու համար: Օ.Շուլպյակովը պասիվ (իներցիոն) շարժումները համարելով նվագային գործողության կարևոր բաղադրիչ գտնում է, որ ռացիոնալ կատարողական գործընթաց ձևավորելիս «անհրաժեշտ է սահմանել նվագային շարժումների այնպիսի գործելաձև, որը հնարավորություն է տալիս լայնորեն կիրառել այսպես կոչված *իներցիոն ուժերը*, որոնք անխուսափելիորեն առաջանում են ցանկացած շարժում կատարելիս: ... Այս դեպքում շարժման գործընթացը զգալիորեն կատարվում է ինքնին, շնորհիվ ձեռք բերած շարժման իներցիայի» (5. էջ 95): Անհրաժեշտ է շեշտել այն միտքը, որ իներցիան հնարավոր է, եթե չկան շարժումն արգելակող հանգամանքներ: Նշենք ֆիզիկական մակարդակում ամբողջ ձեռքի ազատ ընթացքն արգելակող երեք կարևորագույն հանգամանք: Առաջինը ուսանողի խիստ ամրակայումն է: Այն պետք է լինի ճկուն, շարժունակ, որով ապահովվում է թևի ակտիվ և անկաշկանդ մասնակցությունը կատարողական գործընթացում: Ս.Սավշինսկին կարևորելով այս հանգամանքը, գրում է. «Այն առաջատար օղակ է դարձել ոչ միայն օկտավային և ակկորդային, այլ նաև «մատների» տեխնիկայի համար» (4. էջ 136): Է.Բախը համարում է, որ «...մարդու ձեռքի առաջնային և հիմնական շարժումը ուսի պտտող շարժումն է և այն միանշանակ պետք է ուսումնասիրվի բոլորի կողմից: Որպես ինքնըստինքյան ստացվող կամ սովորություն դարձած երևույթ՝ այն հասու չէ բոլորին» (4. էջ 46): Երկրորդ անհրաժեշտ պայմանը մատների ակտիվ և հստակ գործելակերպն է: Պասիվ, ոչ հստակ փոխանցումները որոշակի արգելք են ակնկալվող բարդ գործողությունը՝ հնչյունային շարքը ձեռքի մեկ իներցիոն շարժումով միավորելու գործում: Մատների և ամբողջ ձեռքի աշխատանքի փոխադարձ կապը՝ համաձայնեցված գործելակերպը, իրագործվում է

դաստակի միջոցով: Որպեսզի երաժշտական պատկերացումներից առաջացած ձեռքին հաղորդվող ազդակներն առանց արգելակման հասնեն մատի ծայրերին (իսկ դրանք հաճախ կասեցվում են դաստակում և լուրջ մասնագիտական հիվանդությունների պատճառ դառնում), այսինքն ինչպես ֆիզիոլոգներն են բնութագրում այս երևույթը, ապահովվի ձեռքի ֆիզիոլոգիական հաղորդունակությունը. երրորդ կարևորագույն պայմանը դաստակի ակտիվ, աշխատանքային վիճակի առկայությունն է: Այս առումով Ս.Սավշինսկին գրում է. «Այն (դաստակը) հնչարտաբերման տեղի, ուժի և որակի կարգավորիչն է» (4. էջ 163):

Ֆիզիկայից մենք գիտենք, որ իներցիոն, այսինքն՝ «ուղղագիծ հավասարաչափ շարժման վիճակն» առաջանում է ակտիվ գործողության արդյունքում, հետևաբար դաշնամուր նվագելիս իներցիոն շարժումը որպես ամբողջություն ներկայանում է ակտիվ և պասսիվ գործելակերպերի զուգակցումով: Ակտիվ՝ իներցիոն շարժումն սկզբնավորող գործողությունը տեղի է ունենում ռիթմական կամ իմաստային կառույցների հենակետային հնչյունները կատարելիս. հաճախ դրանք համընկնում և հանդես են գալիս միասնաբար: Կարելի է ասել, որ դաշնակահարի զգայուն և կառավարելի տեխնիկական ապարատ ձևավորելու կարևորագույն պայմաններից մեկը, բազմապիսի երաժշտական իմաստային կառույցներին համապատասխան, բազմաբնույթ իներցիոն շարժումներ կազմավորելու և դրանք ճկուն համադրելու կարողությունն է:

Ի՞նչ հատկանիշներով է բնորոշվում իներցիոն շարժումը դաշնամուր նվագելու գործընթացում: Յուրաքանչյուր իներցիոն շարժում ունի սկիզբ և ավարտ, հետևաբար՝ *սահմաններ*: Սահմանները որոշվում են հենակետային հնչյուններով: Ինչպես նշվեց, իներցիոն շարժումը սկզբնավորվում է ակտիվ գործողությամբ, և իներտ վիճակը պահպանվում է մինչև հաջորդ հենակետում ակտիվ գործողություն կատարելը: Սահմանները բնորոշվում են շարժման ժամանակահատվածով և ստեղնաշարով շարժվելու տարածական չափով: Բացի սահմաններից՝ այն ունի նաև *շարժման ուղղություն և բնույթ:* Երաժշտական շարադրանքի համաձայն՝ շարժման ուղղու-

թյունը կարող է լինել վերընթաց կամ վարընթաց, կարող է արտահայտված լինել մեկ դիրքի (պոզիցիայի) սահմաններում մեկ իներցիոն շարժումով միակցված վերընթաց և վարընթաց շարժումների զանազան համադրումներով, որից կարող է ստացվել ձեռքի տարուբերվող, ճոճվող շարժում (օրինակ՝ N1 Ռախմանինով, Պրելյուդ *op.* 32 N 12), կարող է արտահայտել տեղում կրկնվող հնչյունների

օրինակ N1



օրինակ N2



հաջորդականությամբ (օրինակ՝ N 2 Մոցարտ, Սոնատ *K.* N 547*a*) և թվարկված ձևերի բազմապիսի զուգակցումներով: Իներցիայով համակցված կառույցի բնույթը կախված է հնչյունների դինամիկ և ռիթմական հարաբերակցությունից, կատարման եղանակից (շտրիխներից), արագությունից և այլն:

Կատարողական առումով հենակետային հնչյունները արտահայտվում են հենարանի զգացողությամբ: Այն ձևավորում է կատարողական ապարատը, սակայն չի ենթադրում մկանային ամբողջ համակարգի բացարձակ թուլացում, ինչը մկանների աշխատանքային վիճակը խաթարող հանգամանք է: Երբ հնչյունը վերցվում է հենարանի իրական զգացողությամբ, մկանները գտնվում են աշխատանքային, անկաշկանդ գործողություն կատարելու վիճակում, հոդային հանգույցներն ազատվում են ավելորդ, խանգարող լարումներից, ձեռքը պատրաստ է լիցքավորվել աշխատանքային էներգիայով և առանց լրացուցիչ ուժ գործադրելու՝ համապատասխան արագությամբ, ուղղությամբ և ուժգնությամբ շարժվելու դեպի հաջորդ հենակետ: Շարժման արագությունը, դինամիկ հնչողության հզորությունը մեծապես պայմանավորված են հենակետերում դրսևորված ուժային ներգործությամբ, բնականաբար, որպես դրա

արդյունք, ձեռքին հաղորդվող էներգիայի ծավալով, իսկ դա իր հերթին պայմանավորված է որոշակի հնչյունային պատկեր ստանալու ակնկալիքով:

Մեկ իներցիոն շարժումից մյուսին անցնելիս նախորդը կասեցնելու խնդիր է առաջանում: Ինչպես գրում է Օ.Շուլպյակովը՝ ժամանակակից ֆիզիոլոգները, «բացատրելով դաշնակահարի տեխնիկական ապարատի համար անհրաժեշտ մի շարք կարևորագույն ֆիզիոլոգիական մեխանիզմներ, ... ցույց տվեցին արգելակման գործընթացի նշանակությունը նվագելու եղանակները կատարելագործելու հարցում» (5. էջ 86): Այն բավական դյուրին է լուծվում, կարելի է ասել՝ ինքընստինքյան, երբ մեկ ուղղությամբ ընթացող երկարաձիգ հնչյունային շարքում անցումները կատարվում են հավասարաչափ, տարածական և ժամանակային հատվածներում, որը հատկապես բնորոշ է դասական երաժշտությանը: Ըստ էության, ձեռքը, շարժվելով մեկ ուղղությամբ, իներցիայով անցնում է մեղեդային գիծը կազմավորող ներքին ռիթմահնտոնացիոն կառույցների մի հենակետից մյուսը: Այս ամբողջական գործընթացում յուրաքանչյուր հաջորդ հենակետում (ամենաակնթարթայինից մինչև ամենախորը) մեկ ակտիվ գործողության մեջ համակցվում են նախորդ իներցիայի ավարտն ու հաջորդի սկզբնավորումը: Արդյունքում բնականոն կերպով ստացվում է չմասնատված՝ սահուն անցուներով միավորված, ներքին իմաստային կառույցներով արտահայտված ամբողջական երաժշտական գիծ: Երբ կառույցի ներքին բաժանումը արտահայտված է ոչ հավասարաչափ միավորներով, անցումները կարգավորվում են գիտակցված, հստակ ներքին պատկերացումներով, իմաստային-ինտոնացիոն կառույցներով մտածելու կարողությամբ: Խնդիրն առանձնակի բարդություն է ներկայացնում, երբ արագ տեմպերում, հաջորդ հենակետային հնչյունին անցնելիս, անհրաժեշտ է իներցիոն շարժմանը հակառակ, մեծ ինտերվալով ձեռքի տեղափոխություն կատարել դեպի հաջորդ հենակետը (օրինակ՝ N3):

Սկրյաբին, Էտյուդ *op.* 42 N5 (օրինակ՝ N3)



Ձախ ձեռքում տասնվեցերորդականների վեցական խմբավորված յուրաքանչյուր ռիթմական խումբը կատարվում է մեկ վարընթաց իներցիոն շարժումով: Ամեն անգամ, մեկից մյուսին անցնելիս, ձեռքը պետք է շարժման ուղղությունը փոխելով տեղափոխություն կատարի դեպի հաջորդ հենակետային հնչյուն, որի համար անհրաժեշտ է ավարտել, այսինքն՝ կանգնեցնել նախորդ շարժումը: Ընդհանրապես, դաշնամուր նվագելիս զանազան շարժումներ համադրելիս հատկապես բարդանում է մեկից մյուսին անցնելը: Որպեսզի դիտարկվող ունակությունը լինի լիովին կառավարելի և իրավամբ դառնա կատարողի ռացիոնալ տեխնիկայի կարևոր բաղադրիչ, կարևորվում է արգելակման գործընթացի հստակ պատկերացումը՝ իներցիան կասեցնելու պահի գիտակցումը: Հմուտ մանկավարժները, կարևորելով այս գործընթացը, նման դեպքերում մատնանշում են «իներցիայի հաղթահարման անհրաժեշտությունը»: Հայտնի է, որ շարժումը կանգնեցնելիս, արգելակման պահին մարմինն անմիջապես կանգ չի առնում. պայմանավորված շարժման արագությունից, ելնելով այն, թեկուզ և աննշան թվացող ժամանակահատված, շարունակում է ընթացքը: Տվյալ երևույթը պայմանակորեն անվանենք *մնացորդային իներցիոն շարժում*: Եթե մեր առաջադրած օրինակում հաշվի չառնենք մնացորդային իներցիայի գործոնը, փորձենք այն կանգնեցնել սեքստոլի վերջին հնչյունի վրա, իներցիոն շարժումը կանցնի ենթադրվող տարածական և ժամանակային սահմաններից: Մեծ ճիգեր կպահանջվի, ավելի ճիշտ՝ անհնար կլինի հստակ և ճի՛շտ ժամանակին փոխել ձեռքի շարժման ուղղությունը: Վերոնշյալ օրինակում, եթե իներցիան կանգնեցվի դիրքային (պոզիցիոն) տեղափոխություն կատարելուց հետո, ռիթմական կառույցի նախավերջին հնչյունի՝ փոքր օկտավայի դո դիեզի վրա,

ապա ձեռքը կանգ առնելով այդ կետում, կպահպանի մնացորդային իներցիայի զգացողությունը. վերջին հնչյունը կկատարվի ափի և մատների ակտիվ գործողությամբ, մնացորդային, մարող իներցիոն շարժումով: Ներկայացված օրինաչափություններով ամբողջական իներցիոն շարժումը կկատարվի համապատասխան սահմաններում: Երբեմն վիրտուոզ ստեղծագործություն կատարելիս, զանազան պատճառներով, առավել հաճախ՝ հուզմունքից, կատարողը «կորցնելով» իներցիայի արգելակման պահը, «դուրս է պրծնում» շարժման համար նախատեսված սահմաններից՝ խաթարվում է շարժումների կանոնավորված ընթացքը, ինչը կատարման խափանումների պատճառ է դառնում: Հարկ ենք համարում նշել, որ արգելակման գործընթացը չի կարող միշտ միևնույն կերպով ձևավորել: Ելնելով կատարվող կառույցի առանձնահատկություններից /տարածական և ժամանակային սահմաններից, կառույցի ներսում դիրքային տեղափոխության բնորոշիչներից, ինտերվալային. ռիթմական հարաբերակցություններից և այլն) կանգնեցնելու պահը տարբեր պարագաներում տարբեր կերպ է որոշվում: Վարպետ կատարողը բավական հեշտ է լուծում այս խնդիրը. որոշ դեպքերում այն պայմանավորված է շարժումները կազմակերպելու բնատուր օժտվածությամբ, առավել հաճախ՝ գրագետ, հմուտ մանկավարժի օգնությամբ ձեռք բերած կարողություններով: Ընդհանրացնելով, նշենք Ն.Բեռնշթեյնի այն միտքը, որ «Սենսորային շտկումները բացահայտելու փուլն անվիճելիորեն կարողության կազմավորման տարբեր փուլերից ամենաաշխատատարն է» (3. էջ 181):

Որոշակի դինամիկայով և տեմբրով բնական հնչյունային հեռանկար ստանալու խնդրում իներցիայի դերը նշանակալի է: պանդաղ, արտահայտիչ ինտոնավորում պահանջող երաժշտություն կատարելիս ձեռքի իներտ (պասսիվ) վիճակը թույլ է տալիս առանց ավելորդ լարումների, առանց ձեռքի ակտիվ գործողությունների՝ մատների հստակ փոխանցումներով հենարանի զգացողությունը փոխանցել ստեղնից ստեղն, ստանալ արտահայտիչ հնչողությամբ, ձեռքի «մեկ շնչով» կատարվող, սահուն անցումներով ամբողջական հնչյունային գիծ: Երբ ուսանողը չի տիրապետում այս կարո-

ղությանը, հոգեկան մեծ լարումներով փորձում է կառավարել հնչարտաբերման՝ համապատասխան դինամիկ կառուցվածքով ֆրազավորում ստանալու գործընթացը (սա ավելի մեղմ, մյուսն ավելի ուժեղ և այլն), արդյունքում ստացվում է «շինծու», արհեստական հնչյունային բնորոշիչներով արտահայտված կատարում: Ճկուն և բնական կատարման հարցը մնում է չլուծված: Արագ ելևեջներ կատարելիս առավել դյուրին է լինում կառույցի ներսում՝ ձեռքի պասիվ շարժման պայմաններում պահպանել հնչյունների համաչափ դինամիկ ընթացքը, ճկուն և սահուն փոխելով շարժման ուղղությունը, լայն ինտերվալներով դիրքային (պոզիցիոն) տեղափոխումներ կատարել:

Ուսումնակատարողական գործընթացում իներցիան դրական դրսևորում է ստանում, երբ դառնում է կառավարելի՝ կազմավորվում է կատարման մեկնաբանությանը համապատասխան. երբ մինչ շարժումն սկսելը կատարողը հստակ պատկերացնում է կատարվելիք երաժշտական կառույցն կատարողական իր բոլոր բնութագրումներով, իներցիոն շարժմանը վերաբերող վերոնշյալ հատկանիշներով՝ ծավալով, ձևով, կառուցվածքի ռիթմական և դինամիկ հարաբերակցությամբ, ընդհանուր դինամիկ հնչողությամբ, կատարման արագությամբ, շարժման ուղղվածությամբ և այլն՝ այսինքն՝ այն ամենով, որով բնորոշվում է գեղարվեստորեն իմաստավորված կատարումը: Գտնելով ակտիվ գործողության՝ հենակետային հնչունը կատարելու զգացողությունը, համապատասխան թափ և ուղղվածություն հաղորդելով ամբողջ շարժմանը՝ հնարավոր է դառնում ձերբազատվել կառույցի ներսում յուրաքանչյուր հնչյունը կառավարելու անհրաժեշտությունից, երաժշտական իմաստային կառույց ստանալու առումով հոգեկան և ֆիզիկական լարումներից: Կատարման այս եղանակն առավել կատարյալ է դրսևորվում, երբ տարաբնույթ շարժումների և մկանային զգացողությունների հաջորդաբար ընթացող շղթան այնպես է կազմավորվում, որ մեկից մյուսին անցնելը կատարվում է սահուն և հստակ:

Այս ունակությունը ճկուն և շարժունակ է իր ամբողջության մեջ, կարելի է ասել՝ դաշնամուրի *ռացիոնալ* կատարողական տեխնիկա-

յի կարևորագույն բաղադրիչներից է: Աստիճանա- բար, գեղարվեստական մտածողության զարգացմանը զուգահեռ, այն որակապես փոփոխվում և զարգանում է. կատարողը գտնում է ակտիվ և պասսիվ գործոնների փոխկապակցված միակցության բազմապիսի, առավել բարդ և նրբին տարբերակներ: Ինչպես շարժումները, այնպես էլ ամբողջական հնչյունային գիծը ստանում են առավել ճկուն և բնական արտահայտություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆիզիկա, հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք: Երևան, 2007:
2. Бах Э., Рациональная фортепианная техника., Апоян Ш., Золотова И., Из истории Фортепианной педагогики и исполнительского искусства XX века, Ер.:Комитас, 1998.
3. Бернштейн Н., Очерки по физиологии движений и физиологии активности., М., 1966.
4. Савшинский С., Пианист и его работа., Л., 1961.
5. Шульпяков О., Музыкально-исполнительская техника и музыкальный образ., Л., 1986:

Резюме

Статья доцента АГПУ им.Х.Абовяна А.М.Испирян раскрывает роль и значение фактора инерции в сложном процессе формирования рациональных исполнительских движений. В статье освещен как физиологический, так и исполнительский аспект вопроса.

Summary

Docent in YSPU after Kh.Abovyan Hasmik Merujan Ispiryan wires the article "The factor of inertia in the motion formation process of pianist's rational performing". During his education the musician should follow the above mentioned methods so as to reach artistic meaningful performing.

ԿԱՐՈՅԱՆ ՄԱՐԻՆԱ ՌԱՖԻԿԻ
դաշնակահար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ դոցենտ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՆՇԱՆՈԹ ՏԵՔՍՏԻ ԹԵՐԹԻՑ ԿԱՐԴԱԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓՈՒԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

20-րդ դարի վերջերից որոշակիացան տարրական, միջին և բարձրագույն կրթության հանդեպ նոր մոտեցումներ: Ավելի ու ավելի մեծ ճանաչում է ստանում այնպիսի կրթությունը, որն ուղղված է դեպի ուսումնական գործունեության ակտիվացում, դեպի աշակերտի կամ ուսանողի մտածողության տարբեր կողմերի զարգացում: Իրականում, երաժշտական մանկավարժության բնագավառում արդեն իսկ ընդգծվել են *զարգացնող ուսուցման* սկզբունքները: Դրանք են.

- ուսումնամանկավարժական աշխատանքում օգտագործվող նյութի ծավալի մեծացում ու նվագացանկի մեծացում՝ ի հաշիվ ավելի մեծ թվով երաժշտական ստեղծագործությունների հետ ծանոթության,
- ուսումնական նյութի որոշակի մասի արագ ուսուցում,
- ուսանողի ինքնուրույնության, ստեղծագործական նախաձեռնողականության ակտիվացում, որը սերտորեն կապվում է ուսուցման ինտենսիվացման հետ:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ թերթից կարդալը երաժշտի հինգ հիմնական ունակություններից մեկն է, ուսանողի թերթից կարդալու ունակությունը զարգացնելը դառնում է ընդհանրապես երաժիշտ կրթելու առաջնային հրամայականներից մեկը: Առանց թերթից կարդալու ունակության ուսուցման, երաժշտական կրթությունը հանգում է լիմիտավորված թվով երաժշտական նյութի ուսուցման՝ լսողական և մկանաշարժողական վարժեցման միջո-

ցով, ինչը նկատելիորեն սահմանափակում է ընդլայնված երաժշտական մտածողության զարգացումը: Միևնույն ժամանակ, այդ պակասը զրկում է ուսանողին երաժշտական նյութի հետ ազատ վերաբերվելու հնարավորությունից, երաժշտական ինքնուրույնությունից, ստեղծագործական նախաձեռնությունից՝ մեծապես կախման մեջ պահելով նրան դասախոսի երաժշտական նախընտրություններից:

Մասնագիտական գործունեության մեջ նոտային տեքստը հանպատրաստից նվագելու ունակությունը նպաստում է ոչ միայն երաժշտական մտահորիզոնի ընդլայնմանը, տարատեսակ երաժշտական գիտելիքների ձեռքբերմանը, այլև խթանում է ուսանողի երաժշտական մտածողության բազմազան գործընթացները: Երաժշտական ստեղծագործության հետ նախնական ծանոթության կարևորությանն են անդրադարձել բազմաթիվ հանրաճանաչ կատարողներ, որոնք առաջնային դեր են հատկացնում թերթից վարժ կարդալուն, «քանի որ,- ինչպես գրում է Գ.Մ.Կոգանը – որքան վարպետորեն է կատարողը կարդում թերթից, այնքան ավելի արագ է ձևավորվում ընդհանուր պատկերացումն ստեղծագործության և հետևաբար, դրա հետագա մեկնաբանման մասին» (1. էջ 343):

Անծանոթ երաժշտական տեքստը հանպատրաստից թերթից կարդալու գործընթացի մեր վերլուծությունը ցույց է տալիս այդ գործընթացի բարդությունը, որը Ջ. Սերջենթը դիպուկ բնութագրել է, գրելով. «Դժվար է պատկերացնել մարդկային գործունեության մեկ այլ տեսակ, որն այդքան շատ գործընթացների պահանջ զգա՝ դրանց անհապաղ իրականացման պահանջով» (2. էջ 169):

Ուսուցման բուհական համակարգում, որտեղ ուսանողից պահանջվում է երաժշտական գրականության հնարավորինս լայն իմացություն, թերթից լավ կարդալը դառնում է անհրաժեշտ ունակություն: Այն օգնում է ուսանողին ավելի հմուտ և ճշգրիտ ծանոթանալ ստեղծագործությանը՝ հետագայում ավելի դյուրին դարձնելով անցումը աշխատանքի մյուս փուլին, երբ այդ երաժշտությունը ավելի խորը հասկանալու և վերարտադրելու խնդիր է դր-

վում: Միևնույն ժամանակ, այս ունակության շնորհիվ ուսանողն սկսում է ավելի լավ հասկանալ երաժշտությունն ընդհանրապես, ինչը նպաստում է երաժշտական գործունեության հանդեպ մոտիվացիայի ձևավորմանը:

Մեր ուսումնասիրությունների արդյունքները (3. էջ 115-135) ցույց են տվել, որ թերթից կարդալու առաջադրանքի բարդության տարբեր մակարդակներում մտավոր կարողության, թերթից կարդալու փորձի և հոգեշարժողական (տերմինը վերցված է հոգեբանու-թյունից.-*Մ.Կ.*) ունակությունների հանդեպ պահանջները տարբեր են: Առաջադրանքի պահանջների բարդությունից ելնելով, նյարդային համակարգը այն լուծելու համար միշտ օգտագործում է լավագույն տարբերակը: Տարբեր բարդության առաջադրանքների կատարման հիմքում ընկած բաղադրիչ մասերի վերաբերյալ մեր ստացած տվյալները կարելի է կիրառել *սկսնակների* թերթից կարդալու ունակության մշակման տարբեր փուլերի առավել արդյունավետ կազմակերպման նպատակով: Դրանք կարող են օգնել ուսուցման հաջորդական փուլերում դասավանդման մեթոդների մշակմանը, մեթոդներ, որոնք առավելագույնս կնպաստեն մեր ուսանողի թերթից կարդալու ունակության ձևավորմանն ու դրա հետագա փուլային զարգացմանը:

Տողերիս հեղինակի կարծիքով թերթից կարդալու ուսուցման մեթոդիկան պետք է ենթարկվի ընդհանուր մանկավարժական օրինաչափություններին և հենվի մատչելիության և աստիճանականության սկզբունքների վրա: Այս կամ այն մեթոդներն օգտագործելիս, մենք՝ մանկավարժներս, սովորաբար օգտվում ենք յուրահատուկ մեթոդից, այն է՝ մի քանի մեթոդների փոխկապակցում, որը թելադրվում է տարբեր մեթոդների (բացատրություն, ցուցադրում՝ սեփական նվագ, ուսանողի ակտիվացում, հարցերի առաջադրում, կրկնողություն, և այլն) փոխկապակցվածությամբ: Երաժշտական ուսուցման բարդ գործընթացում, հատկապես այն մասը, որ անվանում ենք *թերթից կարդալ*, իր հերթին առաջադրում է տարատեսակ խնդիրներ: Դրանց լուծումը միշտ պետք է կոորդինացնի և ուղղորդի մանկավարժը՝ անհատական մոտեցմամբ

նախանշելով ուսանողի զարգացումը: Երաժիշտ ուսանողների հետ աշխատանքի ամենակարևոր և անհրաժեշտ կողմը նրանց անհատական հնարավորությունների, առանձնահատկությունների, ընդունակությունների հետ հաշվի նստելն է: Այդ պայմանից դուրս անհատական ուսուցումը (որ երաժշտական կատարողական բոլոր տեսակի ուսուցումների, այդ թվում նաև թերթից կարդալու ուսուցման միակ ձևն է), բացարձակապես անիմաստ կդառնա:

Այսպիսով, ի՞նչ պետք է անպայման հաշվի առնի մանկավարժը՝ ուսանողի թերթից կարդալու ունակության ձևավորման և զարգացման ժամանակ:

- *ուսանողի հնարավորություններից ելնելով* – երաժշտական լսողության, ռիթմի, հիշողության առանձնահատկությունները, մտածողության, մասնավորապես երաժշտական մտածողության զարգացման հնարավորությունները, նյարդային համակարգի տեսակը,
- *ուսանողի առանձնահատկություններից ելնելով* – երաժշտական օժտվածության առանձնահատկությունները.
- *ուսանողի ընդունակություններից ելնելով* – ներքին լսողությունը, կոորդինացիայի ընդունակությունը, երաժշտական կերպարներով մտածելու ընդունակությունը:

Տողերիս հեղինակի կացիքով, թերթից կարդալու ուսուցումը պետք է տարվի **երեք փուլերով**.

- ունակության զարգացման ըմբռնման փուլ և վերլուծիչների (տեսողության, լսողության, շոշափելիքի՝ տերսինը՝ հոգեբանությունից.-*Մ.Կ.*) կոորդինացիա,
- ունակության զարգացման պատկերացումների փուլ,
- ունակության զարգացման մտավոր փուլ:

Թերթից կարդալու ունակության ձևավորման և զարգացման ամենաարդյունավետ մեթոդ կարող է լինել այն մեթոդը, որի շեշտադրումը կլինի գործընթացի մեջ ներգրավված բոլոր բաղադրիչների միաժամանակյա և համակարգված աշխատանքը:

Ուսուցման առաջին փուլում ուշադրության կիզակետում

պետք է լինի նախ և առաջ ըմբռնումն ու վերլուծիչների աշխատանքի կոորդինացիան: Առանց այդ կոորդինացիայի՝ թերթից կարդալու որակի մասին խոսք լինել չի կարող: Ուսուցման այս փուլում կարևոր է ուշադրության կենտրոնում պահել տեսողալսողական և տեսողամկանաշարժման գործընթացները, մանրակրկիտ զարգացնել աչք-ականջ-ձեռք-ականջ հետադարձ կապը՝ դրանով իսկ ակտիվացնելով համապատասխան վերլուծիչների կոորդինացված աշխատանքը: Թերթից կարդալու գործընթացի վերլուծությունը վեր է հանում ուսուցման նախնական փուլի առաջնային պայմանները, առանց որոնց հնարավոր չէ իրականացնել տվյալ գործընթացը:

Դրանք են.

- նոտային նշանային լեզվի իմացություն (որով պայմանավորված է նոտային նշանների արագ և ճշգրիտ տարբերակումը),
- ստեղնաշարի վրա նոտաները գտնելու ունակություն (որով պայմանավորված է ստեղնաշարով կողմնորոշման, ինչպես նաև նոտային նշանների հանդեպ մկանաշարժումների հակազդեցության արագությունն ու ճշգրտությունը):

Թերթից կարդալու ունակության զարգացման **երկրորդ փուլում** արդեն գործ ունենք տեսողական, լսողական և մկանաշարժման տարբեր պատկերացումների զարգացման հետ: Այն երաժշտական լսողության տարբեր տեսակների (հատկապես դրա մեղեդային, հարմոնիկ, պոլիֆոնիկ և ներքին լսողության) զարգացման, մետրառիթմական, տեսատարածական պատկերացումների, տարատեսակ (տեսողական, լսողական և մկանաշարժման նմանօրինակների) արագ ճանաչման մասին է: Այսպես, մեղեդային շարժումը արագ է ըմբռնվում, եթե նոտային նշանները խմբավորում ենք՝ ըստ դրանց երաժշտության իմաստալից պատկանելիության: Այդ դեպքում ձևավորվող լսողական պատկերացումները ասոցիացիայով կապակցվում են ստեղների տեսողական պատկերացումների և մկանաշարժումային զգացողությունների հետ: Նման մեղեդային պատկերների հետ կրկնակի հանդիպման դեպքում (վերընթաց, վարընթաց, արպեջոյանման, և այլն) դաշ-

նակահարը դրանք հեշտությամբ նկատում է և կրկնակի վերլուծման կարիք գրեթե չի զգում: Մեղեդային գոյացությունների (սկսած ամենապարզ ինտոնացիաներիցկամ ֆրազներից մինչև զարգացած մեղեդիները) միաժամանակյա ըմբռնումը հատկապես կարևորվում է երաժշտական բազմաձայն ֆակտուրա կարդալիս, որ չափազանց հաճախ է հանդիպում հատկապես նվագակցության նվագաբաժիններում: Մեղեդային պատկերացումները զարգացնելու շատ արդյունավետ միջոց է միևնույն մեղեդու կատարումը այլևայլ տոնայնություններում, տարբեր տեմպերում և դաշնամուրի տարբեր ռեգիստրներում: Այս պարամետրերից յուրաքանչյուրի փոփոխությունը փորձառության լավ աղբյուր է ուսանողի համար:

Թերթից կարդալու ունակության զարգացման ընթացքում ուսանողի հարմոնիկ պատկերացումների զարգացման վրա աշխատելիս բավական արդյունավետ կարող է լինել հարմոնիկ ֆակտուրան ակկորդային հաջորդականության վերածելու հնարը, որը հնարավորություն կընձեռի ուսանողին՝ ավելի լավ պատկերացնել երաժշտական տվյալ հատվածի հարմոնիկ տրամաբանությունն ու նրա զարգացման դինամիկան: Այդպիսի հաջորդականությունը օգտակար է նվագել՝ պահպանելով դրա ճշգրիտ տևողությունը, առանց տակտի մյուս հատվածներում դրանց կրկնության: Այս դեպքում հաճախ բացահայտվում է հետաքրքրական ռիթմ՝ կապված հարմոնիաների փոփոխման հետ: Բավականաչափ վարժվելու դեպքում այսպիսի պատկերացումները ստեղծվում են նաև մտավոր մակարդակում, առանց նախօրոք նվագելու և հանդիսանում են նոր ստեղծագործության նոտային տեքստում արագ կողմնորոշման ամենակարևոր պայմաններից մեկը: Երեք և ավելի հնգագծերի վրա շարադրված նոտային տեքստը նվագելու համար (որ տարբեր մանկական երգերի ձևով վստահաբար հաճախ կհանդիպի մեր ուսանողը՝ իր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում) հարմոնիկ ֆակտուրայի արագ բացահայտումը անհրաժեշտ պահանջ է:

Ուսանողի մետրառիթմական պատկերացումները լավ զարգա-

նում են, եթե թերթից կարդալու ընթացքում օգտվում են մետրոնոմից: Այս գործիքը թույլ չի տալիս շեղվել տեմպից, մետրից՝ անհրաժեշտություն ստեղծելով անընդհատ հաշվել բարդ ռիթմական գոյացությունները:

Ինչ վերաբերում է տարատեսակ օրինակ նմուշների (շաբլոն՝ էտալոնների) ճանաչմանը, ապա շատ արդյունավետ է տվյալ ստեղծագործությանը առանց դաշնամուրի ծանոթանալու մեթոդը: Օգտագործելով իր ամբողջ երաժշտական տեսական գիտելիքները ուսանողը փորձում է իրեն ծանոթ նմուշներ գտնել: Տեսողական իմացության (տեսնելով հասկանալու) այս մակարդակում աշխուժանում են նաև նրա տեսատարածական պատկերացումները՝ կապված կարճ նմուշների պատկերացման հետ:

Տեսողալսողական և լսողաշարժողական պատկերացումների զարգացման գործում մեծ դեր է խաղում նաև ստեղծագործության մտովի, տեսողական վերլուծությունը: Վերջինիս հիմքի վրա ակտիվորեն ձևավորվում են նաև տեխնիկական պատկերացումները: Նոտային տեքստի այսպիսի վերլուծության ընթացքում ուսանողին պետք է սովորեցնել այն կատարել որոշակի հաջորդական քայլերով՝ սկսելով ստեղծագործության անվանումից, որը հաճախ բանալի է դրա բնույթն ու ժանրը որոշելու համար:

Ստեղծագործության այսօրինակ վերլուծությունը նպատակահարմար է կատարել հետևյալ հաջորդականությամբ.

1. երաժշտության բնույթը,
2. ստեղծագործության մետրը,
3. ստեղծագործության տոնայնությունը, հարմոնիկ հաջորդականությունները, հանդիպող մոդուլյացիաները,
4. ֆակտուրայի առանձնահատկությունները,
5. մեղեդու բնորոշ առանձնահատկությունները (գամմայաձև, եռահնչյան աստիճաններով, թռիչքային շարժումներ),
6. ռիթմական օրինաչափությունները,
7. նյութի ռեգիստրային յուրահատկությունները,
8. մեղեդու մասերը (մոտիվներ, ֆրազներ, նախադասություններ),

9. մեղեդային և հարմոնիկ կրկնողությունները,

10. կատարողական նրբությունները (դինամիկա, արտիկուլացիա, տեմպ, պեդալավորում, ապլիկատուրա, շտրիխներ):

Ուսուցման այս փուլը հաղթահարելուց հետո անցում է կատարվում ունակության զարգացման **երրորդ փուլին**: Սա մտավոր փուլն է, որտեղ առաջին քայլը ուսանողին՝ ստեղծագործության երկաստիճան վերլուծության ձևերին ծանոթացնելն ու ուսուցանելն է:

Դրանք են.

- ստեղծագործության ձևի, լադի, ժանրային յուրահատկությունների ընդհանուր վերլուծություն,
- երաժշտական լեզվի արտահայտչամիջոցների (ինտերվալներ, ակկորդներ, ռիթմական խմբեր) վերլուծություն:

Հայրկ է նշել, որ վերլուծության ուսուցման ընթացքում չարժե երկար ծամանակ կանգ առնել դյուրին նյութի վրա: Ավելի ցանկալի է հնարավորինս արագ բարդացնել հետազոտվող նյութը, ինչը կնպաստի ուսանողի երաժշտական մտածողության արագ զարգացմանը:

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ թերթից կարդալու ունակության ձևավորման յուրաքանչյուր փուլ ունի իր առանձնահատկությունները, և փուլերի հաջորդականության պահպանումը կնպաստի այս ունակության զարգացման առավել արդյունավետ ընթացքին:

Թերթից կարդալու գործընթացում կատարողի գիտակցության մեջ արտացոլվող երաժշտական կերպարի ստեղծարար բաղադրատարրերի միասնական առկայության դեպքում միայն կարելի է խոսել երաժշտական մտածողության մասին:

Այժմ հակիրճ նշենք այն հիմնական տարբերությունները, որ գոյություն ունեն մենակատար նվագելու համար նախապատրաստվող նյութերով աշխատելու և թերթից կարդալու ունակությունը զարգացնելու համար պարապմունքների միջև.

N	Մենակատար պարապմունքներ	Թերթից կարդալու պարապմունքներ
1	Ուշադրության կենտրոնում է ստեղծագործության ձևն ու բովանդակությունը	Ուշադրության կենտրոնում է ստեղծագործության ռիթմն ու մետրը
2	Տարրերը (դետալները) կարևոր են	Կարևոր է մեծ պատկերը
3	Ճիշտ ապլիկատուրան անհրաժեշտ պայման է	Նոտային նշանները ամեն կերպ վերածում ենք հնչյունի
4	Նվագելիս նայում ենք ձեռքերին	Խուսափում ենք ձեռքերին նայելուց
5	Խուսափում ենք սխալներից և սայթաքումներից	Սխալներն ու սայթաքումներն ընդունելի են

Թերթից կարդալու ունակության ձևավորման նպատակով օգտագործվող մեթոդները պետք է ուղղված լինեն հետևյալ ենթաունակությունների զարգացմանը.

1. նոտային նշանների արագ և ճշգրիտ ճանաչում,
2. ստեղնաշարին նոտաների տեղը գտնելու արագություն և ճշգրտություն,
3. նվագային շարժումների արագություն,
4. կարճատև տեսողական հիշողություն,
5. օպերատիվ հիշողություն,
6. երկարատև հիշողություն,
7. տեսողա-լսողա-մկանաշարժումների հիշողություն,
8. տեսողա-լսողա-մկանաշարժումների ներքին պատկերացումներ,
9. ուշադրության կենտրոնացում,
10. երաժշտական երևակայություն,
11. երաժշտական կանխալսում,
12. երաժշտական մտածողություն:

Արդեն նշել ենք, որ թերթից կարդալու գործընթացն ամբողջությամբ, ինչպես նաև դրա առանձին բաղկացուցիչները, բնութագրվում են իրենց ալգոռիթմիկ հաջորդականությամբ: Հիմք ըն-

դունելով դա, համարում ենք, որ անծանոթ նոտային տեքստը հանպատրաստից կարդալ՝ նվագելու ունակության ձևավորումը, ինչպես նաև վերը նշված ենթաընդունակությունների զարգացման գործընթացը նույնպես նպատակահարմար է բերել ալգոռիթմային ձևի:

Նվագացանկ

Անծանոթ երաժշտական տեքստ կարդալ՝ նվագելու ունակությունը ձևավորելու և զարգացնելու համար մանկավարժը նախ և առաջ պետք է հստակ պատկերացնի, թե ինչ երաժշտական նյութով դա կարելի է իրականացնել: Հենց սկզբից նշենք, որ դա, անկասկած, պետք է արվի միայն բարձրակարգ, հետաքրքրական և գրավիչ երաժշտական նմուշներով: Ուսման ցանկացած փուլի համար նվագացանկ ընտրելիս պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ թերթից կարդալու նախատեսված երաժշտական նյութը ուսանողի երաժշտական ընդհանուր պատրաստվածությունից մեկ կամ նույնիսկ երկու աստիճան ավելի պարզ, դյուրին լինի: Ապա արվում է այն պատճառով, որ որևէ նոր ունակություն ձևավորելու կամ այն զարգացնելու համար մանկավարժը պետք է առավելագույնս պարզեցնի երաժշտական մյուս բաղադրությունները:

Ներկայացնենք տարբեր ժամանակաշրջանների ու ոճերի նվագացանկի որոշ նմուշներ, որոնք կարող են օգտագործվել սկսնակների շրջանում թերթից կարդալու ունակության ձևավորման ու զարգացման նպատակով:

Բարոկկո

1. Յ.Ս.Բախի շատ ստեղծագործություններ, որոնց թվում՝ «Աննա Մագդալենա Բախի նոթատետրը», Փոքրիկ պրելյուդիա և ֆուգաները, Երկձայն ինվենցիաները, Անգլիական և Ֆրանսիական սյուիտներից որոշ հատվածներ,
2. Հ.Փրսելի և Գ.Հենդելի Սյուիտներից առանձին մասեր:

Դասական

1. Ֆ.Կուլաուի, Մ.Կլեմենտիի, Ա.Դիաբելլիի, Լ.վ.Բեթհովենի Սո-

նատինաները (սրանք նմուշ օրինակների անփոխարինելի շտեմարաններ են, ինչպես նաև դաշնակահարի տեխնիկական զարգացմանը նպաստող հիանալի նմուշներ),

2. Վ.Ա.Մոցարտի և Լ.վ.Բեթհովենի Վարիացիաները (հատկապես հարմար են, քանի որ պարունակում են կարճ կտորներ, որոնց վրա մանկավարժի համար հեշտ է աշխատելը),

3. Յ.Հայդնի, Վ.Ա.Մոցարտի և Լ.վ.Բեթհովենի Պարերը (գերմանական պարերի, լենդլերների ու էկոսեզների երաժշտությունը չափազանց գեղեցիկ է, ուսանողին հասկանալի, նվագելուն հարմար և, միևնույն ժամանակ, շատ նմուշ օրինակներ է պարունակում):

Ռոմանտիկ

1. Է.Գրիգի «Քնարական պիեսներ»ի 10 տետրը,

2. Ֆ.Շոպենի շատ ստեղծագործություններ, հատկապես դյուրին Պրելյուդները, Վալսերը, Մազուրկաները և որոշ Պոլոնեզներ,

3. Ռ.Շումանի «Պատանեկան ալբոմ»ի շատ պիեսներ:

Ժամանակակից

1. Բ.Բարտոկի շատ ստեղծագործություններ, ինչպես օրինակ, «Երեխաների համար», «10 դյուրին պիես», «Ռումինական ժողովրդական պարեր», «Միկրոկոսմոս» (հատկապես 1-3 տետրերը) ժողովածուները (ուսանողի շփումը պենտատոնիկ երաժշտական մտածելակերպի հետ կարող է մեծապես նպաստել նրա մոտ դիսոնանսի նկատմամբ հոգեբանական անհանդուրժողականության վերացմանը),

2. Ա.Խաչատրյանի և Դ.Կաբալևսկու դյուրին ստեղծագործությունները (հիանալի օրինակներ են ռիթմիկ և մեղեդային նմուշներ սովորեցնելու համար):

Գնահատման չափանիշներ

Ինչպես ամեն մի, այլ այնպես էլ անծանոթ երաժշտական տեքստը կարդալ՝ կատարելու գործընթացին անդրադառնալիս, ուսումնական գործընթացը նպատակահարմար է բաժանել երեք փուլի.

1. դիագնոստիկ,
2. վարժեցնող-զարգացնող,
3. ստուգող:

Թերթից կարդալու ունակությունը դրսևորվում է ցածր, միջին և բարձր մակարդակներով:

Ցածր մակարդակով թերթից կարդալուն բնորոշ է երաժշտական տեքստի ուսանողի բավարար կատարումը, որի ընթացքում իրար հաջորդող նոտային նշանները միշտ չէ, որ միակցված են երաժշտական «շարահյուսության» օրենքով, հանդես չեն գալիս որոշակի իմաստային միավորների՝ մոտիվների, ֆրազաների կամ նախադասությունների ձևով: Բացակայում է ներքին տրամաբանությունը, իմաստավորումն ու զգացմունքային երանգավորումը: Թերթից ցածրորակ կարդալուն, որպես օրենք, բնորոշ է մանրակրկիտ, մեխանիկական անցում՝ նոտայից նոտա: Աշխատում է թերթից կարդալու պերցեպտիվ մակարդակը: Տեղի է ունենում առանձին նոտաների տեսողական ըմբռնում, առաջանում են առանձին նոտաների, առանձին մանուալային շարժումների և առանձին ստեղների պատկերացումներ:

Վերն ասվածից բխում է, որ ունակության ցածր մակարդակ ունեցող ուսանողին առաջադրված ստեղծագործությունը պետք է լինի փոքրածավալ, թափանցիկ ֆակտուրայով, վառ արտահայտված մեղեդիով և պարզ նվագակցությամբ, հասարակ ռիթմիկ պատկերով և հասկանալի հարմոնիայով: Այս կարգի ստեղծագործությունների մտովի կարդալը, մտովի նվագելն ու դաշնամուրիով նվագելը սկսնակների համար շատ ավելի հեշտ է:

Ցածր մակարդակով թերթից կարդալու գնահատման չափանիշները կարող են լինել.

1. Ուսանողը, թեկուզ և սխալներով, երաժշտական տեքստը նվագում է մինչև վերջ., մեղեդու կատարումը մոտ է տեքստին,
2. Նրա կատարումն առանձնանում է գոնե ամենապարզ դինամիկ բազմազանությամբ (ֆորտե պիանոյի մակարդակում):

Միջին մակարդակով թերթից կարդալուն բնորոշ է ուսանողի

երաժշտական տեքստի կատարումը՝ ոչ մեծ անճշտություններով, բայց արդեն ավելի լավ գիտակցված երաժշտական ավարտուն մտքերով: Կատարման գեղարվեստական կողմը ավելի բարձր է, ուսանողը ավելի ճշգրիտ է ներկայացնում ստեղծագործության դինամիկ զարգացումը, ավելի արտահայտիչ է դառնում ֆրազավորումը: Աշխատում է թերթից կարդալու պատկերացումային մակարդակը: Առաջանում են պատկերացումներ նոտաների փոքր խմբերի (ինտերվալներ, մոտիվներ) և տեխնիկական պարզ ֆորմուլաների (գամմաներ, արպեջո) վերաբերյալ: Առաջանում են տեսա-լսողա-շարժողական հստակ պատկերացումներ:

Այս մակարդակին հարմար են միջին ծավալի ստեղծագործություններ, որոնք, սակայն, պետք է լինեն քիչ թվով նշաններ ունեցող տոնայնություններում: Ֆակտուրան՝ ավելի հագեցված աջ ձեռքում, և ավելի թեթև՝ ձախում: Տեմպերը պետք է լինեն դանդաղից՝ միջին: Ավելի պարզ ֆակտուրաների դեպքում կարելի է օգտագործել նաև արագ տեմպով ստեղծագործություններ: Միջին մակարդակով թերթից կարդալու գնահատման չափանիշները կարող են լինել.

1. Տեքստը նվագվում է ավելի ճշգրիտ, քան ցածր մակարդակում,
2. Ձախ ձեռքի նվագակցությունը տեքստին մոտ է նվագվում,
3. Ֆրազավորումն ավելի իմաստալից է,
4. Ստեղծագործության դինամիկան և երաժշտական մտահղացումը առավել կամ նվազ արտահայտված են:

Թերթից կարդալու ***բարձր մակարդակը*** ենթադրում է, որ ուսանողը ի վիճակի է ներկայացված երաժշտական տեքստը կարդալ (հասկանալ՝ մինչև այն նվագելը, լավ կողմնորոշվել նոտային կառուցվածքների ուրվագծերով, մի հայացքով «վերցնել» մեղեդային պատկերների ընդհանուր տեսքը՝ հստակ որոշակիացնելով ձայնային միջավայրում դրանց ուղղվածությունը: Ունակության այս մակարդակում ուսանողները տեքստում ճանաչում և դաշնամուրով վերարտադրում են տարբեր ակկորդային ստերեոտիպեր

(եռահնչյուններ, *D7*, դրա շրջվածքները, և այլն)՝ ըստ դրանց արտաքին տեսքի: Ճշտելով որևէ ակկորդային ուղղահայացի ներքևի ձայնը, նրանք, առանց ընդգծված դժվարության, գուշակում են մնացած ձայները՝ ըստ դրանց միջև եղած տարածությունների, այսինքն՝ նրանք, արդեն իսկ ընբռնում են ակկորդային այդ ուղղահայացը՝ որպես մի միասնական, ամբողջական ձայնային պատկեր: Այս դեպքում այլևս յուրաքանչյուր նոտա առանձին-առանձին վերծանելու անհրաժեշտություն չի զգացվում: Նոտային տեքստի այսպիսի ընթերցումը հնարավորություն է ստեղծում ամբողջովին կենտրոնանալ ստեղծագործության, կամ գոնե դրա մի հատվածի բովանդակության, ձևի, կառուցվածքի, ինտոնացիոն, հարմոնիկ և ռիթմիկ առանձնահատկությունների վրա, որն էլ, իր հերթին, ապահովում է թերթից կարդալու բարձր մակարդակ: Նոտային տեքստը ներքուստ կարդալ՝ հասկանալու ուսանողի ունակությունը նպաստում է նրա համապատասխան ներքին երաժշտալսողական պատկերացումների ձևավորմանը, որոնք հետագա կատարման ժամանակ ծառայում են որպես հուսալի հիմք՝ նկատելիորեն փոքրացնելով սխալների և սայթաքումների թիվը: Այս մակարդակում թերթից կարդալ՝ նվագելն ավելի ազատ է ու վստահ, գեղարվեստորեն ավելի համոզիչ: Լիովին աշխատում է թերթից կարդալու մտավոր մակարդակը: Մտովի վերստեղծվում է ստեղծագործության կամ դրա առանձին մասի երաժշտական կերպարը, գիտակցվում են մկանաշարժումների հաջորդականությունները:

Թերթից կարդալու ունակության բարձր մակարդակ ապահովող ուսանողներին առաջարկվող նվագացանկը պետք է ունենա հագեցած ֆակտուրա թե՛ աջ, և թե՛ ձախ ձեռքերում, պարունակի բազմաձայնության տարրեր, միջին և արագ տեմպում, ունենա բազմազան ռիթմական պատկեր և հագեցած հարմոնիկ ֆակտուրա:

Բարձր մակարդակով թերթից կարդալու գնահատման չափանիշները կարող են լինել.

1. Նոտային տեքստի ճշգրիտ և ազատ վերարտադրումը,

2. Ստեղծագործության գեղարվեստական ընդհանրական կերպարը ներկայացները:

Հենց այս մակարդակն է թույլ տալիս խոսել թերթից կարդալու ունակության ձևավորված լինելու մասին: Դրա ամենավառ ցուցանիշը ուսանողի՝ թերթից կարդալու տեմպի համապատասխանությունն է՝ հեղինակի տեմպային նշումներին, քանի որ հենց դա է ցույց տալիս, թե նշված արագությամբ որքան ճշգրիտ կարող է ուսանողը կարդալ, կարդացածը հասկանալ, մտովի պատկերացնել ֆրազներն ու նախադասությունները, ամբողջ կոմպոզիցիան և այդ ամենը վերարտադրել նվագարանի վրա:

Ավանդաբար, անծանոթ նոտային տեքստը թերթից կարդալը ուսուցանվել է որպես մենանվագ կամ նվագակցության դասերի օժանդակ, հավելյալ, ավելի քիչ կարևոր մի մաս: Ավելին, հաճախ նրա ուսուցումը թողնվում է ինքնահոսի՝ այն ենթադրելով, որ այսպես թե այնպես դաշնամուրային ընդհանուր ուսուցմանը զուգընթաց կզարգանա նաև այդ ունակությունը: Սակայն ակնառու է, որ թերթից կարդալու տեխնիկական և հոգեկան գործընթացները հաճախ մեծապես տարբերվում են մենակատարային գործընթացից. այլ կերպ են աշխատում հիշողության տարբեր տեսակները, առավել ծայրահեղ պահանջներ են առաջանում տեղեկության ընկալման և վերլուծման արագությունների նկատմամբ, սրված են նաև հոգեշարժողական ունակությունների հանդեպ ակնկալիքները:

Դժբախտաբար, մերօրյա ուսումնական ծրագրերում թերթից կարդալու ունակության զարգացումը ոչ միայն չի ընդգրկված որպես առանձին ուսումնական առարկա, այլև այն հաճախ դիտվում է կամ որպես ինչ-որ ի վերուստ տրված մի շնոր, որը պետք չէ կամ հնարավոր չէ զարգացնել, կամ էլ (լավագույն դեպքում) դրան հպանցիկ անդրադարձ է արվում միայն դաշնամուրի նվագակցության դասերի ընթացքում՝ հանգեցնելով սիրողական մակարդակի արդյունքների: Մինչդեռ թերթից կարդալը մեկն է երաժշտական այն ունակություններից, որ ժամանակի ընթացքում կարելի է

հաջողությամբ զարգացնել՝ դրանով իսկ նպաստելով հոգեբանական գործընթացների զարգացմանը, որոնք անհրաժեշտ են մարդուն՝ գործունեության ցանկացած տեսակ արդյունավետ իրականացնելու համար:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Коган Г.М., У врат мастерства., /Психологические предпосылки успешности пианистической работы., М.:Музыка., 1969.
2. Sergent, J. “Music, the brain and Ravel.” Trends in Neuroscience, 16(5), 1993.
3. Կարոյան Մ.Ռ., Երաժշտական անծանոթ տեքստը հանպատրաստից կարդալ-կատարելու ունակության ձևավորման և զարգացման հոգեբանական գործոնները: //հոգեբանական գիտ-ների, Թեկնած. ատենախոս. թեզ, Երևան, 2010:

Резюме

Пианистка, кандидат педагогических наук, доцент АГПУ им.Х.Абовяна М.Р.Кароян в своей статье освещает вопросы, связанные с навыком чтения с листа. В статье содержатся медотические указания к формированию и развитию навыка чтения с листа, критерий оценки, а также даны градации (низкий, средний и высокий уровень) обладания навыком.

Summary

PhD candidate of Pedagogical Science, YSC docent, pianist Marina Rafik Karoyan introduces the article "The methods of ability formation and stage development of musical unknown newspaper text reading". She writes educational teaching principles and means in the sphere of musical methods, taking into the consideration the musical abilities, capacities and peculiarities of the beginners and students. The education consists of three stages. The author suggests appreciating means for newspaper reading: low, middle and high levels.

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՇԱՔԵ ՍՈՒՐԵՆԻ
դաշնակահար,
Խ.Աբովյանի ՀՊՄՀ ասիստենտ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երաժշտական հիշողության խնդիրները երաժշտական մանկավարժության և հոգեբանության մեջ ամենաբարդերից են: Տասնամյակներ առաջ հետազոտվել և մինչ օրս ուսումնասիրվում են հիշողության ձևավորմանն ու զարգացմանը վերաբերող հարցերը: Այդ խնդրով լրջորեն զբաղվում են հոգեբաններ, երաժշտագետներ, կատարողներ և մանկավարժներ: Սակայն այսօր էլ ժամանակակից կատարողական արվեստում երաժշտական հիշողության մեխանիզմները և նրա զարգացման խնդիրը մնում են բարդ, խճճված և միևնույն ժամանակ շատ արդիական:

Ավելի քան հարյուր հիսուն տարի առաջ Ֆ.Լիստի շնորհիվ հաստատվեց երաժշտական ստեղծագործությունների անգիր կատարման գործընթացը, որն էլ դարձավ համերգային գործունեության կարևորագույն գեղարվեստական չափանիշ: Այնուհետև անգիր նվագելու և երաժշտական հիշողությունը զարգացնելու խնդիրները դարձան թե՛ կատարողների և թե՛ մանկավարժների համար հիմնաքարային, իսկ գիտնականների համար՝ լուրջ ուսումնասիրության առարկա:

Երաժշտության պատմության մեջ կան անհատներ (Վ.Ա.Մոցարտը, Ժ.Բիզեն, Ս.Պրոկոֆևը), ովքեր կարող էին մեկ-երկու ունկնդրումից հետո գրեթե անսխալ վերարտադրել ցանկացած պարտիտուրներ: Դա բացարձակ լսողական հիշողությունն է, այն ֆենոմենը, որ նույնիսկ հանճարեղ երաժիշտների շրջանում հազվադեպ է հանդիպում: Հայտնի տեսաբան Ի.Սոլլերտինսկին ուներ ֆենոմենալ տեսողական հիշողություն և կարող էր մտապահել ցանկացած ծավալի գիրք կամ պարտիտուր՝ նույնիսկ մեկ անգամ ըն-

թերցելուց հետո: Սրանք, անկասկած, բացառություններն են: Սովորական մարդը, մասնավորապես երաժիշտը, անկախ նրանից բացարձակ, թե սովորական է իր երաժշտական հիշողությունը, ձգտում է զարգացնել այն:

Ինչ է հիշողությունն ընդանրապես և, մասնավորապես, երաժշտական հիշողությունը և հնարավո՞ր է արդյոք այն զարգացնել:

Մարդկային հիշողության հիմնական առանձնահատկությունը նրա գիտակցված բնույթն է: Հոգեբանների հետազոտություններն ապացուցում են, որ հիշողությունն անմիջականորեն կապված է անհատի մտավոր աշխատանքի և մասնագիտության հետ: Ժամանակակից հոգեբանության մեջ ապացուցված է նաև մարդու գործունեության զգայականի և ռացիոնալի փոխկապակցվածությունը: Ընդ որում, որքան հարուստ և բազմազան են զգայական ընկալումներն, այնքան խորն է և գիտակցված նրանց մտավոր մշակումը: Այս դրույթը կարելի է ամբողջովին կիրառել նաև հիշողության զարգացման ժամանակ, քանի որ մտապահման ընթացքը կապված է թե՛ նյութի իմաստավորման, և թե՛ նրա նկատմամբ ունեցած զգայական վերաբերմունքի հետ: Երաժշտությունը, թերևս, արվեստի այն բացառիկ տեսակն է, որտեղ զգացմունքայինն ու գիտակցականը գտնվում են յուրատեսակ անքակտելի փոխհարաբերության մեջ: Ինչպես նշում է Հ.Նեյհաուզը. «Նա, ով միշտ միայն զգում և վերապրում է արվեստը՝ այդպես էլ մնում է սիրողի դերում: Նա, ով խորհում է արվեստի մասին՝ կդառնա երաժշտագետ-ուսումնասիրող: Կատարողի համար կենդանի ընկալման ու գիտակցված վերլուծության միաձուլումն անհրաժեշտ է» (6. էջ 198-199):

Հիշողության զարգացման հիմնական օրինաչափությունները տարածվում են նաև երաժշտական հիշողության վրա: «Երաժշտական հիշողությունը (անգլ. *music memory*) - երաժշտական նյութը յուրացնելու և վերարտադրելու կարողությունն է» (5. էջ 117):

Բոլոր ժամանակների խոշորագույն երաժիշտները մեծ կարևորություն էին տալիս ստեղծագործության անգիր կատարման անհրաժեշտությանը և դրանից բխող խնդիրներին: Ռ.Շումանը համարում էր, որ «…նոտաներով նվագած ակկորդը, որքան էլ այն ազատ

կատարվի, հնչում է կիսով չափ ազատ, քան անգիր նվագվածը» (9. էջ 254): Իսկ Յո..Հոֆմանի կարծիքով. «Ստեղծագործության ազատ կատարման համար անհրաժեշտ է այն հիշողությամբ նվագել» (3. էջ 174):

Երաժշտական ստեղծագործության անգիր կատարումը հնարավորություն է տալիս առավելագույնս բացահայտել գեղարվեստական կերպարները, ցուցաբերել սեփական վերաբերմունքը կատարվող նյութի նկատմամբ: Այս պարագայում կատարողն ասես դառնում է ստեղծագործության համահեղինակը:

Սակայն ինչպես և ինչ մեթոդներով զարգացնել երաժշտական հիշողությունը...

Իրականում չկա պարտադիր բաղադրատոմս երաժշտական ստեղծագործությունն անգիր սովորելու համար: Յուրաքանչյուր երաժիշտ գտնում է իրեն հարմար մեթոդներ՝ ելնելով սեփական հոգեբանական առանձնահատկություններից և, իհարկե, կիրառելով հոգեբանների ուսումնասիրությունների և հեղինակավոր երաժիշտների գործնական խորհուրդները: Այս առիթով տեղին է Ի. Հոֆմանի արտահայտությունը. «Ոչ մի օրենք և խորհուրդ, տրված մեկին, չեն կարող օգնել մյուսին, մինչև դրանք չանցնեն տվյալ մարդու գիտակցության միջով, չյուրացվեն նրա կողմից և դառնան օգտակար տվյալ անհատի համար» (7. էջ 3):

Մանկավարժական պրակտիկայում երաժշտական ստեղծագործության անգիր սովորելու ընթացքը չի ղեկավարում մանկավարժը: Աշակերտն այդ խնդրի հետ մնում է մենակ, և լուծում է այն իր ուժերի և հնարավորությունների սահմաններում՝ հիմնականում օգտագործելով բազմաթիվ կրկնություններ, ինչպես նաև անընդհատ նոտաներին նայելու միջոցը, ինչը ոչ միշտ է ապահովում հաստատուն դրական արդյունք:

Բազմազան են երաժշտական հիշողության տարատեսակները, որոնք կարող են բաժանվել նաև ենթատեսակների: Դրանք են. հնչյունային-պատկերային, շարժողական, զգայական,տրամաբանական և տեսողական հիշողությունը: Ինչպես նշում է Ա.Ալեքսեևը. «...անհրաժեշտ է, որ դաշնակահարի մոտ զարգացած լինեն հիշո-

ղության առնվազն երեք տեսակը – լսողական՝ կատարողական արվեստի ցանկացած ասպարեզի հաջողության գրավականը, տրամաբանական՝ կապված ստեղծագործության բովանդակության ընկալման և կոմպոզիտորի մտքի զարգացման օրինաչափությունների հետ, և շարժողականը՝ հենց կատարողի համար խիստ կարևոր հիշողության տեսակը» (1. էջ 25): Ավելացնենք նաև, որ տեսողական հիշողությունը, ոմանց մոտ ավելի զարգացած է լինում, քան լսողականը: Ուստի տրամաբանական է, որ կատարողի, մասնավորապես դաշնակահարի հիշողությունը հավաքական է. այն և՝ լսողական է, և՛ տեսողական, նաև մկանային-շարժողական: Վերջինս մեծապես հիմնվում լսողական հիշողության վրա և կարող է «փրկել» կատարողին այն ժամանակ, երբ նրա հիշողության մնացած տեսակներն «արգելափակվում» են, և ձեռքերը կարծես ինքնաբերաբար են նվագում: Այդ երևույթին անդրադարձել է նաև Ֆ. Բուզոնին. «Տեսողական հիշողությունից բացի կա հիշողության այլ տեսակ՝ «մատների հիշողություն»: Մատները վազում են ծանոթ ճանապարհով… և երբ միջամտում է գիտակցությունս՝ ես կարող եմ սխալվել» (2. էջ 34):

Հիշողության այս բարդ համակարգը նպաստում է երաժշտական ստեղծագործության անգիր սովորելու ընթացքի արդյունավետությանը, իսկ այդ գործընթացը կարելի է բաժանել հետևյալ հիմնական փուլերի. նախնական մտապահում, ամրապնդում և վերարտադրում: Նախնական մտապահումը լինում է ինքնաբերաբար և նպատակային: Վերջինս բնութագրվում է նրանով, որ սովորողը նպատակադրվում է հիշել նյութը, օգտագործելով մտապահման հատուկ միջոցներ: Հետևաբար, մտապահումն իր բնույթով լինում է մեխանիկական և գիտակցված: Առաջին դեպքում կատարողը չի գիտակցում կատարվող ստեղծագործության տարբեր մասերի կապը և վերարտադրում է մեքենայաբար: Գիտակցված մտապահումը շատ ավելի արդյունավետ է, քանի որ, ինչպես նշում են մասնագետները, մեխանիկական մտապահման դեպքում հիշողության մեջ մեկ ժամից հետո մնում է նյութի 40%-ը, իսկ մի քանի ժամից միայն 20%-ը: Գիտակցված մտապահման պարագայում նյութի 40%-ը

հիշողության մեջ պահպանվում է մինչև 30 օր:

Երաժշտական ստեղծագործության մտապահման և նրա հաստատուն պահանման համար կարևոր միջոցներից է կրկնությունը: Որպեսզի այն արդյունավետ լինի, կրկնությունը պետք է համապատասխանի որոշակի պահանջների: Օրինակ, նախնական փուլում անգիր սովորելու ընթացքը անհավասարաչափ է ընթանում: Երբեմն մի քանի կրկնություն էական արդյունք չեն տալիս, բայց հետագա կրկնությունների ժամանակ նյութն ավելի արագ և մեծ ծավալով է ընկալվում: Եթե ստեղծագործությունը դժվար չէ՝ առաջին կրկնություններն ավելի արդյունավետ են, իսկ բարդ ստեղծագործության պարագայում սովորելու ընթացքը սկզբնական շրջանում դանդաղում է, ապա ավելի արագ ընկալվում: Կրկնություններն անհրաժեշտ են ոչ միայն ստեղծագործությունը սովորելու ժամանակ, այլ նաև, երբ այն յուրացված է և պետք է ամրապնդվի հիշողության մեջ: Այդ դեպքում նրա պահպանումը մի քանի անգամ ավելի հաստատուն է և երկարաժամկետ:

Ամրապնդումն անգիր սովորելու հաջորդ փուլն է: Դա երաժշտական նյութի յուրացման, սիստեմավորման և տիրապետման գործընթացն է: Յուրացված ստեղծագործության պահպանումը կախված է ընկալման խորությունից, ինչպես նաև անհատի մոտեցումից և դիրքորոշումից, հետևաբար անհրաժեշտ և կարևոր նյութն այս դեպքում չի մոռացվում:

Վերջին փուլը՝ վերարտադրումն է: Այն նախապես յուրացված նյութի վերականգնման ընթացքն է: Երաժշտական հիշողության որակը ավելի ցայտուն արտահայտվում է հենց վերարտադրման ժամանակ: Վերջինիս հաջողությունը կախված է մտապահման ժամանակ ձևավորված բարդ կապերի վերականգման կարողությունից:

Սովորաբար կատարման ընթացքում կարող է մոռացվել որևէ հատված: Դա բնական երևույթ է, քանի որ հիշողության մեջ հավասարաչափ չի տպավորվում ամբողջ ստացված տեղեկությունը: Երաժիշտն առաջին հերթին մոռանում է այն ստեղծագործությունները, որոնք չեն կատարվում, կամ կատարողի համար առանձնակի

հետաքրքրություն չեն ներկայացնում: Օրինակ, նկատվել է, որ մեծ կտավի ստեղծագործություններում օժանդակ մասերն արագ են մոռացվում, իսկ գլխավոր թեմաներն ավելի երկար են մնում հիշողության մեջ: Կատարողը կարող է մոռանալ ստեղծագործությունն ամբողջովին կամ մասնակի, երկարատև կամ ժամանակավոր: Կարելի է առանձնացնել մոռացման հիմնական երկու տեսակ.

1. տեքստը վերհիշելու անկարողություն,
2. տեքստը հիշվում է, բայց ոչ ճշգրիտ:

Լիակատար մոռացության ժամանակ նախօրոք ամրապնդված երաժշտական նյութը ոչ միայն չի վերականգնվում, այլև չի ճանաչվում: Մասնակի մոռացության դեպքում կատարողը ստեղծագործությունը վերարտադրում է թերի, սխալներով: Շատ հաճախ մոռացումը կրում է ժամանակավոր բնույթ. տվյալ պահին մոռացվում, բայց որոշ ժամանակ անց՝ վերականգնվում է: Այս երևույթից խուսափելու համար երաժիշտը պետք է ընկալի ստեղծագործությունն ամբողջովին, վերլուծի այն, հասկանալով նրա կառուցվածքի առանձնահատկությունները, ապա և ամրապնդի կրկնությունների միջոցով: Մոռացության պատճառ կարող են դառնալ նաև անհատի նյարդային համակարգի հետ կապված խնդիրները, տարբեր հիվանդությունները, հոգեկան և ֆիզիկական ուժեղ ցնցումները: Նման դեպքում կարող են առաջանալ կարճատև ամնեզիայի շրջաններ, որոնք ժամանակի ընթացքում կրճատվում են և մոռացված նյութը վերականգնվում է հիշողության մեջ:

Երաժշտական հիշողության վերաբերյալ բավականաչափ գրականություն կա: Հատկապես արժեքավոր են Լ.Մաքքինոնի, Ս.Սավշինսկու, Ա.Ստոյանովի, Ա.Շչապովի, Պ.Պետրուշինի, Ն.Գոլուբովսկայայի, Բ.Տեպլովի աշխատություններն ու հոդվածները: Յո.Հոֆմանը «Հարցեր և պատասխաններ դաշնամուրային կատարողական արվեստի վերաբերյալ» գրքում առաջարկում է երաժշտական ստեղծագործությունը անգիր սովորելու ռացիոնալ և արդյունավետ մեթոդներ:

1. Աշխատանք ստեղծագործության տեքստի հետ առանց գործիքի

2. Աշխատանք ստեղծագործության տեքստի հետ գործիքի մոտ
3. Աշխատանք գործիքի մոտ առանց տեքստի, այսինքն անգիր
4. Աշխատանք առանց տեքստի և առանց գործիքի:

Լ.Մաքքինոնը կատարողական և մանկավարժական ասպարեզի առաջադեմ մասնագետներից էր: Իր «Նվագել անգիր» գրքում հեղինակը մեկնաբանում է երաժշտական հիշողությունը որպես երաժշտական փորձը կազմող բոլոր տարրերի համախմբում: Երաժշտական հիշողության զարգացման և կատարելագործման հիմքում նա տեսնում է գիտակցականի, անգիտակցականի և ենթագիտակցականի մեջ ընթացող փոխկապակցվածությունը, ինչը պարտադիր է երաժշտական ստեղծագործության մտապահման գործընթացում անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար:

Իհարկե,հիշողությունն ունի տարիքային առանձնահատկություններ: Շատ երաժիշտներ համոզված են, որ 35-40 տարեկանից հետո ընդհանրապես անօգուտ է որևէ նոր նյութ սովորել: Հիշողության քայքայման այսպիսի տեսակետը շատ հարմար է մտավոր միջին կարողությունների տեր մարդկանց համար: Ընտրելով ամենափոքրագույն դիմադրության ճանապարհը, որոշակիորեն զոհ գնալով սեփական «ծուլությանը», մեծամասնությունը նախընտրում է մտածել, որ չափազանց ծեր է նորը սովորելու համար, բայց փոխարենը կարող է հետևել «ամեն օր սովորում եմ նորը» սկզբունքին: Գոհանալով իր ֆիզիկական վիճակից, մարդը սովորաբար մոռանում, կամ չի ուզում հիշել , որ ուղեղի, ինչպես նաև մկանների երիտասարդ մնալուն անհրաժեշտ է ամեօրյա վարժանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алексеев А., Методика обучения игре на фортепиано., М., 1961.
2. Савшинский С., Пианист и его работа., Л., 1961.
3. Гофман И., Ответы на вопросы о фортепианной игре., М., 1961.
4. Маккинон Л., Игра наизусть., Л., 1967.

5. Мещеряков Б., Зинченко В., Большой психологический словарь., М., 2004.
6. Савшинский С., Работа пианиста над музыкальным произведением., М., 1964.
7. Смирнов А., Проблемы психологии памяти., М., 1966.
8. Теплов Б., Психология музыкальных способностей. М., 1947.
9. Шуман Р., Статьи о музыке. М., 1963.

Резюме

Статья ассистента инструментальной кафедры факультета культуры АГПУ им.Х.Абовяна Ш.С.Тадевосян освещает вопросы, связанные со спецификой музыкальной памяти. В статье приводятся высказывания и мнения известных музыкантов об исполнении наизусть. Автор также дает методические рекомендации для развития и сохранения музыкальной памяти.

Summary

Pianist, YSPU after Kh.Abovyan assistant Shaqe Tadevosyan represents the article "The peculiarities of musical memory". The author speaks about those people who were had very original memory in the musical history. She also writes the hard process and importance of musical memory.

Ամփոփում Резюме Summary

Հ. 6

В статье пианистки, преподавателя ЕГК им.Комитаса А.А.Арзуманян рассмотрены роль и значение дисциплины "Камерный ансамбль" в ходе учебного процесса, приведен подробный анализ Фортепианного трио Гагика Овунца и даны некоторые рекомендации к его исполнению.

էջ 41

Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս, բակլոությակահար Ֆ.Հ.Հակոբյանն իր «Կ.Ա.Դեբյուսիի բավջուբակի և դաշնամուրի Սոնատի կատարման մեթոդական ցուցումներ» հոդվածում նշում է, որ երաժշտությունում իմպրեսիոնիզմի հիմնադիր կոմպոզիտորը երաժշտության ակունքը համարում էր բնությունը, նշելով. «Երաժշտությունը մոտ է բնությանը... Միայն երաժիշտներին է հասու գիշերվա և ցերեկվա, երկրի և երկնքի, մթնոլորտի արտացոլման և բնության վեհության ռիթմի բրբիռը, պոեզիան ընդգրկելու առավելությունը» և մեջբերելով Վ.Ֆուրթվենգլերի բնութագրումը. «Դեբյուսին ռոմանտիզմի վերջին ծաղիկն է...» ու ներկայացնելով Սոնատի առանձնահատկությունները, նշում է իր մտորումները կատարման մասի, խորհուրդներ տալով թե՛ դաշնակահարին, թե՛ բավջուբակահարին:

Հ. 61

Статья пианистки, доцента ЕГК им.Комитаса А.Р.Исраелян посвящена Сонате для скрипки и фортепиано А.Бабаджаняна. Автор приводит высказывания современников о композиторе. На основе анализа сочинения дает ряд методических рекомендаций исполнителям.

Հ. 133

Статья вокалистки, педагога ЕГК им.Комитаса К.Т.Мкртчян посвящена проблемам вокального исполнительского искусства. В статье приводятся высказывания известных исполнителей и педагогов. Автор отмечает роль педагога в формировании молодого исполнителя. Статья содержит ряд методических рекомендаций.

Հ. 175

Статья скрипачки, педагога ЕГК им.Комитаса Г.Г.Даниелян посвящена скрипичным сонатам австрийского скрипача и композитора Г.Ф.Бибера. В статье рассмотрены 15 сонат из сборника "Розарий", в которых композитором использованы приемы виртуозной скрипичной техники (скордатура, двойные ноты и др.). Анализ проводится исходя из вопросов программности сочинения.

էջ 182

Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ, տավղահարուհի Գ.Մ.Հարությունյանն իր «Պե-

դալավորումը և դրա նշանակությունը տավղի կատարողական արվեստում» հոդվածում ներկայացրել է տավղի 7 պեդալի օգտագործման գաղտնիքները, նրանց ծագումն ու զարգացումը և նրանց օգտավետությունն այսօրվա կատարողական արվեստում, նշելով նաև, որ դարավոր պատմություն ունեցող տավիղն այսօր երաժշտարվեստում իր արժանի ու հիմնավոր տեղն ունի:

С. 208

В статье композитора, валторниста, доцента ЕГК им.Комитаса С.М.Сукиасяна приведен подробный анализ Трех инвенционных пьес для валторны и фортепиано Гагика Овунца. Автором рассмотрены ладовые и композиционные особенности сочинения, даны некоторые методические указания к исполнению.

С. 220

В своей следующей статье С.М.Сукиасян вновь обращается к творчеству Гагика Овунца. Две инвенционные пьесы для тубы и фортепиано имеют подзаголовки: "Имитация" и "Фольк-ритмика". Подробный анализ сочинения наглядно иллюстрируется музыкальными примерами и схемами.Статья имеет важное методическое значение, помогая молодым исполнителям понять интерпретационные задачи современной музыки.

Էջ 251

Դաշնակահար, Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս Ա.Ս.Նաղդյանն իր «Սկրյաբինը՝ դաշնակահար» հոդվածը նվիրել է ռուս տաղանդավոր կոմպոզիտորի կատարողական արվեստին, նշելով դաշնակահար Սկրյաբինի այդ բնագավառում հասած բարձունքներն, ու որ նրա կատարումն աչքի է ընկել անբնական ոգևորվածությամբ. այն կանելի էր նմանեցնել Ֆ.Շոպենի կատարողականին, որի կատարման տեխնիկան ուղղորդված էր զարդարումներին:

Հոդվածագիրն անդրադառնալով հեղինակի՝ իր իսկ երկերի ֆայնագրություններին, նշում է, որ հարազատ է մնում իր առաջադրած rubato-ին, սակայն շատ հաճախ էլ ակնթարթային շեղումներ է կատարում:

Հեղինակը նշում է նաև, որ Ա.Սկրյաբինն այն հազվադեպ դաշնակահարներից էր, որի կատարումներին անհամբերությամբ էին սպասում:

Էջ 256

Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս, դաշնակահար Ա.Ս.Նաղդյանն իր «Մանկավարժի հիշատակին» հոդվածում ներկայացրել է Սանկտ-Պետերբուրգի (Լենինգրադի) Ա.Ն.Ռիմսկի-Կորսակովի անվ. կոնսերվատորիայի իր ուսուցչի՝ Ա.Բ.Իսարոյվի անցած կատարողական և մանկավարժական գործունեությանը, հոդվածը նվիրելով նրա ծննդյան 80-ամյակին:

С. 289

Статья пианистки, преподавателя ЕГК им.Комитаса Н.В.Арутюнян

посвящена проблемам музыкального воспитания и формирование самостоятельности в классе фортепиано. Автор отмечает важность начального этапа обучения и подробно останавливается на вопросах формирования самостоятельности студента. В статье приводятся высказывания известных педагогов-пианистов, а также даются методические рекомендации.

С. 326

В статье хормейстера, педагога ЕГК им.Комитаса К.Г.Брутян рассмотрены педагогические принципы Комитаса, их роль и значение в формировании последующих поколений музыкантов. Автор отмечает преемственность педагогических традиций на кафедре армянской музыкальной фольклористики, а также приводит факты из истории армянской музыки и деятельности Комитаса.

This educational and Methodical Collection (vol 7, in 2010) of Yerevan State Conservatory after Komitas consists of several parts. Each part presents the educational and methodical works of the specialists of a concrete chair at YSC.

P. 6

The first article by YSC pedagogue Alisa Hakob Arzoumanyan speaks about several questions of interpretation about Gagik Hovunts' piano trio. It is dedicated to Versal's Conservatory and the staff of stringed ensemble" Ricercata de Paris" Alexander Brusilovsky.

P. 12

The first part which presents the works of the specialists of Chair of Chamber Ensemble starts with the two articles introduced by pianist, YSC pedagogue Alisa Hakob Arzoumanyan.

P. 33

Pianist, YSC docent Gayane Simon Hovhannisyan writes about the sources of nationality in K.Khachaturyan, A.Pirumova and E.Khaghagortyan's performing art. With his article the author advises to pay much attention to the Armenian composers leaving abroad, especially in Russia, mentioning that the works of those are on a very high artistic level.

P. 41

Cellist, YSC pedagogue Felix Hayrapet Hakobyan, writes the nest article "Methodical recommendations of sonnets performing for violoncello and piano by Claude Debussy.

P. 61

Pianist, YSC docent Anahit Refayel Israelyan writes about several methodical researches about Arno Babajanyan's violin and piano sonnets. The author results the truthful statement of the composer L.Saryan, who said, he was one of those individuals who were called to represent the whole nation, its fortune, spirit of its time, realizing its aim in art. The author, analyzing all its parts for violin and piano, marks that chamber-symphonic elements are allocated.

P. 133

YSC pedagogue, singer Karine Tatos Mkrtchyan introduces the next article "The pedagogue's function in young artists' performing art". The author says that the teacher plays a great role in in forming a young singer, helping him discover the real talant.

P. 148

YSC pedagogue, pianist Narine Martun Israelyan writes another article about the consideration of several peculiarities of musical style defining K.Debussy's piano art. The author says"If the composer is not talented, then it is useless for him to turn to folk music, the result is costless",

P. 175

The Chair of Stringed Instruments N2 is presented by YSC pedagogue Goar Grigor Danielyan representing the article "H.F.Biber's 15 mysteries from Maria's life" sonnets series" (Programme problems). This article is dedicated to the sacred works of the Austrian composer and violinist, which are also called "Bible sonnets".

P. 182

YSC docent, harp player Gayane Mnatsakan Harutsunyan introduces the article "Pedaling and its meaning in the arpa's performing art".

P. 198

YSC pedagogue, bassoonist Hrach Shmavon Grigoryan writes the article "The brass in Russian composers' works". The author writes also about foreign performers in Russia and their activity in Russian musical schools, theatres and orchestras.

P. 208

Composer, chore singer Stepan Manuk Suqiasyan writes the article "Gagik Hovunts's corno and piano three pieces". The author discovers their structural peculiarities and writes about their art influence.

P. 240

YSC docent, pianist Inga Mkrtich Kazumyan presents the article to N.Metner's "Tales" writing about the composer's this composition's connection with Russian art. The

author also speaks about the composer's writing stylistic peculiarities, acting as musician- historian, creator of lyrical gentle and intellectual artistic creator of characters.

P. 251

YSC docent Armine Stepan Naghdyan represents the article "Skryabin as a pianist". The article is dedicated to the Russian composer's performing art, whose performing with unnatural enthusiasm that can be patterned those of Shopen's. The author adds that Skryabin belongs to those rare pianists, whose pieces were impatiently looked forward to.

P. 256

YSC docent Armine Stepan Naghdyan represents another article "On the pedagogue's memory". The author writes about her pedagogue, who is not popolar in Armenia introducing about the latter's pedagogical peculiarities.

P. 262

YSC pedagogue, pianist Anahit Gharib Hovsepyan introduces his article "Comparative analysis of L.V.Beethoven's d moll N17 sonnet analysis", writing about L.V.Beethoven's sonnets analysis by A.Shindler, A.Shnabel, I.Mosheles,F.List, H.Byulov, A.Gloldenweiser and others. The author instructs the students to perform A.Shnabel's analysis, stating that the latter has widened voice border of L.V.Beethoven's sonnets sounding expressing corners register's peculiarities.

P. 326

The part presenting the works of the specialists of the Chair of Armenian Musical Folklore Study is introduced by ensemble director, YSC pedagogue Karine Hrach Brutyan with the article "The researches about Komitas in the chair of Armenian Musical Folklore Study". The article speaks about Armenian traditional sacred song's modern teaching peculiarities accordant to Komitas teaching peculiarities.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ

Կամերային անսամբլի ամբիոն
Кафедра камерного ансамбля
Արզումանյան Ա.Ա.
Գ.ՅՈՎՈՒՆՑԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՏՐԻՈՅԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 6
Арзуманян А.А.
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПОДГОТОВКИ ИСПОЛНИТЕЛЯ К КОНЦЕРТНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ 12
Алавердян Т.Г.
РОЛЬ ПЕДАЛИЗАЦИИ В ПИАНИСТИЧЕСКОМ ИСКУССТВЕ 20
Алавердян Т.Г.
О СВЯЗИ ХУДОЖЕСТВЕННОГО СЛОВА И МУЗЫКИ 27
Оганесян Г.С.
НАЦИОНАЛЬНЫЕ ИСТОКИ В ТВОРЧЕСТВЕ К.ХАЧАТУРЯНА, А.ПИРУМОВА, Э.ХАГАГОРТЯНА 33
Акопян Ф.А.
МЕТОДИЧЕСКИЕ РЕКОМЕНДАЦИИ К ИСПОЛНЕНИЮ СОНАТЫ ДЛЯ ВИОЛОНЧЕЛИ И ФОРТЕПИАНО К.ДЕБЮССИ 41
Акопян Ф.А.
МЕТОДИЧЕСКИЕ РЕКОМЕНДАЦИИ К ИСПОЛНЕНИЮ СОНАТЫ op.38 e-moll ДЛЯ ВИОЛОНЧЕЛИ И ФОРТЕПИАНО И.БРАМСА 50
Իսրայելյան Ա.Ռ.
Ա.ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ՋՈՒԹԱԿԻ ԵՎ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՍՈՆԱՏԻ ՄԱՍԻՆ ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 61

Կատարողական արվեստի պատմության և մանկավարժական պրակտիկայի ամբիոն
Кафедра истории, теории исполнительства и педагогики
Григорян Л.Е.
ВОПРОСЫ РАЗВИТИЯ ОБРАЗНОГО МЫШЛЕНИЯ ЮНЫХ ПИАНИСТОВ (на материале киномузыки и музыки сценических жанров Д.Д.Шостаковича в авторских переложениях для фортепиано) 72
Григорян Л.Е.
МУЗЫКА ДЛЯ ДЕТЕЙ И ЮНОШЕСТВА С.АЗНАУРЯН 89

Саркисян А.Р.
НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ МЕТОДОЛОГИИ НАЧАЛЬНОГО ОБУЧЕНИЯ ИГРЕ НА ФОРТЕПИАНО (американские учебные пособия второй половины XX века) 96
Оганесян А.Л.
ХАРАКТЕРНЫЕ ОСОБЕННОСТИ ФРАНЦУЗСКОГО ИСПОЛНИТЕЛЬСКОГО ИСКУССТВА (Маргарет Лонг) 103

Մենակատարողության 2-րդ ամբիոն
Кафедра сольного пения N2
Овсепян М.И.
ВОКАЛЬНЫЙ ЦИКЛ С.М.СЛОНИМСКОГО НА СТИХИ А.АХМАТОВОЙ И МЕТОДИКА РАБОТЫ НАД НИМ 119
Մկրտչյան Կ.Թ.
ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԴԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԳԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 133

Մասնագիտական դաշնամուրային թիվ 2 ամբիոն
Кафедра специального фортепиано N2
Израелян Н.М.
НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ ФОРТЕПИАННОГО ПИСЬМА Б.БАРТОКА 140
Израелян Н.М.
РАССМОТРЕНИЕ НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЕЙ МУЗЫКАЛЬНОГО СТИЛЯ, ОПРЕДЕЛЯЮЩИХ ФОРТЕПИАННОЕ ТВОРЧЕСТВО К.ДЕБЮССИ 148

Մասնագիտական դաշնամուրային թիվ 3 ամբիոն
Кафедра специального фортепиано N3
Тер-Антонян А.В.
“ЧЕТЫРЕ РИТМИЧЕСКИХ ЭТЮДА” ОЛИВЬЕ МЕССИАНА (методические рекомендации) 157
Тер-Антонян А.В.
АНТОЛОГИЯ ФОРТЕПИАННЫХ ПРОИЗВЕДЕНИЙ АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ И ЕЕ ПРИМЕНЕНИЕ В ПЕДАГОГИЧЕСКОЙ ПРАКТИКЕ 164

Լարային գործիքների թիվ 2 ամբիոն
Кафедра струнных инструментов N2
Դանիելյան Գ.Գ.
Հ.Ֆ. ԲԻԲԵՐԻ «15 ՄԻՍՏԵՐԻԱ ՄԱՐԻԱՄԻ ԿՅԱՆՔԻՑ» ՍՈՆԱՏՆԵՐԻ ՇԱՐՔԸ (Ծրագրայնության խնդիրները) 175
Арутюнян Г.М.
ПЕДАЛИЗАЦИЯ И ЕЕ ЗНАЧЕНИЕ В ИСПОЛНИТЕЛЬСКОМ ИСКУССТВЕ АРФЫ 182
Арутюнян Г.М.
НОВЫЕ ИСПОЛНИТЕЛЬСКИЕ ПРИЕМЫ ИГРЫ НА АРФЕ 186

Փողային և հարվածային գործիքների ամբիոն
Кафедра духовых и ударных инструментов
Գրիգորյան Հ.Շ.
ՓՈՂԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՌՈՒՍ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 198
Գրիգորյան Հ.Շ.
ՓՈՂԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 203

Ստեղծագործական ամբիոն
Кафедра композиции
Սուքիասյան Ս.Մ.
Գ.ՅՈՎՈՒՆՑԻ ԳԱԼԱՐԱՓՈՂԻ ԵՎ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԻՆՎԵՆՑԻՈՆ ԵՐԵՔ ՊԻԵՍ 208
Սուքիասյան Ս.Մ.
Գ.ՅՈՎՈՒՆՑԻ ՏՈՒԲԱՅԻ ԵՎ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԻՆՎԵՆՑԻՈՆ ԵՐԿՈՒ ՊԻԵՍԸ 220

Ընդհանուր դաշնամուրի ամբիոն
Кафедра общего фортепиано
Алтунян А.Р.
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ НА КАФЕДРЕ ОБЩЕГО ФОРТЕПИАНО 226
Алтунян А.Р.
ПРОИЗВЕДЕНИЯ Ф.ШОПЕНА В ИНТЕРПРЕТАЦИИ ВЫДАЮЩИХСЯ ИСПОЛНИТЕЛЕЙ 232
Казумян И.М.
“СКАЗКИ” Н.К.МЕТНЕРА (черты фортепианного стиля) 240

Нагдян А.С.
СКРЯБИН – ПИАНИСТ 251
Нагдян А.С.
ПАМЯТИ ПЕДАГОГА (к 80-летию со дня рождения А.И.Ихарева) 256
Овсепян А.Г.
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РЕДАКЦИЙ СОНАТЫ d-moll N17 (op.31N2) Л.БЕТХОВЕНА 262
Овсепян А.Г.
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АППЛИКАТУРНЫХ ПРИНЦИПОВ ФОРТЕПИАННЫХ СОНАТ Л.БЕТХОВЕНА В РЕДАКЦИЯХ Г.БЮЛОВА, З.ЛЕБЕРТА, А.Б.ГОЛЬДЕНВЕЙЗЕРА, А.ШНАБЕЛЯ 276
Հարությունյան Ն.Վ.
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ 289
Հարությունյան Ն.Վ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 300
Давтян С.А.
МУЗЫКАЛЬНАЯ ПАМЯТЬ И НЕКОТОРЫЕ МЕТОДЫ ЕЕ РАЗВИТИЯ 313

Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոն
Кафедра армянской музыкальной фольклористики
Բրուտյան Կ.Հ.
ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ 326
Բրուտյան Կ.Հ.
ՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԴԵՐԸ ԵՐԱԺԻՇՏ-ՈՒՍԱՆՈՂԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 331

Խ.Աբովյանի անվ. Պետական մանկավարժական համալսարանի նվագարանների ամբիոն
Инструментальная кафедра Армянского педагогического университета им.Х.АБОВЯНА
Едигарян В.А.
ОБ ОПРЕДЕЛЕНИИ ПОНЯТИЯ “НЮАНС” 338

Իսպիրյան Հ.Մ.
ԻՆԵՐՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՆԸ ՌԱՑԻՈՆԱԼ ՆՎԱԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 347
Կարոյան Մ.Ռ.
ԱՆՇԱՆՈԹ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ԹԵՐԹԻՑ ԿԱՐԴԱԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓՈՒԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ 357
Թադևոսյան Շ.Ս.
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 373

ԱՄՓՈՓՈՒՄ SUMMARY РЕЗЮМЕ 381

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎ. ԵՊԿ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊՐԱԿ 7/2010

СБОРНИК УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИХ РАБОТ ПРЕПОДАВАТЕЛЕЙ ЕГК ИМ.КОМИТАСА

ВЫПУСК 7/2010

COLLECTED EDUCATIONAL-METHODICAL ARTICLES PEDAGOGUE YEREVAN KOMITAS STATE CONSERVATORY

VOL. 7/2010

Չափսը՝ 60x84 1/16. Թուղթը՝ օֆսեթ:
24.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 101:

Տպագրվել է «ՍՈՒՐԲ-ՍԵՐ» ՍՊԸ-ում:
Отпечатано в ООО “СУРБ-СЕР”.

«ԵՊԿ հրատարակչություն», Սայաթ-Նովա 1ա
“Издательство ЕГК”, ул. Саят-Нова 1а

Հեռ. Тел. 523 993(+118), 581 164
E-mail: yksc@conservatory.am
http://www.conservatory.am
Fax: (+374 10) 563 540